Անկախ հաշվետվական մեխանիզմ (ԱՀՄ). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018

Տաթևիկ Մարգարյան, անկախ հետազոտող

Բովանդակություն

Զեկույցի սեղմագիր. Հայաստան **2**

I. Ներածություն **10**

II. Երկրի կոնտեքստը **12**

III. Գործընթացի ղեկավարում և շահագրգիռ կողմերի ներգրավում **23**

IV. Հանձնառությունների նկարագիրը **39**

1. Պաշտոնյաների գործուղումների թափանցիկություն 42
2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն 48
3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով 54
4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով 57
5. Համայնքային որոշումների պորտալ 63
6. Լիցենզիաների գրանցամատյան 67
7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրազեկում 71
8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում 76

V. Հիմնական առաջարկներ **80**

VI. Մեթոդոլոգիան և տեղեկատվության աղբյուրները **87**

VII. Հավելված. ԲԿԳ համապատասխանության չափանիշները **90**

Open Government Partnership

Զեկույցի սեղմագիր. Հայաստան

Անկախ հաշվետվական մեխանիզմի (ԱՀՄ) 2016–18թթ. միջանկյալ զեկույց

Հայաստանի գործողությունների երրորդ ծրագիրը բաց տվյալների վերաբերյալ պետական ծախսերի և ծառայությունների թափանցիկությանն ուղղված մի շարք նախաձեռնություններ է ներառում: Այնուամենայնիվ, հանձնառությունները զգալի փոփոխությունների հանգեցնելու համար բավականաչափ ընդգրկուն չեն: Իր հետագա քայլերում կառավարությունը պետք է ավելի շատ աշխատի ՔՀԿ-ների լայն շրջանակի և խորհրդարանի հետ և ստանձնի ավելի հավակնոտ հանձնառություններ, որոնք կայուն բարեփոխումներ կբերեն պետական բյուջետավորման, պետական գնումների պայմանագրերի և ընկերությունների տնօրինման համակարգերում:

Բաց կառավարման գործընկերությունը (ԲԿԳ) միջազգային կամավոր նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել պետությունների կողմից իրենց քաղաքացիների առջև հանձնառությունների ստանձնումը՝ թափանցիկության խթանման, քաղաքացիների լիիրավ մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարման որակը բարելավող նոր տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ: Հայաստանը ԲԿԳ-ին միացել է 2011 թ.: Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) ուսումնասիրում է ԲԿԳ-ի մասնակից բոլոր երկրների գործողությունների ծրագրերի իրականացումը՝ տարեկան կտրվածքով:

ՀՀ կառավարության աշխատակազմը ԲԿԳ գործընթացում Հայաստանի մասնակցության և ստանձնած հանձնառությունների կատարման հիմնական պատասխանատուն է: Կառավարության աշխատակազմից 4 հոգի ընդգրկված է հանձնառությունների իրականացումը վերահսկելու աշխատանքներում, սակայն ԲԿԳ-ի հետ կապված գործունեությունը բյուջեում ներառված չէ: Գործողությունների ծրագիրն իրականացնելու համար ստեղծվել է բազմաշահառու աշխատանքային խումբ, որը

Ամփոփ տվյալներ

Անդամ՝ սկսած	2011 թ.-ից
Հանձնառությունների քանակը՝	8
Կատարման աստիճանը	
Ամբողջությամբ՝	8-ից 0-ն
Զգալի՝	8-ից 2-ը
Որոշակի՝	8-ից 5-ը
Չսկսված՝	8-ից 1-ը
Հանձնառությունների ուղղվածությունը	
Տեղեկատվության մատչելիություն՝	8-ից 6-ը
Հանրային մասնակցություն՝	8-ից 2-ը
Հանրության առջև հաշվետվողականություն՝	8-ից 1-ը
Տեխնոլոգիան և նորարարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության՝	8-ից 4-ը
Հստակ չէ՝	8-ից 2-ը
Հանձնառություններ, որոնք՝	
Հստակ համապատասխանում են ԲԿԳ արժեքներին՝	8-ից 6-ը
Փոխակերպող պոտենցիալ ազդեցություն ունեն՝	8-ից 0-ն
Զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել են՝	8-ից 2-ը
Նշված բոլոր երեքը (✪)՝	8-ից 0-ն

բաղկացած է 26 անդամից, այդ թվում 15-ը՝ կառավարությունից, 10-ը՝ քաղաքացիական հասարակությունից և մեկը՝ մասնավոր հատվածից:

ԲԿԳ գործընթացը

ԲԿԳ նախաձեռնությանը միացած երկրները ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ընթացքում պետք է ապահովեն խորհրդակցությունների որոշակի գործընթաց:

Կառավարության աշխատակազմի ԲԿԳ թիմը պատրաստել է գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ժամանակացույցը, որն այնուհետև ներկայացրել է աշխատանքային խմբին՝ նկատառումների համար: 2016 թ. ապրիլին կառավարության աշխատակազմը մարզային հանդիպումներ կազմակերպեց՝ մարզային և մասնագիտացած հասարակական կազմակերպություններին ներգրավելու, ինչպես նաև ԲԿԳ նախաձեռնության և գործողությունների երրորդ ծրագրի մշակման մասին իրազեկելու նպատակով: Բացի այդ, անմիջականորեն քաղաքացիներից առաջարկներ ստանալու համար Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի «Կոլբա» ինովացիոն լաբորատորիան գաղափարների հավաքագրման քրաուդսորսինգ (crowdsourcing) բաց հարթակի գործիք մշակեց: Կառավարության աշխատակազմի ԲԿԳ թիմը հեղինակների և համապատասխան պետական մարմինների հետ քննարկեց այն բոլոր առաջարկները, որոնք համապատասխանում էին նախապես սահմանված չափորոշիչներին: Հանձնառությունների վերջնական ընտրությունը տեղի ունեցավ երկօրյա աշխատանքային հանդիպման ընթացքում՝ աշխատանքային խմբի անդամների և այլ ՔՀԿ-ների, պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Վարչապետի հրամանով ստեղծվել է տարբեր շահագրգիռ խմբերի ներկայացուցիչներից բաղկացած (բազմաշահառու) աշխատանքային խումբ, որը համակարգում է գործողությունների ծրագրի մշակումը և իրագործումը: Աշխատանքային խմբի նիստերը կանոնավոր բնույթ չեն կրում, սակայն ըստ էության բաց են հանրության մասնակցության համար:

2017 թ. սեպտեմբերի 11-ին կառավարության աշխատակազմը www.ogp.am կայքում տեղադրեց ինքնագնահատման հաշվետվությունը՝ երկու շաբաթ տրամադրելով նկատառումների համար: Ձեկույցն ուղարկվեց նաև աշխատանքային խմբի անդամներին՝ շրջանառելու խնդրանքով և տեղադրվեց ԲԿԳ Հայաստանի ֆեյսբուքյան էջում: Նշված ժամանակահատվածում որևէ արձագանք չեղավ:

Հանձնառությունների կատարում

ԲԿԳ-ին միացած երկրները հանձնառություններ են ստանձնում գործողությունների իրենց երկամյա ծրագրերի միջոցով: Հայաստանի գործողությունների ծրագիրը ներառում է ութ հանձնառություն: Աղյուսակ 1-ում ամփոփ ներկայացված են յուրաքանչյուր հանձնառության կատարման և պոտենցիալ ազդեցության գնահատականները: Աղյուսակ 2-ում համառոտ նկարագրված են յուրաքանչյուր հանձնառության կատարման առաջընթացը և հետագա քայլերի վերաբերյալ առաջարկները: Ընկալման դյուրինության համար նմանատիպ հանձնառությունները երբեմն վերախմբավորվում և տեղափոխվում են:

Հարկ է նշել, որ 2015 թ. սկզբին ԱՀՄ-ը վերանայել է աստղանշված հանձնառությունների հանդեպ պահանջները՝ ավելի խիստ չափանիշներ սահմանելով ԲԿԳ օրինակելի հանձնառությունների համար: Ըստ վերանայված չափորոշիչների՝ հանձնառությունները պետք է լինեն հստակ ձևակերպված, համապատասխանեն ԲԿԳ արժեքներին, ունենան փոխակերպող պոտենցիալ ազդեցություն և ամբողջությամբ կամ զգալի չափով կատարված լինեն: Հայաստանը աստղանշված հանձնառություններ չունի:

Աղյուսակ 1: Հանձնառությունների առաջընթացի գնահատականները

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՆՎԱՆՈՒՄ	ՊՈՏԵՆՑԻԱԼ ԱԶԴԵՑՈՒ-ԹՅՈՒՆ				ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆ			
	ՈՉ ՄԻ	ՓՈՔՐ	ՉԱՓԱՎՈՐ	ՓՈԽԱԿԵՐՊՈՂ	ՉՍԿՍՎԱԾ	ՈՐՈՇԱԿԻ	ՉԳԱԼԻ	ԱՎԱՐՏՎԱԾ
1. Պաշտոնյաների գործուղումների թափանցիկություն								
2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն								
3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով								
4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով								
5. Համայնքային որոշումների պորտալ								
6. Լիցենզիաների գրանցամատյան								
7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրազեկում								
8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում								

Աղյուսակ 2: Հանձնառությունների առաջընթացի ամփոփ նկարագիր

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
1. Պաշտոնյաների գործուղումների թափանցիկություն • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ • Պոտենցիալ ազդեցությունը՝ փոքր • Կատարումը՝ զգալի	Այս հանձնառությունն ուղղված է հանրությանը հասանելի առցանց հարթակի ստեղծմանը, որտեղ կտեղադրվեն պաշտոնյաների գործուղումների հաշվետվությունները: Այս հանձնառության կատարումը համապատասխանում է ժամանակացույցին: Ընդունվել են համապատասխան կարգավորումներ, սակայն որոնման հնարավորություն ունեցող առանձին հարթակ չի ստեղծվել: Փոխարենն օգտագործվել է էլեկտրոնային կառավարման առկա հարթակը՝ պաշտոնյաների գործուղումների հաշվետվությունները PDF ձևաչափով հրապարակելու համար: Առաջարկվում է ապահովել բաց տվյալների սկզբունքի պահպանումը:
2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ • Պոտենցիալ ազդեցությունը՝ փոքր • Կատարումը՝ որոշակի	Այս հանձնառությունը նպատակ ունի բարելավելու պետական բյուջեից ֆինանսավորվող դրամաշնորհների թափանցիկությունը՝ պետական մարմիններից դրամաշնորհ ստացած կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաև տրամադրված դրամաշնորհների հաշվետվությունների հրապարակման միջոցով: Հանձնառությունը չի անդրադառնում դրամաշնորհների բաշխման մրցակցային մեխանիզմի բացակայության խնդրին: Որոշ նախարարություններ սկսել են հաշվետվություններ ներկայացնել դրամաշնորհային ծրագրերի իրականացման մասին, բայց ոչ բոլորն են տեղեկություն հրապարակել դրամաշնորհներ տրամադրելու և օգտագործելու վերաբերյալ: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հրապարակել սուբսիդիաներ, նվիրատվություններ և պետական բյուջեից այլ ֆինանսավորում ստացող կազմակերպությունների ցուցակները, ինչպես նաև համապատասխան ծրագրային հաշվետվությունները:
3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ • Պոտենցիալ ազդեցությունը՝ փոքր • Կատարումը՝ որոշակի	Այս հանձնառությունը նպատակ ունի բարելավելու ինտերակտիվ բյուջեի առկա հարթակը՝ տվյալների ներբեռնման հնարավորության և որոնման ու զտման տարբերակներ ներդնելու միջոցով: Ներկա պահին կայքի օգտատերերը չեն կարողանում հեշտությամբ գտնել, ներբեռնել, մշակել և օգտագործել առկա տեղեկույթը: Բացի այդ, բյուջեի մուտքերի վերաբերյալ ըստ աղբյուրների տեղեկատվություն չկա: ԱՀՄ հետազոտողը խորհուրդ է տալիս ինտերակտիվ հնարավորություններով պլատֆորմը մշակել՝ հիմնվելով քաղաքացիական հասարակության և այլ

	շահագրգիռ կողմերի այն կարիքների ու պահանջների վրա, որոնք քննարկվել են պլանավորման փուլում:
4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ • Պոտենցիալ ազդեցությունը՝ փոքր • Կատարումը՝ որոշակի	Այս հանձնառությունն ուղղված է բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի որոնման գործառույթների բարելավմանը, ինչպես նաև նախատեսում է հրապարակել այն պաշտոնյաների ցանկը, որոնք ժամանակին հայտարարագիր չեն ներկայացրել: Էթիկայի հանձնաժողովը քննարկումներ է անցկացրել ՔՀԿ-ների հետ, սակայն ուշացումով է հրապարակել կարգը խախտած պաշտոնյաների ցանկը, իսկ հարթակի որոնման հնարավորությունները դեռևս չեն բարելավվել:
5. Համայնքային որոշումների պորտալ • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ • Պոտենցիալ ազդեցությունը՝ փոքր • Կատարումը՝ որոշակի	Այս հանձնառությունը նպատակ ունի ստեղծելու համայնքային որոշումների էլեկտրոնային տեղեկատվական միասնական համակարգ: Հանձնառության արդյունքում լրացուցիչ բաժին է ավելացվել Հայաստանի իրավական տեղեկատվական գործող համակարգում (ARLIS), իսկ նոր առցանց հարթակ չի մշակվել: Միևնույն ժամանակ, ներկա պահին ARLIS-ում առկա որոշումները ներկայացված են PDF ձևաչափով տեղեկագրում, որը որոնման կամ տվյալների մշակման որևէ հնարավորություն չի ընձեռում: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է ապահովել, որ պորտալը ներառի Հայաստանի բոլոր համայնքների որոշումները՝ բաց տվյալների և դյուրին որոնման ձևաչափով:
6. Լիցենզիաների գրանցամատյան • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ չէ • Պոտենցիալ ազդեցությունը՝ փոքր • Կատարումը՝ որոշակի	Հանձնառության նպատակը պետական մարմինների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն ծավալող անձանց միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծումն է: Հանձնառության տեքստում հստակ չի նշված, որ միասնական էլեկտրոնային գրանցամատյանը հասանելի կլինի հանրությանը, ուստի դրա համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին հստակ չէ: Համապատասխան նորմատիվ ակտերի փոփոխությունների նախագիծը մշակվել և շրջանառվել է պետական գերատեսչությունների շրջանում, իսկ 2017 թ. հոկտեմբերին՝ ընդունվել խորհրդարանում: Գրանցամատյանի ծրագրային ապահովումն արդեն մշակված է և ներկայումս փորձարկվում է մի քանի պետական գործակալություններում, իսկ հարթակի մեկնարկը նախատեսված է 2018 թ. մայիսին: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հանրությանը մատչելի դարձնել լիցենզիա ունեցողների վերաբերյալ հիմնական տվյալները:

7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրազեկում • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ • Պոտենցիալ ազդեցությունը՝ չափավոր • Կատարումը՝ զգալի	Այս հանձնառությունը նպատակ ունի ներդնելու Open&Social գործիքը՝ առանձին հարթակների միջոցով ինտեգրված սոցիալական ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակելու և հանրությանը ծառայությունների գնահատման հնարավորություն ընձեռելու միջոցով: Այս հանձնառության կատարման առումով զգալի առաջընթաց է գրանցվել, ներառյալ www.esocial.am կայքի գործարկումը, որտեղ առկա են ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնների քարտեզագրումը և նկարագրությունը, տվյալ ծառայությունների համար իրավասու սոցիալական խմբերի կատեգորիաները և ծառայություն մատուցողների ցանկը: Ծառայությունների առցանց գնահատման և առցանց խորհրդատվության հնարավորությունն առայժմ բացակայում է: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է կազմակերպել իրազեկման արշավ՝ հանրությանը նոր հարթակին ծանոթացնելու նպատակով, ինչպես նաև ապահովել ծառայությունների գնահատման գործառույթը:
8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում • Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին՝ հստակ չէ • Պոտենցիալ ազդեցությունը՝ փոքր • Կատարումը՝ չսկսված	Մի քանի զինկոմիսարիատներում պիլոտային ծրագիր է նախատեսվել «մեկ պատուհանի» համակարգի ներդրման միջոցով վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Հանձնառությունը չի սահմանում այն ծառայությունների շրջանակը, որոնք «մեկ պատուհանի» միջոցով տրամադրվելու են պիլոտային ծրագրում ընդգրկված զինկոմիսարիատներում, բացի այդ, հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին ընդհանուր առմամբ հստակ չէ: Հանձնառության կատարումը կասեցվել է՝ զինկոմիսարիատներում նախատեսվող բարեփոխումների պատճառով: Հնարավոր է, որ զինկոմիսարիատների՝ փաստաթղթեր տրամադրելու ծառայություններն իրականացվեն պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակի վերջերս ստեղծված համակարգի միջոցով: Քանի որ հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին հստակ չէ, առաջարկվում է գործողությունների հաջորդ ծրագրում այն չշարունակել:

Առաջարկներ

Գործողությունների ծրագրի մշակման և իրականացման փուլերում իրազեկման լայնածավալ աշխատանքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ավելի լայն խմբի ներգրավումը կօգնեն բարելավել հանձնառությունների վերաբերյալ առաջարկների որակը և ընդլայնել գործընթացին մասնակցող խմբերի շրջանակը: Իրականացված հանձնառությունների կանոնավոր գնահատումը և ազդեցության ուսումնասիրումը կօգնեն ի հայտ բերել առկա բացերը և բարելավել հետագա հանձնառությունների ձևակերպումը՝ ապահովելով ձեռք բերված հաջողությունների կայունությունը: Առաջարկվում է ավելի հավակնոտ հանձնառություններ ստանձնել, որոնք կարող են վերափոխել բաց բյուջետավորման, թափանցիկ ու հաշվետու ծախսերի և հակակոռուպցիոն ոլորտներում առկա գործընթացները:

Սկսած 2014 թ.-ից, ԲԿԳ ԱՀՄ բոլոր զեկույցները հինգ առանցքային առաջարկ են ներառում ԲԿԳ գործողությունների հաջորդ ծրագրի վերաբերյալ: ԲԿԳ մասնակից պետություններն իրենց ամենամյա ինքնագնահատման զեկույցում պետք է անդրադառնան այս առանցքային առաջարկներին: Առաջարկները համապատասխանում են SMART տրամաբանությանը. դրանք կոնկրետ են, չափելի, հնարավոր, համապատասխան և ժամանակի մեջ սահմանված: Հետազոտության բացահայտումները հաշվի առնելով՝ ԱՀՄ հետազոտողը ներկայացնում է հետևյալ առանցքային առաջարկները.

Աղյուսակ 3: Հինգ առանցքային առաջարկ

1. ԲԿԳ նախաձեռնության և մասնավորապես գործողությունների ծրագիրը մշակելու, ինչպես նաև ձեռք բերված արդյունքների մասին իրազեկելու համար ավելի շատ ռեսուրսներ նախատեսել և օգտագործել լայն լսարան ունեցող հաղորդակցության միջոցներ, այդ թվում՝ սոցիալական գովազդ և հաղորդակցման այլ գործիքներ:
2. Համագործակցել խորհրդարանի հետ՝ ընդգրկելով տեղեկատվության մատչելիության, հանրության առջև հաշվետվողականության և հանրային մասնակցության վերաբերյալ ավելի հավակնոտ հանձնառություններ, որոնք կարող են պահանջել օրենսդրական փոփոխություններ:
3. Ընդլայնել բյուջեին վերաբերող հանձնառությունների շրջանակները՝ ուշադրություն դարձնելով պետական ծախսերի թափանցիկության և բյուջեի մշակման գործընթացում հանրության մասնակցության խնդիրներին: Գործադիր մարմինների կողմից պետական դրամաշնորհների և ծառայությունների պայմանագրերի տրամադրման մրցունակ և թափանցիկ մեխանիզմների ստեղծումը նման հանձնառություններից մեկը կարող է լինել:
4. Ընդգրկել հակակոռուպցիոն խնդիրներին ուղղված ավելի հավակնոտ հանձնառություններ, օրինակ, ընկերությունների հիմնադիրների և ներկայիս բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում:

5. Հանձնառությունների իրական ազդեցության և բացերն ի հայտ բերելու նպատակով իրականացնել կատարված հանձնառությունների արդյունքների գնահատում և ազդեցության ուսումնասիրում՝ ստացած տեղեկություններն օգտագործելով կառավարության և քաղաքացիական հասարակության հետագա գործունեության ընթացքում, այդ թվում՝ գործողությունների հետագա ծրագրերի միջոցով:

Համապատասխանության չափանիշները. ԲԿԳ-ին անդամակցելու համար պետությունը պետք է ապահովի իր համապատասխանությունը բաց կառավարման սկզբունքներին՝ բավարարելով բաց կառավարման տարբեր ոլորտներում առկա նվազագույն չափորոշիչներին: Յուրաքանչյուր ոլորտում երկրի կարգավիճակը գնահատելու համար օգտագործվում են երրորդ կողմի տրամադրած ցուցանիշները: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս սույն զեկույցի համապատասխանության չափանիշների վերաբերյալ VII բաժինը կամ այցելի՛ր bit.ly/1929F1I կայքէջ:

Տաթևիկ Մարգարյանն անկախ հետազոտող է, մասնագիտությամբ՝ սոցիոլոգ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հանրային քաղաքականության վերաբերյալ հետազոտությունների փորձառությամբ: Նա աշխատել է Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամում և մի շարք հասարակական կազմակերպություններում:

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) նպատակն է՝ նախաձեռնությանը միացած երկրների կառավարությունների կողմից կոնկրետ հանձնառությունների ստանձնումը՝ թափանցիկության խթանման, հանրային մասնակցության ապահովման, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարման որակը բարելավող նոր տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ: ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) գնահատում է գործողությունների ազգային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը՝ շահագրգիռ կողմերի միջև երկխոսությունը խթանելու և հաշվետվողականությունը բարելավելու նպատակով:

I. Ներածություն

Բաց կառավարման գործընկերությունը (ԲԿԳ) տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել պետությունների կողմից իրենց քաղաքացիների առջև հանձնառությունների ստանձնումը՝ թափանցիկությունը խթանելու, քաղաքացիների լիիրավ մասնակցությունն ապահովելու, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարման որակը բարելավող նոր տեխնոլոգիաներ օգտագործելու ուղղությամբ: ԲԿԳ-ն ապահովում է միջազգային հարթակ պետությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու մասնավոր հատվածի միջև երկխոսության և փորձի փոխանակման համար, որը նպաստում է բաց կառավարման մեկ ընդհանուր նպատակին:

Հայաստանը նախաձեռնությանը պաշտոնապես միացավ 2011 թ. հոկտեմբերին, երբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հայտարարեց այդ նախաձեռնությանը միանալու պետության մտադրության մասին[1]:

ԲԿԳ-ին մասնակցելու համար պետությունները պետք է համապատասխանեն կատարողականության մի շարք (նվազագույն) չափորոշիչներին: Երկրի առաջընթացը գնահատելու համար օգտագործվում են օբյեկտիվ, երրորդ կողմի տրամադրած ցուցանիշները չափորոշիչներից յուրաքանչյուրի՝ ֆիսկալ թափանցիկության, պաշտոնյաների ակտիվների հայտարարագրման, քաղաքացիների մասնակցության և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս VII բաժինը:

ԲԿԳ մասնակից պետությունները մշակում են ԲԿԳ գործողությունների ծրագրեր, որոնք հանձնառություններ են նախատեսում առկա պրակտիկայում ստատուս քվոն երկու տարվա ընթացքում վերափոխելու ուղղությամբ: Հանձնառությունները կարող են բխել ինչպես արդեն իսկ առկա գործընթացներից կամ սահմանել իրականացվող բարեփոխումներին նպաստող նոր միջոցառումներ, այնպես էլ գործողություններ նախատեսել բոլորովին նոր ոլորտներում:

Հայաստանի գործողությունների երրորդ ազգային ծրագիրը մշակվել է 2016 թ. փետրվարից հունիսն ընկած ժամանակահատվածում: Ծրագրի իրականացման փուլը պաշտոնապես մեկնարկել է 2016 թ. օգոստոսի 12-ին և տևելու է մինչև 2018 թ. հունիսի 30-ը: Այս զեկույցն ընդգրկում է գործողությունների ծրագրի մշակման ընթացքը և իրականացման առաջին տարին՝ 2016 թ. օգոստոսից մինչև 2017 թ. հունիսը ներառյալ: 2015 թ.-ից սկսած, ԱՀՄ-ը ամփոփիչ զեկույցներ է հրապարակում գործողությունների երկամյա ծրագրի ավարտից հետո առկա իրավիճակի մասին: Ծրագրի առաջին տարվա ավարտից՝ 2017 թ. հունիսի 30-ից հետո իրականացված գործողությունները և առաջընթացը ներառվելու են ամփոփիչ զեկույցում: 2017 թ. սեպտեմբերին կառավարությունը հրապարակեց իր ինքնագնահատման զեկույցը: Սույն զեկույցը գրելու պահին՝ 2017 թ. նոյեմբերին, ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակն արդեն հրապարակվել էր:

ԲԿԳ պահանջներին համապատասխան, ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) համագործակցել է անկախ հետազոտող Տաթևիկ Մարգարյանի հետ, որն ուսումնասիրել է Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի մշակումն ու իրականացումը: Տարբեր շահագրգիռ կողմերի կարծիքները հավաքագրելու համար ԱՀՄ հետազոտողը ֆոկուս խմբեր և հարցազրույցներ է անցկացրել Երևանում, Դիլիջանում և Գյումրիում: ԱՀՄ նպատակն է՝ աջակցել հետագա հանձնառությունների մշակման և իրականացման շուրջ երկխոսության ծավալմանը: Ուսումնասիրության մեթոդները և տեղեկատվության աղբյուրները ներկայացված են զեկույցի VI բաժնում («Մեթոդոլոգիան և տեղեկատվության աղբյուրները»):

---

[1] ԲԿԳ-ին միանալու պատրաստակամության վերաբերյալ ՀՀ պաշտոնական գրությունը, https://www.opengovpartnership.org/documents/armenia-letter-of-intent-join-ogp

II. Երկրի կոնտեքստը

Հայաստանում քաղաքականության բարեփոխումների գործընթացները տեղի են ունենում աղքատության բարձր մակարդակի, կոռուպցիայի և սահմանների անվտանգության խնդիրների պայմաններում: Գործողությունների ներկայիս ծրագիրը բյուջեի մասին տեղեկատվության, պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի, տեղական իշխանությունների որոշումների և սոցիալական ծառայությունների մատուցման վերաբերյալ մի շարք կարևոր հարցեր է արտացոլում: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքով՝ հանձնառությունները չափազանց նեղ շրջանակ ունեն կառավարության ներկա գործելակերպի և հանրային միջոցների սպառման հետ կապված առանցքային խնդիրները լուծելու համար:

2.1 Իրավիճակի նկարագիր

2017 թվականին ԲԿԳ չափորոշիչների (բյուջեի թափանցիկություն, տեղեկատվության մատչելիություն, ակտիվների հայտարարագրում և քաղաքացիների մասնակցություն) Հայաստանի ցուցանիշներն անփոփոխ են մնացել:

Հայաստանը 150 երկրներից 96-րդն է «Տեղեկատվության ազատության իրավունքի ինդեքսում», որտեղ գնահատվում է տեղեկատվության մատչելիության վերաբերյալ երկրների իրավական դաշտը[1]: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունվել էր դեռևս 2003 թ., սակայն պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության, այդ թվում՝ խորհրդային շրջանի՝ նախկինում գաղտնի ճանաչված փաստաթղթերի մատչելիությունը խնդրահարույց էր: Պետական մարմինները տեղեկատվության հարցումների մերժումները կամ թերի տեղեկությունների տրամադրումը հաճախ հիմնավորում էին համապատասխան կանոնակարգերի բացակայությամբ[2]: 2015 թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման կարգ սահմանեց, որն ուղղված էր տեղեկատվության ազատության օրենսդրության կիրարկման բարելավմանը: Կառավարության համապատասխան որոշմամբ նախատեսված է տեղեկատվության էլեկտրոնային հարցումների հնարավորության տրամադրում, պետական մարմինների կողմից հանրությանը տեղեկատվության տրամադրման կանոնակարգում՝ տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգի միջոցով, և տեղեկությունների հարցումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց պարտականությունների սահմանում[3]: ԲԿԳ գործողությունների նախորդ ծրագիրը (2014-16 թթ.) հանձնառություն էր ներառում տեղեկատվության հարցումների համար պատասխանատու պաշտոնյաների ուսուցման վերաբերյալ (հանձնառություն 10): Զեկույցը գրելու պահին՝ 2017 թ. նոյեմբերին, քննարկվում էր «Տեղեկատվության ազատության մասին» նոր օրենքի նախագիծը:

Հայաստանը համապատասխանում է ֆիսկալ թափանցիկության նվազագույն պահանջներին, այսինքն՝ առանցքային բյուջետային փաստաթղթերը հրապարակայնորեն մատչելի են, ամբողջական և ընդհանուր առմամբ հավաստի4: ՀՀ ֆինանսների նախարարությունն իր կայքում հրապարակում է բյուջեն և բյուջեի հաշվետվությունները՝ ներբեռնման հնարավորությամբ[5], իսկ գնումների պլանները, հայտարարագրերը և զեկույցները հասանելի են www.procurement.am կայքում: Այնուամենայնիվ, պետական ծախսերը լիովին թափանցիկ չեն, իսկ հետաքննող լրագրողները հաճախ մատնանշում են շահերի բախման, առանձին ապրանքների կամ ծառայությունների համար կատարված անհիմն ծախսերի և իրենց նպատակին չծառայող գնումների դեպքերի մասին6: Գործողությունների երրորդ ծրագիրը հանձնառություն է ներառում բյուջեի թափանցիկության վերաբերյալ՝ պետական բյուջեն ներկայացնելով տեղեկության ներբեռնման և մշակման հնարավորություն ունեցող ինտերակտիվ էլեկտրոնային հարթակի միջոցով՝ բաց տվյալների սկզբունքի կիրառմամբ (հանձնառություն 3):

Բաց տվյալների նախաձեռնությունները Հայաստանում թափ են հավաքում: Էլեկտրոնային կառավարման e-gov.am, datastat.am, armstat.am, e-register.am և մի շարք այլ հարթակներ տեղեկություններ են տրամադրում պաշտոնական վիճակագրական տվյալների, որոշումների և օրենսդրության վերաբերյալ[7]: Օրինակ, www.e-gov.am կայքում տեղեկություններ են հրապարակվում մեկ անձից գնումների, ՊՈԱԿ-ների ֆինանսավորման և վարչապետի ու կառավարության որոշումների վերաբերյալ: ՀՀ արդարադատության նախարարության միասնական վիճակագրական շտեմարանը՝ datastat.am-ը, ներկայացնում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի ու Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունների, Հարկադիր կատարման ծառայության ու Դատական համակարգերի վիճակագրական տվյալները և այդ տվյալների վերլուծությունները: Համակարգը տեղեկությթը համադրում է ըստ սահմանված վիճակագրական ցուցանիշների, և տվյալները կարելի է դիտել գրաֆիկի կամ աղյուսակի տեսքով կամ ներբեռնել որպես .csv ֆայլ: ՀՀ կենտրոնական բանկի տվյալների առցանց բազան՝ databank.cba.am-ը, վիճակագրական տեղեկություններ է տրամադրում տնտեսական ցուցանիշների վերաբերյալ: Այնուամենայնիվ, նշված հարթակներից ոչ բոլորն են պատշաճ գործում կամ օգտագործողին հարմար: Կառավարության կողմից ստեղծվել է «Թվային Հայաստան» հիմնադրամը, որի նպատակն է կառավարման բոլոր ոլորտներում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված միասնական թվային միջավայրի ձևավորումը:

«Ֆրիդմ հաուս» կազմակերպության տվյալներով Հայաստանը դասակարգվում է որպես «մասամբ ազատ» երկիր: Ըստ 2016 թվականի մասին «Ազատությունն աշխարհում» զեկույցի՝ պետության որոշումների վրա ժողովրդի ազդեցության կարողությունը փոքր է, իսկ ֆորմալ քաղաքական ընդդիմությունը թույլ է[8]: Իշխող կուսակցության դոմինանտ դերը և նրա կողմից վարչական ռեսուրսների վերահսկումը խոչընդոտում են դաշտում հավասար պայմանների ստեղծմանը[9]:

2015 թ. Հայաստանում տեղի ունեցավ Սահմանադրական հանրաքվե: Սահմանադրության հաստատված փոփոխությունները նախատեսում են երկրի

քաղաքական համակարգի անցում կիսանախագահականից դեպի խորհրդարանական, որը տեղի կունենա 2018 թ. ապրիլին, երբ ավարտվի ներկայիս նախագահի պաշտոնավարման ժամկետը:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է քաղաքացիական ազատությունները, այդ թվում՝ խոսքի և հավաքների ու միավորումների ազատությունը: Այնուամենայնիվ, բողոքի ցույցերի ընթացքում կառավարության միջամտության դեպքեր են արձանագրվել: Մարդու իրավունքների հայաստանյան խմբերը նշում են, որ ցուցարարներին վախեցնելու և կառավարության համար անցանկալի ցույցերը կանխարգելելու համար կիրառվում է քրեական օրենսգիրքը[10]: Ոստիկաններն անհամաչափ միջոցներ կիրառեցին այն խաղաղ ցուցարարների դեմ, որոնք զինված խմբի կողմից ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի գրավումից հետո կոչ էին անում խաղաղ հագուցալուծման որոշում կայացնել: Ոստիկանության լայնածավալ գործողություններն հանգեցրին տասնյակ ցուցարարների և լրագրողների վնասվածքների[11]: Human Rights Watch կազմակերպության տվյալներով, իշխանություններն անհամաչափ ուժ են կիրառել խաղաղ ցուցարարների հանդեպ և չհիմնավորված քրեական մեղադրանքներ ներկայացրել ցույցի առաջնորդներին[12]: «Անցումային երկրներ 2017» զեկույցում երկրի ժողովրդավարական կառավարման վարկանիշի անկում է արձանագրվել (5,75-ից 6,00 ՝ 1-ից 7-ն ընկած սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է առավել ժողովրդավարական, իսկ 7-ը՝ ամենաքիչ ժողովրդավարական): Այս անկումը հիմնավորվել է նրանով, որ կառավարությունը ժամանակին չի արձագանքում հանրության դժգոհություններին, որի պատճառով այդ դժգոհությունները վերածվում են բողոքի ցույցերի, և ապա չի կարողանում այդ բողոքներն առանց բռնության հանգուցալուծել[13]:

Լրատվամիջոցների ազատության ոլորտում մի շարք մարտահրավերներ կան: Տպագիր և հեռարձակող լրատվամիջոցների մեծ մասը կապակցված են քաղաքական և առևտրային շահերի հետ, և համարվում է, որ լրագրողները ինքնագրաքննություն են իրականացնում՝ ճնշումներից խուսափելու համար: Հետաքննող լրագրողական գործունեություն իրականացնող անկախ լրատվամիջոցների մեծ մասն առցանց է գործում[14]: Հաշվի առնելով, որ ինտերնետի օգտագործման ցուցանիշը կտրուկ աճ է արձանագրում՝ 2017 թ. հունիսի դրությամբ հասնելով 70,1 տոկոսի, առցանց լրատվամիջոցներն ու ռեսուրսները մատչելի են բնակչության մեծամասնության համար[15]: Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմում կան ազատախոս մի շարք կազմակերպություններ և դիտորդական խմբեր, որոնք տեղակայված են հիմնականում Երևանում16: Հասարակական կազմակերպությունները տեղական ֆինանսավորման պակաս ունեն և հիմնականում ապավինում են օտարերկրյա դոնորների աջակցությանը: 2016 թ. դեկտեմբերին խորհրդարանն ընդունեց «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքը[17], որը մշակվել էր քաղաքացիական հասարակության լայնածավալ մասնակցությամբ և մի քանի տարի շարունակ քաղաքացիական հասարակության և կառավարության օրակարգում էր: Ըստ նոր օրենքի՝ հասարակական կազմակերպությունները կարող են անմիջականորեն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել և շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ

իրենց շահառուների շահերը ներկայացնել դատարանում, իսկ հանրային միջոցներից ֆինանսավորում ստացող կազմակերպությունները պետք է տարեկան ֆինանսական հաշվետվություններ ներկայացնեն[18]:

Կառավարությունը հակակոռուպցիոն միջոցառումների ոլորտում ձեռնարկել է մի շարք օրենսդրական բարեփոխումներ, սակայն օրենքի կիրարկումը խնդրահարույց է մնում: Կոռուպցիան համատարած է: Ըստ Թրանսփարենսի Ինթենեշնլի 2016 թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսի՝ 176 երկրներից Հայաստանը Բոլիվիայի և Վիետնամի հետ 113-րդ տեղում է[19]: Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (GRECO) զեկույցում նշվում է, որ կոռուպցիան հայ հասարակության համար կարևորագույն խնդիրներից մեկն է մնում, թեև դրա դեմ պայքարը տարիներ շարունակ առաջնային է եղել քաղաքական օրակարգում: Ըստ զեկույցի՝ Հայաստանում դատական համակարգը հատկապես ենթակա է կոռուպցիոն ռիսկերի և անկախության խնդիրներ ունի: Մտահոգություններ են հնչել նաև իշխանության ճյուղերի հստակ տարանջատման բացակայության, խորհրդարանի թույլ կարողությունների և պետական որոշումների կայացման անբավարար թափանցիկության վերաբերյալ[20]: Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի 2016 թ. հետազոտության ընթացքում Հայաստանի բնակչության 24 տոկոսը նշել է, որ թվարկված ութ հանրային ծառայություններից առնվազն մեկին կաշառք է տվել: Միևնույն ժամանակ, հարցվողների 63 տոկոսը կարծում է, որ «հասարակ մարդիկ կոռուպցիայի դեմ պայքարում ոչինչ չեն կարող անել», իսկ 77 տոկոսը նշել է, որ «մեր երկրում կոռուպցիայի մասին տեղեկացնելը հանրության կողմից ընդունելի պահվածք չէ», որը տարածաշրջանի 42 երկրներից ամենաբարձր ցուցանիշն է[21]:

2016 թ. նոյեմբերին կառավարության կողմից հաստատվեցին, իսկ դեկտեմբերին խորհրդարանում ընդունվեցին ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխություններ, ըստ որոնց, բարձրաստիճան պաշտոնյաները պետք է «ողջամտորեն հիմնավորեն» իրենց հայտարարագրած այն եկամուտների ծագումը, որոնք էականորեն գերազանցում են իրենց տարեկան օրինական եկամուտը, հակառակ դեպքում կենթարկվեն քրեական պատասխանատվության[22]: Այս փոփոխություններն ուժի մեջ մտան 2017 թ. հուլիսի 1-ից: Հայաստանում բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերը 2014 թ.-ից հրապարակվել են առցանց: Դեռևս 2015 թ. կառավարությունը խստացրեց բարձրաստիճան պաշտոնյաների գույքի և գործարքների մասին տեղեկություն հրապարակելու պահանջը՝ վերանայելով հայտարարագրման ենթակա գույքի այն տեսակները, որոնց վերաբերյալ տեղեկությունը հրապարակվում էր միայն որոշակի շեմն անցնելու դեպքում: Շեմը պահպանվեց գույքի միայն որոշ տեսակների, օրինակ, 8 միլիոն դրամը գերազանցող արժեքավոր իրերի և ընտանիքի անդամների գույքի և գործարքների համար[23]: 2017 թ. հունիսին ընդունվեց հակակոռուպցիոն մի շարք օրինագծերի փաթեթ, ըստ որոնց՝ վարչական պատասխանատվություն է սահմանվում հայտարարագրերը ժամանակին չներկայացնելու և հայտարարագրերը ներկայացնելու պահանջներն ու կարգը խախտելու, ինչպես նաև անփութության հետևանքով սխալ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու համար, և քրեական պատասխանատվություն՝ հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու

կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու, ինչպես նաև հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար: Գույքի և եկամուտների հայտարարագրման ենթակա պաշտոնյաների շրջանակն ընդլայնվել է՝ ընդգրկելով ոչ միայն բարձրաստիճան պաշտոնյաների, այլև քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանց[24]: Բացի գույքից և եկամուտներից, 2019 թ.-ից բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարագրերում կներառվի նաև շահերի հայտարարագրումը: Պաշտոնատար անձինք պարտավոր կլինեն իրենց հայտարարագրում նշել այն ընկերությունները, որոնց հիմնադիրը կամ առնվազն 10 տոկոսի մասնակիցն են, և այն կազմակերպությունները, որոնց կառավարման, վարչական կամ վերահսկողական որևէ մարմնի անդամ են, ինչպես նաև բացահայտել իրենց անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին: Ավելի քան 2000 պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի, շահերի հնարավոր բախման դեպքերի և էթիկայի խախտումների ուսումնասիրման նպատակով 2018 թվականին կստեղծվի և կսկսի գործել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը[25]: ԲԿԳ գործողությունների երրորդ ծրագիրը հանձնառություն է ներառում բաց տվյալների սկզբունքով պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը հրապարակելու վերաբերյալ: Հակակոռուպցիոն միջոցառումների շրջանակում 2017 թ. հունիսին ընդունվեց նաև «Ազդարարման համակարգի մասին» օրենքը, որն ուժի մեջ է մտնելու 2018 թվականին[26]:

Hetq.am էլեկտրոնային լրատվամիջոցի հրապարակման[27] հիման վրա Հատուկ քննչական ծառայությունը քրեական գործ հարուցեց արդարադատության գեներալ-մայոր, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պետ Միհրան Պողոսյանի դեմ՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 310 հոդվածի (անօրինական մասնակցություն ձեռնարկատիրական գործունեությանը): Պարոն Պողոսյանը «Պանամայի թղթերում» նշվել էր որպես երեք օֆշորային ընկերությունների բաժնետեր: 2017 թ. հունվարին քրեական գործով վարույթը կարճվեց[28]: Պաշտոնյաների մասնակցությամբ օֆշորային սկանդալները նոր չեն Հայաստանում, սակայն (առնվազն հանրությանը հայտնի) միջոցառումներ չեն իրականացվում օֆշորային հաշիվների միջոցով պետական միջոցների չարաշահումները բացահայտելու, պատժելու և/կամ կանխարգելելու ուղղությամբ, որը կբարելավեր հանրության վստահությունը կառավարության կողմից իրականացվող համապատասխան հակակոռուպցիոն ծրագրերի հանդեպ:

2016 թ. ապրիլին Ադրբեջանի հետ հակամարտությունը սրվեց՝ հանգեցնելով չորս օրվա թեժ մարտերի և հրադադարի կնքումից ի վեր չտեսնված քանակով զոհերի[29]: Այս «քառօրյա պատերազմն» ազգային համերաշխության վերելքի առիթ հանդիսացավ և խթանեց հանրության կողմից բանակին աջակցության տրամադրումը՝ միաժամանակ հարցեր առաջացնելով զինված ուժերում կոռուպցիայի և Հայաստանի իշխանությունների կողմից անվտանգության ապահովման կարողության վերաբերյալ[30]: 2017 թ. հունվարից բոլոր հարկատուների համար ուժի մեջ մտավ նոր հարկատեսակ (ամսական հազար դրամ)՝ զոհված զինծառայողների ընտանիքներին և մարտական գործողությունների ընթացքում վիրավորված զինծառայողներին

փոխհատուցում վճարելու նպատակով: Այդ միջոցները կազմակերպելու, համակարգելու և բաշխելու համար հատուկ ապահովագրական հիմնադրամ ստեղծվեց: Այս նախաձեռնությունը քննադատության արժանացավ ընդդիմության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից՝ կոռուպցիայի հետ կապված նորանոր մտահոգությունների կապակցությամբ[31]: Հիմնադրամի թափանցիկությունն ապահովելու համար կառավարությունը ստեղծեց մի կայք, որտեղ ներկայացվում են հիմնադրամի եկամուտների և ծախսերի հաշվետվությունները, ինչպես նաև տեղեկություններ հիմնադրամի խորհրդի, գործունեության սկզբունքների և ներքին ակտերի մասին[32]:

Հանրության վստահությունը կառավարության և պետական կառույցների հանդեպ դեռևս ցածր է: Ըստ «Կովկասյան բարոմետր» ամենամյա հետազոտության վերջին տվյալների՝ Հայաստանի հարցվողների 5 տոկոսը նշել է, որ լիովին վստահում է գործադիր իշխանությանը, 16 տոկոսը՝ ավելի շուտ վստահում է, մինչդեռ 22 տոկոսը ավելի շուտ չի վստահում, 36 տոկոսն էլ բոլորովին չի վստահում գործադիր իշխանությանը[33]: Խնդրահարույց է մնում հանրային վստահությունն ընտրական գործընթացների նկատմամբ: 2016 թ. մայիսին ընդունվեց նոր ընտրական օրենսգիրքը[34]: Օրենսգրքի շուրջ քննարկումները մասնակցային են եղել՝ աշխատանքային խմբում իշխանության, քաղաքական ընդդիմության և քաղաքացիական հասարակության հավասար ներկայացվածություն ապահովելով[35]: Քաղաքացիական հասարակության կողմից ողջունելի փոփոխություններից էին ստորագրված ընտրացուցակների հրապարակումը և ընտրատեղամասերում դիտորդների ու լրագրողների մուտքի սահմանափակումների մասնակի վերացումը: Չնայած օրենքի որոշ դրական փոփոխություններին, 2017 թ. ապրիլին կայացած խորհրդարանական ընտրությունները չնպաստեցին ընտրական գործընթացի հանդեպ հանրության վստահության ավելացմանը: Հայաստանյան ՀԿ-ների կոալիցիա հանդիսացող «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը քվեարկությանը նախորդող ժամանակահատվածում և քվեարկության ընթացքում մի շարք խախտումներ արձանագրեց[36]: Ինչպես նշվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելության վերջնական զեկույցում, ընտրողների ցուցակների ճշգրտությունը բարելավվել է և քվեարկության ընթացակարգերը հիմնականում պահպանվել են, սակայն «քարոզարշավի վրա ստվեր նետեցին արժանահավատ և համատարած պնդումները, որ տեղի են ունեցել ընտրակաշառքի բաժանման, հանրային ծառայողների, այդ թվում՝ դպրոցների և հիվանդանոցների աշխատակիցների վրա ճնշումներ գործադրելու, ինչպես նաև այս կամ այն կուսակցության օգտին քվեարկելու նպատակով ընտրողներին ահաբեկելու դեպքեր»[37]:

2016 թ. սեպտեմբերին կառավարության կազմի փոփոխություն եղավ, և նոր վարչապետն իր պաշտոնը ստանձնեց տնտեսական բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի խոստումներով: 2017 թ. հունիսին ներկայացվեց կառավարության 2017-2022 թթ. նոր ծրագիրը, որը երկարաժամկետ բարեփոխումներ էր ներառում պետական կառավարման և իրավական համակարգում, արտաքին քաղաքականության և պաշտպանության, տնտեսական առաջընթացի և սոցիալական հարցերի ոլորտներում[38]: Կառավարության փոփոխությունն ազդեց ԲԿԳ գործընթացների վրա, այդ

թվում գործողությունների ծրագրի իրականացման սկիզբը հետաձգելու առումով:

2017 թ. նոյեմբերին Հայաստանն ու Եվրամիությունը ստորագրեցին նոր շրջանակային համաձայնագիր՝ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր» անվամբ (CEPA): Այլ հարցերի թվում՝ համաձայնագիրը նախատեսում է մրցույթների հրապարակման և իրականացման ընթացակարգերի ավելի հստակ կանոններ, պետական սուբսիդիաներ տրամադրելու նոր կանոնակարգ, պետական գնումների թափանցիկության բարելավում և ավելի մեծ ուշադրություն ժողովրդավարության տարրերի հանդեպ, ինչպիսիք են, օրինակ, ազատ ու արդար ընտրությունները և արդար դատաքննության իրավունքը: Համաձայնագրի հիման վրա ստեղծվեց Հայաստանի և Եվրամիության կազմակերպություններից բաղկացած Քաղաքացիական հասարակության անկախ պլատֆորմ, որը պետք է հետևի համաձայնագրի իրականացման գործընթացին և առաջարկություններ ներկայացնի Հայաստանի իշխանություններին ու Եվրամիությանը[39]:

2.2 Գործողությունների ծրագրի առնչությունը երկրի կոնտեքստի հետ

Գործողությունների երրորդ ծրագրի հանձնառությունների շարքում շահագրգիռ կողմերը հիմնականում կարևորում են թափանցիկությանն առնչվող հարցերը: Դրանք ներառում են պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների և հաշվետվությունների տրամադրումը (հանձնառություն 2), պաշտոնատար անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի կատարելագործումը (հանձնառություն 4) և պատասխանատու լիցենզավորումը (հանձնառություն 6): Այնուամենայնիվ, շատ ՔՀԿ-ներ թերահավատորեն են վերաբերվում այդ հանձնառությունների իրական ազդեցությանը՝ պայմանավորված դրանց նեղ շրջանակով և/կամ թերի կատարմամբ:

Գործողությունների ներկայիս ծրագիրը ներառում է բյուջեի մասին տեղեկատվության, պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի, տեղական իշխանությունների որոշումների և սոցիալական ծառայությունների մատուցման հետ կապված մի շարք հարցեր: Այս ուսումնասիրության շրջանակներում հարցված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նշում են, որ գործողությունների երրորդ ծրագրում ստանձնած հանձնառությունները չափազանց սահմանափակ են՝ կառավարման ներկա պրակտիկայի և հանրային միջոցները ծախսելու հիմնարար խնդիրները լուծելու համար: Օրինակ, պետական դրամաշնորհների մասին հանձնառությունը չի նախատեսում դրամաշնորհներ տրամադրելու մրցակցային մեխանիզմի ստեղծում և չի ներառում պետական սուբսիդիաների, նվիրատվությունների և ֆինանսավորման այլ տեսակների մասին տեղեկատվություն: Նմանապես, պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակման վերաբերյալ հանձնառության մեջ նախատեսված չէ խախտումների բացահայտումները և համապատասխան պատժամիջոցները կիրառելու վերաբերյալ տեղեկության հրապարակում: ՔՀԿ-ները կասկածում են, որ հայտարարագրերի մասին բաց տվյալները կարող են որևէ ազդեցություն ունենալ, եթե պատասխանատու մարմինները համապատասխան միջոցներ չձեռնարկեն պաշտոնյաներին կեղծ

կամ ուշացած հայտարարագրերի կամ ապօրինի հարստացման համար պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Համարվում է, որ բարձրաստիճան պետական պաշտոնյաները մասնաբաժիններ ունեն տարբեր ընկերություններում, որոնց մասին չեն նշում հայտարարագրերում: Ըստ լրագրողական հետաքննությունների տվյալների՝ հաճախ որպես ընկերությունների սեփականատեր կամ բաժնետեր գրանցում են պաշտոնատար անձանց կամ նրանց ամուսինների ծնողներին, ինչպես նաև առանձին բնակվող զավակներին:

Թեև կոռուպցիան լայն տարածում ունի Հայաստանում, իսկ հակակոռուպցիոն օրենսդրության կիրարկումը խնդրահարույց է, գործողությունների այս ծրագրում բավականաչափ ուշադրություն չի հատկացված հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը: Քանի որ կոռուպցիայի մասին մտահոգությունները հիմնականում կապված են պետական գնումների և պաշտոնը չարաշահելու հարցերի հետ, կառավարությունը պետք է հանձնառություններ ստանձնի գնումների գործընթացում թափանցիկությունն ապահովելու վերաբերյալ: Նմանապես, ընդհանուր առմամբ բյուջեի ծախսերի վերաբերյալ հանրային հաշվետվողականության ուղղությամբ ավելի լայնածավալ ջանքեր են անհրաժեշտ:

Գործողությունների այս ծրագրում ներառված է բյուջեի ծախսերի վերաբերյալ մի հանձնառություն, որը, սակայն, չի ընդգրկում ռազմական ծախսերի ոլորտը, քանի որ վերջինս փակ է հանրային վերահսկողության համար: Հայաստանում զինուժին առնչվող ծախսերի մասին տեղեկությունը հասանելի չէ՝ ազգային անվտանգության խնդիրներից ելնելով: 2016 թ. ապրիլյան հակամարտությունը զգալի մտահոգություններ առաջացրեց պաշտպանության նպատակներով պետական միջոցները ծախսելու արդյունավետության վերաբերյալ: Կառավարությունը կարող է հաշվի առնել հանրային մտահոգությունները՝ հասանելի դարձնելով ռազմական ծախսերի մասին հնարավոր տեղեկատվությունը:

Հանրային վստահության ցածր մակարդակը խոչընդոտում է արդյունավետ հանրային մասնակցությանը: Իրավական ակտերի նախագծերի առցանց հարթակի (e-draft.am) ստեղծումը կարևոր առաջընթաց էր տեղեկատվությունն առավել մատչելի դարձնելու և հանրային մասնակցությունն ընդլայնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, ըստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, իրենց մեկնաբանությունների վերաբերյալ արձագանքը երբեմն ուշացումով է տեղադրվում, իսկ նախագծի հետագա կարգավիճակի մասին տեղեկատվությունը հաճախ առկա չէ: Կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի հանրային մասնակցության մեխանիզմներն առավել արդյունավետ օգտագործելու և հանրային քննարկումները պրոակտիվ կազմակերպելու ուղղությամբ:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչների աշխատանքը մեկ այլ խնդրահարույց ոլորտ է, որը մտահոգություն է առաջացնում տեղական հասարակական և միջազգային կազմակերպությունների շրջանում: Չնայած ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ ոստիկանության բռնի գործողությունները, հարկային տեսչության աշխատակիցների բացասական հանրային ընկալումը և հարկադիր մարմիններում աշխատող պաշտոնատար անձանց հարստացումը նոր քայլեր ձեռնարկելու և այդ կառույցներում

հաշվետվողականության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտություն են առաջացնում: Անհրաժեշտ է ապահովել բռնություն գործադրելու և իրենց պաշտոնը չարաշահելու համար ոստիկանության և այլ պետական մարմինների պաշտոնյաների նկատմամբ ձեռնարկված կարգապահական միջոցառումների թափանցիկությունը:

Բարեփոխումներ են անհրաժեշտ նաև տնտեսական մրցակցության պաշտպանության և խթանման նպատակով ստեղծված անկախ մարմնի՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու ուղղությամբ: Մենաշնորհի և անբավարար մրցակցության խնդիրները միջազգային զեկույցներում արտացոլված և քաղաքացիական հասարակության կողմից բարձրաձայնված կարևորագույն հարցերից են: Հանձնաժողովի գործունեության թափանցիկության բարելավումը, այդ թվում՝ կիրառված պատժամիջոցների մասին հաշվետվողականությունը, կարող են խթանել այդ ուղղությամբ աշխատանքի արդյունավետությունը և բարելավել հանրային վստահությունը պետության կողմից նախաձեռնված հակամենաշնորհային միջոցառումների նկատմամբ:

---

[1] Տեղեկատվության ազատության իրավունքի համաշխարհային վարկանիշ, Իրավունքի և ժողովրդավարության կենտրոն, http://www.rti-rating.org/country-data/

[2] Մամուլի ազատություն 2016, Հայաստան, https://freedomhouse.org/report/freedom-press/2016/armenia

[3] ՀՀ կառավարության որոշում թիվ 1204-Ն, 15.10.2015, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=101115

[4] ԱՄՆ պետական դեպարտամենտի 2017 թ. ֆիսկալ թափանցիկության զեկույց, https://www.state.gov/e/eb/ifd/oma/fiscaltransparency/273700.htm

[5] ՀՀ ֆինանսների նախարարության կայք, http://minfin.am

[6] Տե՛ս, օրինակ, ՍիվիլՆեթի «Քո գրպանից» տեսանյութերի շարքը, https://www.civilnet.am/news/քո-գրպանից, «Հետքի» մի շարք հրապարակումները, օրինակ՝ «Պետական գնումները ոչ պատահական ընկերություններ են հաղթում», 14.09.2017, http://hetq.am/arm/news/81973/petakan-gnumnery-och-patahakan-ynkerutyunnern-en-haxtum.html, «Հայաստանի ամենաթանկ 10 ռեստորանները. միլիոնավոր դրամների չվճարվող գույքահարկ», 30.08.2017, http://hetq.am/arm/news/81634/hayastani-amenatank-10-restorannery%E2%80%A4-milionavor-dramneri-chvtcharvox-guyqahark.html, ինչպես նաև այլ լրատվամիջոցների հրապարակումներ՝ «Տարոն Մարգարյանն իր հաճույքի համար շռայլ ծախսեր է անում. քաղաքապետարանը 500 հատ կոնյակ է գնել», 29.08.2017, http://armlur.am/724622/, «41 մլն դրամ՝ Դիլիջանի ուսումնական կենտրոնի կոկտեյլի գդալների, սիգարի կտրիչի և այլ թիթիզությունների համար», 08.12.2015, http://www.aravot.am/2015/12/08/637584/

[7] Բաց տվյալների շտեմարանները Հայաստանում. պետական սեգմենտի քարտեզագրում, Սամվել Մարտիրոսյան, 2016, http://kolba.am/hy/post/open-data-government-armenia/

[8] Ֆրիդմ Հաուս, Ազատությունն աշխարհում 2017, Հայաստան, https://freedomhouse.org/report/freedom-world/2017/armenia

[9] Ֆրիդմ Հաուս, Ազատությունն աշխարհում 2016, Հայաստան, https://freedomhouse.org/report/freedom-world/2016/armenia

[10] Սիվիկուս մոնիտոր, https://monitor.civicus.org/country/armenia/

[11] Hetq.am, Երևան. բախումներ ոստոիկանության և ցուցարարների միջև: 60 հոգի վնասվածք է ստացել, 30.07.2016, http://hetq.am/eng/news/69582/yerevan-police-and-demonstrators-clash-60-injured.html

[12] Human Rights Watch 2017 թ. զեկույց, Հայաստան, https://www.hrw.org/europe/central-asia/armenia
[13] Անցումային երկրները 2017, Հայաստան, https://freedomhouse.org/report/nations-transit/2017/armenia
[14] Ֆրիդմ Հաուս, Ազատությունն աշխարհում 2016, Հայաստան, https://freedomhouse.org/report/freedom-world/2016/armenia
[15] Ինտերնետի համաշխարհային վիճակագրություն, http://www.internetworldstats.com/stats3.htm
[16] Ֆրիդմ Հաուս, Ազատությունն աշխարհում 2016, Հայաստան, https://freedomhouse.org/report/freedom-world/2016/armenia
[17] Հայաստանում ոչ կառավարական կազմակերպություններն իրենց իրավական կարգավիճակով դասակարգվում են հասարակական կազմակերպությունների (որոնք մեծամասնություն են կազմում) և հիմնադրամների:
[18] ԱՄՆ ՄԶԳ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2016 թ. ՔՀԿ կայունության ինդեքս, https://www.usaid.gov/europe-eurasia-civil-society
[19] Թրանսպարենսի Ինթերնեշնլ, 2016 թ., կոռուպցիայի ընկալման համաթիվ, https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016#table
[20] Եվրոպայի խորհուրդը կոչ է անում Հայաստանին ավելի շատ քայլեր ձեռնարկել պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիան կանխարգելելու ուղղությամբ, 25.02.2016, https://www.coe.int/en/web/human-rights-rule-of-law/-/council-of-europe-urges-armenia-to-step-up-corruption-prevention-among-parliamentarians-judges-and-prosecutors
[21] Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի 2016 թ. հարցումը Հայաստանում, https://transparency.am/hy/gcb
[22] ՀՀ օրենքը «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», 16.12.2016, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110565
[23] 2014-2016 թթ. Հայաստանի ամփոփիչ զեկույց՝ հանրության քննարկման համար, https://www.opengovpartnership.org/documents/armenia-end-of-term-report-2014-2016-public-comment
[24] ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 09.06.2017 թ., http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114359
[25] ՀՀ օրենքը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», 09.06.2017 թ., http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114355
[26] ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017 թ., http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114364
[27] Hetq.am, Պանաման նվաճած հայ գեներալը. Միհրան Պողոսյանի օֆշորային ընկերությունները և հաշիվները շվեյցարական բանկերում, 04.07.2016, http://hetq.am/arm/news/66918/panaman-nvatchats-hay-generaly%E2%80%A4-mihran-poxosyani-ofshorayin-ynkerutyunnery-ev-hashivnery-shveycarakan-bankerum.html
[28] Azatutyun.am, Միհրան Պողոսյանին վերագրվող օֆշորային սկանդալի քրեական գործով վարույթը կարճվել է, 24.01.2018, https://www.azatutyun.am/a/28254963.html
[29] Հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում, The Economist, 15.04.2016, https://www.economist.com/blogs/economist-explains/2016/04/economist-explains-9, Վիքիպեդիա, 2016 թ. բախումները Լեռնային Ղարաբաղում, https://en.wikipedia.org/wiki/2016_Nagorno-Karabakh_clashes
[30] The Armenian Weekly, Քառօրյա պատերազմից քաղած դասեր, 02.06.2016, https://armenianweekly.com/2016/06/02/lessons-learned-2/, PanARMENIAN.Net, Միլս. Քառօրյա պատերազմն ուրվագծեց ազգային անվտանգությունում կոռուպցիայի ազդեցությունը, 02.02.2017, http://www.panarmenian.net/arm/news/231546/, ՍիվիլՆեթ, Հայաստանի չգնած զենքերը, 14.04.2016, https://www.civilnet.am/news/2016/04/14/tax-benefits-for-armenian-officials-vs-strengthening-army/290795
[31] Hetq.am, Հոգ տանելով զինծառայողների մասին. Հայաստանի կառավարությունը աղքատ է, ցանկանում է նոր հարկատեսակ սահմանել, 15.11.2016, http://hetq.am/eng/news/72706/taking-

care-of-soldiers-armenias-government-cries-poverty-wants-to-mandate-new-tax.html, Azatutyun.am, Հայաստանի խորհրդարանը հաստատում է զինծառայողների փոխհատուցման օրինագիծը, 17.11.2016, https://www.azatutyun.am/a/28124312.html

[32] Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, https://www.1000plus.am

[33] Կովկասյան բարոմետր 2017, Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2017 թ. նոյեմբերի դրությամբ), Երևան, 2017 թ. դեկտեմբեր, http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2017/CB2017_ARM_presentation_final.pdf

[34] Արմենպրես, Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ ընդունեց ՀՀ ընտրական օրենսգրքի նախագիծը, 17.05.2016, https://armenpress.am/arm/news/847479/armenian-parliament-adopts-electoral-code-draft.html

[35] ArmeniaNow, 4+4+4. Ընդդիմությունը ցանկանում է հատուկ ձևաչափով քննարկել Ընտրական օրենսգիրքը, 23.03.2016, https://www.armenianow.com/news/politics/70815/armenia_politics_opposition_government_format_electoral_code_debate

[36] PanARMENIAN.Net, «Քաղաքացի դիտորդ». 1918 խախտում, մեծ մասը՝ քվեարկության ընթացքում, 02.04.2017, http://www.panarmenian.net/arm/news/236522/

[37] Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններ, 2017 թ. ապրիլի 2, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույց, էջ 3, https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491

[38] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2017-2022, Երևան, 2017 թ. հունիս, http://www.gov.am/files/docs/2207.pdf

[39] ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (CEPA), https://eeas.europa.eu/sites/eeas/files/eng_cepa_factsheet_armenia_digital.pdf

III. Գործընթացի ղեկավարում և շահագրգիռ կողմերի ներգրավում

Գործողությունների երրորդ ծրագրի շուրջ խորհրդակցական լայն գործընթաց ծավալվեց. օգտագործվեցին առցանց հարթակներ, հանդիպումներ իրականացվեցին մի շարք մարզերում: Անհրաժեշտ է է՛լ ավելի բարելավել գործողությունների ծրագրի մշակման և իրականացման վերաբերյալ իրազեկումը՝ մասնակցությունն ավելի արդյունավետ խթանելու և հանրության լայն շերտերին տեղեկությունը հասցնելու համար:

3.1 Գործընթացի ղեկավարում

Այս ենթաբաժնում նկարագրված է Հայաստանում ԲԿԳ գործընթացների ղեկավարման կառուցվածքը և ինստիտուցիոնալ համատեքստը: Աղյուսակ 3.1-ում այս տեղեկությթը ներկայացված է ամփոփ տեսքով, իսկ մանրամասները տեքստային նկարագրության մեջ են (ստորև):

Աղյուսակ 3.1: ԲԿԳ գործընթացի ղեկավարումը

1. Կառուցվածք	Այո	Ոչ
Նշանակվել է ԲԿԳ գործընթացների համար պատասխանատու կոնտակտային անձ	✔	
	Մի քանի	Մեկ
ԲԿԳ գործընթացների համար պատասխանատու մեկ կամ մի քանի գործակալություն կա		✔
	Այո	Ոչ
Կառավարության ղեկավարը ԲԿԳ գործընթացի ղեկավար պատասխանատուն է		✔
2. Իրավական մանդատ	Այո	Ոչ
Կառավարության կողմից ԲԿԳ գործընթացի ստանձնումը սահմանված է պաշտոնական և հրապարակային մանդատի միջոցով	✔	
Կառավարության կողմից ԲԿԳ գործընթացի ստանձնումը սահմանված է օրենքի ուժով		✔
3. Շարունակականություն և անկայունություն	Այո	Ոչ
ԲԿԳ գործընթացի պատասխանատու կամ մասնակից կազմակերպությունները փոխվել են գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում		✔
Գործողությունների ծրագրի ցիկլի ընթացքում գործադիր ղեկավարը փոխվել է	✔	

Հայաստանն ունիտար պետություն է, որը սահմանադրական փոփոխություններից հետո 2018 թ. ապրիլին կիսանախագահականից անցնելու է խորհրդարանական հանրապետության: Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը հանդես է գալիս որպես ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներն ու հանձնարարականները կատարող գործադիր մարմին: Կառավարության աշխատակազմը Հայաստանի ԲԿԳ գործընթացի պատասխանատու ղեկավար մարմինն է: (Տես Աղյուսակ 3.1-ը Հայաստանում ԲԿԳ գործընթացի ղեկավարման և մանդատի վերաբերյալ): Ներկա պահին կառավարության աշխատակազմի մանդատն է՝ համակարգել աշխատանքային խմբի (ԱԽ) հանդիպումները և հետևել նախարարությունների ստանձնած հանձառությունների կատարմանը: Կառավարության աշխատակազմում գործողությունների ծրագիրը վերահսկելու աշխատանքներում ներգրավված է անձնակազմի չորս անդամ, սակայն ԲԿԳ գործընթացի համար պետական բյուջեում առանձին գումար նախատեսված չէ: ԲԿԳ աշխատանքային թիմի կազմում ընդգրկված է կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալը, որը ԲԿԳ աշխատանքային խմբի համակարգողն է և պատասխանատու է ԱԽ հանդիպումները գումարելու, նախագահելու, ինչպես նաև պատասխանատու մարմինների և այլ տեղական ու միջազգային շահագրգիռ կողմերի հետ հանդիպելու համար: Թիմի մյուս անդամը կառավարության աշխատակազմի արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետն է, որը ԲԿԳ աջակցության ստորաբաժանման հետ կապը պահող կոնտակտային անձն է, ԲԿԳ ԱԽ քարտուղարը և Կայուն զարգացման նպատակների Հայաստանի աշխատանքային խմբի քարտուղարը, պատասխանատու է ԲԿԳ շահագրգիռ կողմերի հետ շարունակական կապ պահպանելու, հանդիպումները կազմակերպելու և արձանագրելու և ԲԿԳ Հայաստանի կայքում ու ֆեյսբուքյան էջում հրապարակվող տեղեկությունները պատրաստելու համար: Աշխատակազմի մյուս երկու անդամներն են անձնակազմի կառավարման վարչության պետը, որը նախկինում ԲԿԳ կոնտակտային անձն էր, և «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն» ծրագրի ղեկավարը. երկուսն էլ աշխատանքային խմբի անդամ են:

Հայաստանի գործողությունների երրորդ ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2016 թ. օգոստոսի 11-ի արձանագրային որոշմամբ[1]: Գործողությունների ազգային ծրագրի իրականացման նպատակով 2016 թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ վարչապետի 1206-Ա որոշմամբ[2] սահմանվել է բազմաշահառու աշխատանքային խմբի կազմը: 1.3 ենթաբաժնում նկարագրված է աշխատանքային խմբի գործունեությունը: (Գործողությունների ազգային ծրագրի հաստատման և նոր աշխատանքային խմբի ձևավորման միջև ընկած ժամանակային բացը պայմանավորված էր 2016 թ. սեպտեմբերին վարչապետի և կառավարության կազմի փոփոխությամբ): Աշխատանքային խմբի նոր կազմի հաստատումից բացի, նշված որոշմամբ գործողությունների երրորդ ծրագրի իրականացման համակարգող նշանակվեց Վահե Ստեփանյանը: Հետագայում նորից համակարգողի փոփոխություն տեղի ունեցավ. 2017 թ. հունիսին Վահե Ստեփանյանը նշանակվեց կառավարության աշխատակազմի ղեկավար, իսկ 2017 թ. հուլիսի 25-ից ԲԿԳ Հայաստանի

աշխատանքային խմբի համակարգման աշխատանքը ստանձնեց նրա տեղակալ Վահե Ջիլավյանը[3]:

Աշխատանքային խմբի մանդատը գործողությունների նախորդ ծրագրից հետո չի փոխվել: Խմբի կազմը մասամբ փոխվել է՝ ներառելով գործողությունների երրորդ ծրագրի շրջանակներում ստանձնած հանձառությունների պատասխանատուներին:

Կառավարության աշխատակազմը ԱԽ կազմի և հանդիպումների ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթի նախագիծ էր մշակել, որը քննարկվեց 2017 թ. հոկտեմբերի 30-ի աշխատանքային խմբի նիստում և պատրաստ էր 2017 թ. ավարտին: Սակայն, քանի որ 2018 թ. գարնանն ակնկալվում են պետական համակարգի կառուցվածքային փոփոխություններ, որոշվեց հետաձգել փաստաթղթի ընդունումը մինչև նոր կաբինետի ձևավորումը:

3.2 Պետական կառույցների մասնակցությունը

Այս ենթաբաժնում տեղեկություններ կներկայացնենք ԲԿԳ գործընթացի տարբեր փուլերում ներգրավված պետական կառույցների մասին: ԲԿԳ գործընթացում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը կներկայացվի հաջորդ ենթաբաժնում:

Աղյուսակ 3.2 Պետական կառույցների մասնակցությունը ԲԿԳ գործընթացին

Ինչպե՞ս են մասնակցել կառույցները	Նախարարություններ, գերատեսչություններ և գործակալություններ	Օրենսդիր մարմիններ	Դատական մարմիններ (այդ թվում՝ քվազի-դատական գործակալություններ)	Այլ (ներառյալ սահմանադրական անկախ կամ ինքնավար մարմիններ)	Տեղական իշխանություն
Խորհրդակցություն: Այս կառույցներն ուսումնասիրել են գործողությունների ծրագիրը կամ ուսումնասիրելու հրավեր են ստացել, սակայն միշտ չէ, որ պատասխանատու են եղել գործողությունների ծրագրում ստանձնած հանձնառությունների համար:	24[4]	0	1[5]	13[6]	1[7]
Առաջարկների ներկայացում: Այս կառույցներն առաջարկներ են ներկայացրել գործողությունների ծրագրում ներառելու համար:	13[8]	0	0	4[9]	1

Իրականացում: Այս կառույցները պատասխանատու են գործողությունների ծրագրում ստանձնած հանձնառությունների կատարման համար՝ անկախ նրանից, թե արդյոք հենց նրանք են առաջարկել տվյալ հանձնառությունը, թե ոչ:	5	0	0	1	0

ՀՀ կառավարության աշխատակազմը գործողությունների երրորդ ծրագրի մշակման գործընթացին մասնակցելու հրավեր է ուղարկել բոլոր պետական մարմիններին և մի շարք անկախ գործակալությունների և հանձնաժողովների: Հրավեր է ուղարկվել նաև ՀՀ դատախազություն և Երևանի քաղաքապետարան[10]: Վերը բերված աղյուսակ 3.2-ում նշված են ներգրավված կառույցների տվյալները:

Այն նախարարություններն ու գործակալությունները, որոնք մասնակցելու ցանկություն հայտնեցին, իրենց ներկայացուցիչներին ուղարկեցին գործընթացի մեկնարկային հանդիպմանը: Այնուհետև նրանք գրավոր առաջարկներ ներկայացրին և դրանք քննարկեցին կառավարության աշխատակազմի հետ[11]: Մասնավորապես, առաջարկներ են ներկայացվել 11 նախարարությունների և չորս այլ պետական մարմինների կողմից, և յոթ առաջարկ ի վերջո ներառվել է գործողությունների ծրագրում:

Գործողությունների երրորդ ծրագրում անմիջականորեն ներգրավված այն գործակալությունները, որոնք պատասխանատու են հանձնառությունների կատարման համար, ծրագրի իրականացման փուլում անդամակցում էին ԲԿԳ աշխատանքային խմբին՝ գործողությունների երկրորդ ծրագրի շրջանակներում ընդգրկված գերատեսչությունների հետ մեկտեղ[12]:

3.3 Քաղաքացիական հասարակության մասնակցությունը

Կառավարության ԲԿԳ աշխատանքային թիմը մշակեց գործողությունների ծրագրի մշակման և խորհրդակցությունների ժամանակացույցը, որն այնուհետ ներկայացվեց և քննարկվեց աշխատանքային խմբի փետրվարի 15-ի ընդլայնված նիստում: Հաջորդ օրը ժամանակացույցը տեղադրվեց www.ogp.am կայքում[13]: Այնուհետև հրապարակվեցին հանձնառությունների հիմնական չափանիշների ուղեցույցը և առաջարկների ներկայացման ձևաչափը[14]: Գործողությունների ծրագրի մշակմանը մասնակցելու հրավերն էլեկտրոնային եղանակով ուղարկվեց աշխատանքային խմբի անդամներին, իսկ տպագիր տարբերակով՝ պետական մարմիններին: Աշխատանքային խմբում ներգրավված ՔՀԿ-ներին խնդրեցին հայտարարությունը տարածել իրենց ցանցերով[15,16]:

Կառավարության աշխատակազմը 2016 թ. ապրիլին մարզային հանդիպումներ կազմակերպեց՝ մարզային և մասնագիտացած հասարակական կազմակերպություններին ներգրավելու, ինչպես նաև ԲԿԳ նախաձեռնության և գործողությունների երրորդ ծրագրի մշակման մասին հանրությանն

իրազեկելու նպատակով[17]: Բացի այդ, շահագրգիռ կողմերը ներկայացնող ավելի լայն լսարան ներգրավելու նպատակով, 2016 թ. ապրիլի 13-ին Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Կոլբա» նորարարական լաբորատորիան բաց հայտարարություն տարածեց քրաուդսորսինգ (crowdsourcing) գործիքի միջոցով գաղափարների հավաքագրման մասին[18]: Գործիքը նորույթ էր այս գործընթացում, քանի որ թույլ էր տալիս գործողությունների ծրագրի համար գաղափարներ հավաքագրել անմիջապես քաղաքացիներից: Արդյունքում ապրիլի ավարտին այս գործիքի միջոցով քաղաքացիներից ստացվել էր 18 առաջարկ[19]:

Ընդհանուր առմամբ հավաքագրվեց ավելի քան 70 գրավոր առաջարկ, որից 39-ը՝ պետական մարմիններից, 22-ը՝ ՔՀԿ-ներից և 18-ը՝ անհատներից: Այս առաջարկները քննարկվեցին մի քանի փուլով: Նախ կառավարության աշխատակազմն ընտրեց այն առաջարկները, որոնք համապատասխանում էին ուղեցույցում հայտարարված չափորոշիչներին: Այնուհետև հանդիպումներ կազմակերպվեցին այդ առաջարկների հեղինակների և համապատասխան պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու հետագա մանրամասները և իրագործման հնարավորությունը: Գերատեսչությունների առաջարկները ևս առանձին քննարկվեցին[20,21]:

2016 թ. հունիսի 11-12-ին երրորդ գործողությունների ծրագրի վերաբերյալ աշխատանքային խմբի հանդիպում կազմակերպվեց Աղվերանում՝ ՄԱԶԾ-ի աջակցությամբ: Բացի աշխատանքային խմբի անդամներից, հրավիրված էին նաև տեղական և միջազգային այլ կազմակերպությունների և պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ: Մասնակիցների շարքում էին նրանք, ում ներկայացրած առաջարկները կառավարության աշխատանքային թիմն ընտրել էր որպես նախապես հայտարարված պահանջներին համապատասխանող: Առաջարկները քննարկելու և ընտրելու համար մասնակիցները բաժանվեցին երկու ենթախմբի (քաղաքացիական հասարակության և պետական մարմինների ներկայացուցիչներ): Այնուհետև այս խմբերի ընտրած ցուցակները (shortlist) համեմատվեցին, և այն առաջարկները, որոնք երկու ցուցակներում էլ տեղ էին գտել, ընդգրկվեցին վերջնական ցուցակում: Ապա քննարկվեցին միայն մեկ խմբի ցուցակում ընդգրկված առաջարկները, որոնցից մի քանիսն ի վերջո ներառվեցին ընդհանուր ցուցակում[22]: Ընդհանուր առմամբ, քննարկված մոտ 70 առաջարկներից գործողությունների երրորդ ծրագրի մեջ ներառվեց 8 հանձնառություն: Թեև վերջնական նախագիծը պատրաստվել է կառավարության աշխատակազմի կողմից, քաղաքացիական հասարակության ձայնը հաշվի է առնվել, ավելին, Աղվերանի աշխատաժողովում ՔՀԿ-ները կարող էին վետո դնել այն հանձնառության վրա, որը չէին ցանկանում ներառել[23], ինչպես նաև փոփոխություններ առաջարկել ընդգրկված հանձնառությունների բովանդակության վերաբերյալ:

Գործողությունների ծրագրի նախագծի վերջնական տարբերակը 2016 թ. հուլիսի 18-ին տեղադրվեց www.ogp.am կայքում՝ հանրության մեկնաբանությունները ստանալու նպատակով, որի համար երեք օր նախատեսվեց[24:] Սակայն այս ժամանակահատվածում կառավարությունը որևէ մեկնաբանություն չի ստացել: Գործողությունների երրորդ ծրագրի հետ մեկտեղ՝ կառավարության պաշտոնական կայքում տեղադրվել է նաև առաջարկների

ամփոփաթերթը, որտեղ տեղեկություն է ներկայացված յուրաքանչյուր առաջարկի ընդունման կամ մերժման մասին, ներառյալ մերժման պատճառը[25]:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նշում են, որ գործողությունների երկրորդ ծրագրի համեմատ՝ երրորդ ծրագրում ՔՀԿ-ների ներդրումը քիչ նշանակալի էր: Ի տարբերություն գործողությունների երկրորդ ծրագրի մշակման գործընթացի, երբ դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ծրագրերի շրջանակներում մի շարք ՔՀԿ-ներ քննարկումներ կազմակերպեցին և առաջարկներ հավաքագրեցին ՔՀԿ համայնքից, գործողությունների երրորդ ծրագրի մշակման գործընթացում ՔՀԿ-ները որևէ նախաձեռնող և/կամ առաջատար դեր չեն ստանձնել: ՔՀԿ ներկայացուցչներից մեկի կարծիքով, հանրությունից և ՔՀԿ-ներից ստացած առաջարկների ցածր որակը պայմանավորված է տեղական ՔՀԿ-ների անբավարար ներգրավվածության և իրազեկման գործոններով[26]: Գործողությունների ծրագրի վերջնական տարբերակում ընդգրկված ութ հանձնառություններից յոթն առաջարկել են պետական գերատեսչությունները, թեև դրանցից մի քանիսն արտացոլում են ՔՀԿ-ների տրամադրած առաջարկների ձևափոխված և/կամ համադրված տարբերակները, իսկ մեկ հանձնառություն (հանձնառություն 3) տեղ է գտել ՔՀԿ ներկայացուցչի առաջարկի հիման վրա: Արդյունքում, ՔՀԿ-ները հանձնառությունների նկատմամբ սեփականության զգացում չեն ունեցել, ինչն իր հերթին բացասաբար է ազդել իրականացման գործընթացում նրանց մասնակցության վրա:

Շահագրգիռ կողմերի, մասնավորապես, պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից շատերը նշում են, որ գործողությունների երրորդ ծրագրի մշակման գործընթացը բավականին մասնակցային է եղել և թույլ է տվել ընդգրկել բազմազան տեսակետներ: Սակայն մի քանի ՔՀԿ-ներ, այդ թվում՝ աշխատանքային խմբի անդամ ՔՀԿ-ները, որոնք աշխատում են մարդու իրավունքների, լավ կառավարման և տեղեկատվության մատչելիության ոլորտում, բավարարված չեն գործողությունների ներկա ծրագրի բովանդակությամբ և մասնակցայնությամբ: Նրանք նշում են, որ նախանշված սահմանափակումները թույլ չեն տվել ավելի հավակնոտ հանձնառություններ ներառել: Բացի ԲԿԳ-ի կողմից սահմանված շրջանակից, առկա էին մի շարք այլ սահմանափակումներ, ինչպես, օրինակ, բյուջեի սուղ հնարավորությունները, օրենսդրական նախաձեռնությունների բացառումը, քանի որ դրանք կառավարության իրավասության շրջանակներից դուրս էին, ինչպես նաև հակակոռուպցիոն միջոցառումների բացառումը, քանի որ դրանք պետք է ներառվեին հակակոռուպցիոն ռազմավարության մեջ (օրինակ, պետական գնումների թափանցիկության, իրական շահառուի ստուգման և պետական պաշտոնյաների կողմից արտերկրյա գույքի հայտարարագրման հարցեր): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խորհրդակցական գործընթացը բավականաչափ ընդգրկուն էր և հաղորդակցման բազմազան ուղիներ էր ապահովում, սակայն վերջնական փաստաթղթում քաղաքացիական հասարակության և հանրության առաջարկների ներառումը սահմանափակ էր:

ԲԿԳ մասնակից երկրները պետք է հետևեն ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակման, իրականացման և վերանայման ընթացքում խորհրդակցությունների կազմակերպման վերաբերյալ մի շարք պահանջների: Աղյուսակ 3.3-ն

ամփոփում է Հայաստանի ցուցանիշները 2016-2018 թթ. գործողությունների ծրագրի համար:

Աղյուսակ 3.3: ԲԿԳ ազգային գործընթաց

Իրականացված առանցքային քայլերը՝ 7-ից 6-ը						
Մինչև	**1. Ժամանակացույցի և գործընթացի վերաբերյալ տեղեկության առկայություն**			**2. Նախնական ծանուցում**		
	Ժամանակացույցը և գործընթացի վերաբերյալ տեղեկությն առկա էր առցանց մինչև խորհրդակցություններն սկսելը	Այո	Ոչ	Նախապես ծանուցվել է խորհրդակցությունների մասին	Այո	Ոչ
		✔			✔	
	3. Իրազեկման միջոցառումներ			**4. Բազմազան ուղիներ**		
	Կառավարությունը կազմակերպել է հանրային իրազեկման միջոցառումներ	Այո	Ոչ	4ա. Առցանց խորհրդակցություններ	Այո	Ոչ
		✔			✔	
				4բ. Դեմ առ դեմ խորհրդակցություններ	Այո	Ոչ
					✔	
	5. Փաստաթղթավորում և հետադարձ կապ					
	Առաջարկությունների ամփոփաթերթը հրապարակվել է				Այո	Ոչ
					✔	
Ընթաց-քում	**6. Շահագրգիռ կողմերի կանոնավոր հանդիպումների հարթակ**					
	6ա. Առկա է	Այո	Ոչ	6բ. Հանդիպումները կանոնավոր են	Այո	Ոչ
		✔				✘
Հետո	**7. Կառավարության ինքնագնահատման զեկույց**					
	7ա. Տարեկան ինքնագնահատման զեկույցը հրապարակվել է	Այո	Ոչ	7բ. Զեկույցն առկա է անգլերեն և մայրենի լեզվով	Այո	Ոչ
		✔			✔	
	7գ. Երկու շաբաթ է տրամադրվել զեկույցի վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու համար	Այո	Ոչ	7դ. Զեկույցն անդրադառնում է ԱՀՄ առանցքային առաջարկներին	Այո	Ոչ
		✔			✔	

Աղյուսակ 3.4: Հանրային ազդեցության մակարդակը

ԱՀՄ-ն օգտագործում է «Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի» (IAP2) հանրային մասնակցության գնահատման սանդղակը[27]: Այս սանդղակը ցույց է տալիս գործողությունների ծրագրի բովանդակության վրա հանրության ազդեցության հնարավոր մակարդակը: ԲԿԳ-ի սկզբունքներին հավատարիմ լինելով՝ երկրները պետք է ձգտեն «համագործակցության» մակարդակի:

Հանրային ազդեցության մակարդակը		Ծրագրի մշակման ընթացքում	Ծրագրի իրականացման ընթացքում
Լիազորում	Կառավարությունը որոշումներն ընդունելու լիազորությունը փոխանցել էր հանրության ներկայացուցիչներին		
Համագործակցություն	Առկա էր շարունակական երկխոսություն, ԵՎ հանրությունը մասնակցել է օրակարգի սահմանմանը		
Ներգրավում	Կառավարությունն արձագանքում էր հանրության տրամադրած առաջարկներին	✔	
Խորհրդակցում	Հանրությունը կարող էր մասնակցություն ունենալ		✔
Տեղեկացում	Կառավարությունը գործողությունների ծրագրի մասին տեղեկացրել է հանրությանը		
Առկա չէ	Առկա չէ		

3.4 Իրականացման ընթացքում խորհրդակցության կազմակերպում

Որպես ԲԿԳ գործընթացի մասնակցության պայման, պետությունները պարտավորվում են կազմավորել մի հարթակ, որի միջոցով հնարավորություն կընձեռվի կանոնավոր հիմքով բազմաշահառու խորհրդակցություն կազմակերպել ԲԿԳ իրականացման գործընթացի վերաբերյալ: Սա կարող է լինել արդեն առկա կամ նոր հարթակ: Այս ենթաբաժնում ամփոփ կներկայացվեն համապատասխան տեղեկությունները:

Ինչպես նշվեց 3.1 ենթաբաժնում, գործողությունների երրորդ ծրագրի բազմաշահառու աշխատանքային խմբի կազմը հաստատվել է 2016 թ. դեկտեմբերին՝ ՀՀ վարչապետի որոշմամբ[28]: Աշխատանքային խմբի կազմի վերաբերյալ պաշտոնական որոշման ուշացումը պայմանավորված էր 2016 թ. սեպտեմբերին վարչապետի հրաժարականով և կաբինետի հետագա փոփոխությամբ: Խումբը բաղկացած է 26 անդամներից, որոնց թվում՝ 15 ներկայացուցիչ կառավարության աշխատակազմից և նախարարություններից, քաղաքացիական հասարակության տասը և մասնավոր հատվածի մեկ ներկայացուցիչ: Մասնակիցների մեծ մասը ներգրավված էր աշխատանքային խմբի նախորդ կազմում, իսկ երկու ՀԿ-ների, մեկ ընկերության ու ևս երկու նախարարությունների ներկայացուցիչներ ներգրավվեցին գործողությունների երրորդ ծրագրով ստանձնած հանձնառություններում իրենց մասնակցության հիման վրա: Աշխատանքային խումբը բաց է անդամակցելու ցանկացող ՔՀԿ-ների համար, որոնք կարող են ներգրավվել իրենց դիմումի հիման վրա: Աշխատանքային խմբում ներգրավվելու համար որևէ բաց մրցույթ կամ հայտարարություն չի եղել: Ախ անդամները գործողությունների ծրագրի քննարկումներին ակտիվորեն մասնակցած և ծրագրի ոլորտներում գործող

կազմակերպություններին առաջարկել են ներգրավվել խմբում, և ոմանք համաձայնել են: Աշխատանքային խմբում ներկայացված ՀԿ-ները հիմնականում գործունեություն են ծավալում մարդու իրավունքների, հակակոռուպցիոն, սոցիալական քաղաքականության և տեղեկատվության ազատության ոլորտներում: Աշխատանքային խմբի երկու անդամներ մարզային ՀԿ-ների ղեկավարներ են, իսկ մյուսները՝ երևանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՀԿ-ների ներկայացուցիչների շրջանում ըստ սեռի բաշխվածությունը հավասար է, իսկ կառավարության 15 ներկայացուցիչներից կանայք 5-ն են, ինչը, ըստ էության, արտացոլում է բարձր օղակի պաշտոնյաների սեռային համամասնությունը[29]:

Աշխատանքային խումբը ներքին ընթացակարգեր և հանդիպումների սահմանված պարբերականություն չունի: Ախ հանդիպումները հրավիրում է կառավարության աշխատակազմի ԲԿԳ համակարգողը, իսկ կոնտակտային պատասխանատուն հրավերն ուղարկում է Ախ անդամներին՝ օրակարգի նախագծի հետ, որի վերաբերյալ խնդրում է առաջարկներ ներկայացնել: Հանդիպումը նախագահում է ԲԿԳ համակարգողը, իսկ հանդիպումից հետո կոնտակտային պատասխանատուն կազմում է արձանագրությունը և ուղարկում Ախ անդամներին՝ մեկնաբանությունների համար: Հանդիպման ընթացքում հանձնառությունների պատասխանատուները ներկայացնում են իրականացման ընթացքը և պատասխանում Ախ անդամների հարցերին: Օրակարգում կարող են ներառվել նաև գործողությունների հաջորդ ծրագրի մշակման պլանավորումը, ներքին ընթացակարգի նախագծի քննարկումը, ինչպես նաև գործողությունների ծրագրի և Ախ ընթացակարգերի հետ կապված այլ ընթացիկ հարցեր: Զեկույցը գրելու պահի դրությամբ գործողությունների երրորդ ծրագրի իրականացման փուլում Ախ հանդիպումները տեղի էին ունեցել 2016 թ. նոյեմբերի 16-ին, 2017 թ. մայիսի 16-ին և 2017 թ. հոկտեմբերի 30-ին, ինչը չի կարող կանոնավոր համարվել՝ հաշվի առնելով, որ ԲԿԳ ուղեցույցը խորհուրդ է տալիս հանդիպում կազմակերպել յուրաքանչյուր երկու ամիսը մեկ: Ընդհանուր առմամբ, հանդիպումները բաց են դիտորդների համար, սակայն, քանի որ հանդիպումները տեղի են ունենում կառավարության շենքում, մտնելու թույլտվության համար անհրաժեշտ է նախապես դիմում ներկայացնել: Գործնականում կառավարության աշխատակազմը երբևէ նման դիմում չի ստացել: Հանդիպման ծանուցումն ուղարկվում է աշխատանքային խմբի անդամներին, իսկ հանդիպման մասին տեղեկությունը նախապես չի հրապարակվում: Հրավիրվում են նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ դիտորդի կարգավիճակում հանդիպումներին մասնակցելու համար[30]:

Աշխատանքային խմբի հանդիպումների արձանագրությունները, որպես կանոն, տեղադրվում են www.ogp.am կայքի «Նորություններ» բաժնում և մատչելի են հանրության համար: Կայքում առկա է նաև մեկնաբանությունների հնարավորություն: Արձանագրությունները տեղեկություններ են ներառում գործողությունների ծրագրի հանձնառությունների իրականացման ընթացքի վերաբերյալ, որը հանդիպումների հիմնական թեմաներից է: ԱՀՄ հետազոտողը մասնակցել է 2017 թ. հոկտեմբերի 30-ի հանդիպմանը, որը նվիրված էր Ախ աշխատակարգի նախագծի քննարկմանը:

Հանդիպումներից զատ, աշխատանքային խումբը հաղորդակցվում է առցանց՝ անհրաժեշտության դեպքում զանազան հարցեր քննարկելու համար[31]: Այնուամենայնիվ, 2017 թ. մայիսի աշխատանքային խմբի հանդիպումից բացի, հարցազրույցներին մասնակցած ՔՀԿ ներկայացուցիչները չմտաբերեցին որևէ առցանց հաղորդակցություն, որի ընթացքում նրանք տեղեկություն են ստացել հանձնառությունների իրականացման գործընթացի մասին: Գործողությունների երրորդ ծրագրի իրականացման ընթացքում առցանց հաղորդակցությունը բացառապես հանդիպումների կազմակերպչական հարցերի և խմբի ներքին կանոնակարգերի մշակման վերաբերյալ է եղել: Մյուս կողմից, կառավարության աշխատակազմի ներկայացուցիչները նշում են, որ ՔՀԿ համայնքից ավելի շատ նախաձեռնություն և ակտիվ մոտեցում են ակնկալում, և կառավարությունը միշտ բաց է եղել հանրության մտահոգությունները քննարկելու և ՔՀԿ-ներից առաջարկներ ստանալու համար[32]: Որոշ հանձնառությունների կատարման ընթացքում պատասխանատու մարմինները խորհրդակցել են հանձնառության շահագրգիռ ՔՀԿ-ների հետ հանձնառությունների կատարմանն առնչվող հարցերի շուրջ:

Ի լրումն Ախ հանդիպումների, 2017 թ. հունվարի 25-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ԲԿԳ աշխատաժողով էր կազմակերպել «5-ամյա համագործակցություն կառավարության և քաղաքացիական հասարակության միջև» խորագրով: Միջոցառման ընթացքում կառավարության աշխատակազմը և աշխատանքային խմբի մյուս անդամները ներկայացրել են ԲԿԳ նախաձեռնությունը, հիմնական ձեռքբերումներն ու հետագա քայլերը և քննարկում ծավալել քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի հետ[33]:

3.5 Ինքնագնահատման զեկույց

ԲԿԳ կառավարման սկզբունքները պահանջում են, որ մասնակից երկրները իրագործման առաջին տարվա ավարտից երեք ամիս անց ինքնագնահատման զեկույց ներկայացնեն: Ինքնագնահատման զեկույցը պետք է երկու շաբաթվա ընթացքում բաց լինի հանրության մեկնաբանությունների համար: Այս ենթաբաժինը անդրադառնում է այդ պահանջների կատարմանը և զեկույցի բովանդակությանը:

Կառավարության ինքնագնահատման զեկույցը մշակել է կառավարության աշխատակազմը և սեպտեմբերի 11-ին տեղադրել www.ogp.am կայքում՝ հայերեն լեզվով: Մեկնաբանությունների համար տրամադրվել է երկշաբաթյա ժամկետ[34]: Զեկույցն ուղարկվել է նաև աշխատանքային խմբի անդամներին՝ տարածելու խնդրանքով, ինչպես նաև տեղադրվել ԲԿԳ Հայաստան ֆեյսբուքյան էջում[35], որն ունի 535 հետևորդ: Նշված ժամկետում որևէ մեկնաբանություն չի ստացվել: ԱՀՄ հետազոտողի իրականացրած հարցազրույցների և ֆոկուս խմբերի ընթացքում Ախ-ին չանդամակցող ՔՀԿ-ների մեծ մասը նշել է, որ տեղյակ չէր զեկույցի մասին:

Զեկույցը տեղեկություններ է ներառում գործողությունների ծրագրի մշակման ու իրականացման ընթացքում կազմակերպված քննակումների և հանձնառությունների կատարման կարգավիճակի մասին: Զեկույցում երեք հանձնառություն գնահատվել է որպես ամբողջովին կատարված, երեքը՝ զգալի, և երկուսը՝ որոշակի չափով կատարված: Հանձնառությունների և դրանց մեջ

ներառված գործողությունների կատարման հիմնավորումները մասամբ են ներկայացված, հիմնականում իրավական ակտերի և համապատասխան կայքերի հղումների տեսքով: Որոշ տեղեկություններ են տրամադրված մարտահրավերների վերաբերյալ, որոնք մասնավորապես կապված են իրազեկման խնդիրների հետ, ինչպես նաև գործողությունների նախորդ ծրագրերի շրջանակներում ստանձնած հանձնառությունների հետագա ընթացքի վերաբերյալ: Հակիրճ տեքստով ներկայացված են նաև հաջորդ քայլերը՝ նշելով աշխատանքային խմբի ներքին ընթացակարգերի մշակման և իրազեկման միջոցառումները շարունակելու պլանների մասին:

3.6 ԱՀՄ նախորդ զեկույցի առաջարկների ներառումը

Աղյուսակ 3.5: ԱՀՄ նախորդ զեկույցի առանցքային առաջարկները

	Առաջարկ	Արձագանք է տրամադրվել	Ներառվել է գործողությունների հաջորդ ծրագրում
1	Կառավարությունը կարող է ԲԿԳ գործընթացը խթանել հստակ նախագծված հանրային իրազեկման արշավի միջոցով՝ օգտագործելով տպագիր մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության հնարավորությունները և ընդգրկելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և քաղաքացիների լայն շրջանակ:	✔	✘
2	Մարզային ՔՀԿ-ների ավելի լայն շրջանակ ներգրավելու համար կառավարությունը կարող է հանդիպումներ կազմակերպել և ԲԿԳ աշխատանքային խմբի որոշ նիստեր անցկացնել մայրաքաղաքից դուրս՝ հավասարաչափ ծածկելով երկրի ողջ տարածքը:	✔	✔
3	Գործողությունների ծրագիրը մշակելու և իրականացնելու գործում նշանակալի մասնակցություն ապահովելու համար կառավարությունը պետք է ԲԿԳ գործողությունների ծրագրի միջոցառումների ժամանակացույց պատրաստի և ներկայացնի հանրությանը, որը մշակման և իրականացման ավելի թափանցիկ ու մասնակցային գործընթաց կապահովի:	✔	✔

4	Կառավարությունը կարող է ավելի համապարփակ մոտեցում ցուցաբերել՝ ստանձնելով այնպիսի հանձնառություններ, որոնք առավել ընդգրկուն բարեփոխումներ կապահովեն պետական գնումների և ընտրական գործընթացների ոլորտներում:	✔	✘
5	Անհրաժեշտ է ապահովել, որ գործողությունների ծրագրի յուրաքանչյուր ցիկլի հանձնառություններն իրականացվեն ըստ ժամանակացույցի, որպեսզի հետաձգումներ, իսկ չիրականացման դեպքում՝ հանձառությունների կորուստ տեղի չունենա: Այս առումով կառավարությունը պետք է նորից ստանձնի ԲԿԳ գործողությունների առաջին ծրագրի շրջանակներում ստանձնած ծրագրային բյուջետավորման ներդրման վերաբերյալ հանձնառության իրականացումը մինչև 2018 թ.:	✘	✘

ԱՀՄ հինգ առաջարկներից չորսին կառավարությունն անդրադարձել է ինքնագնահատման զեկույցում, իսկ երկուսը ներառել գործողությունների ծրագրում:

Ըստ ինքնագնահատման զեկույցի՝ գործողությունների երրորդ ծրագրի մշակման ընթացքում իրազեկման արշավի վերաբերյալ առաջարկն իրականացվել է: Մարզային մի շարք հանդիպումներ են կազմակերպվել, հեռուստատեսային հաղորդումներ են նկարահանվել և հեռարձակվել «Երկիր մեդիա» հեռուստաալիքով[36]: Այնուամենայնիվ, գործողությունների երրորդ ծրագրի մշակման ժամանակացույցում իրազեկման վերաբերյալ կետը ներառելուց զատ, իրազեկման արշավի որևէ համակարգված ծրագիր չի մշակվել: Հաշվի առնելով աշխատանքային խմբի անդամ չհանդիսացող շահագրգիռ կողմերի արձագանքները[37]՝ ԱՀՄ հետազոտողը կարծում է, որ քարոզարշավը բավարար չէր շահագրգիռ կողմերի լայն շրջանակ ընդգրկելու համար:

ԲԿԳ մասին հեռուստատեսային հաղորդումը մշակել են ՀԿ-ները՝ ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորած «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակներում: Իրականացման փուլում «Երկիր մեդիա» հեռուստաալիքի հետ համագործակցությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» (ԻԱԿ) 2016 թ. 10-րոպեանոց տեսահոլովակներ է պատրաստել ԲԿԳ հանձնառությունների ընթացքի վերաբերյալ՝ «Քաղաքացիական հասարակություն՝ բաց և հաշվետու կառավարման համար» ԱՄՆ-ի դեսպանատան ֆինանսավորած ծրագրի շրջանակներում[38]: Սակայն ԲԿԳ

գործընթացների վերաբերյալ որևէ լուսաբանում չի եղել հանրային հեռուստատեսությամբ, տպագիր լրատվամիջոցներում կամ որևէ ռադիոհաղորդման եթերում: ԲԿԳ կայքը[39] և ֆեյսբուքյան էջը[40] հանդիսանում են գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրները: Այս գործիքները ստեղծվել են ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորած ծրագրի շրջանակներում և ներկայումս կառավարվում են ԻԱԿ-ի կողմից՝ կամավոր հիմունքներով:

ԲԿԳ կոնտակտային պատասխանատուն նշել է, որ ԲԿԳ թիմը լավ է գիտակցում իրազեկման մարտահրավերները, և կառավարության աշխատակազմում ներկայումս քննարկվում են հեռուստատեսությամբ լուսաբանելու և գործողությունների ծրագիրն իրականացնելու վերաբերյալ մարզային հանդիպումներ կազմակերպելու հնարավորությունները: Ինչ վերաբերում է ՀԿ ներկայացուցիչների կողմից ԲԿԳ կայքի և ֆեյսբուքյան էջի կառավարման հարցին, ԲԿԳ աշխատանքային թիմը կարծում է, որ այս մոտեցումն արդյունավետ է, քանի որ այն թույլ է տալիս քննադատական հոդվածներ և մեկնաբանություններ տեղադրել այդ հարթակներում[41]:

ԱՀՄ զեկույցի երկրորդ առաջարկն աշխատանքային թիմն իրագործել է գործողությունների ծրագրի մշակման փուլում Հայաստանի հինգ մարզերում հանդիպումներ կազմակերպելու միջոցով, որը, սակայն, երկրի տարածքում հավասար ծածկույթ չի ապահովել, քանի որ մյուս հինգ մարզերը ներգրավված չեն եղել: Այնուամենայնիվ, գաղափարների քրաուդսորսինգի համար ստեղծված էլեկտրոնային գործիքը հնարավորություն է տվել քաղաքացիներին իրենց ներդրումն ունենալ անկախ բնակության վայրից:

Իրագործվել է նաև ԱՀՄ զեկույցի երրորդ առաջարկը: 2016 թ. փետրվարին ԲԿԳ միջոցառումների ժամանակացույցը տեղադրվել է www.ogp.am կայքում[42]՝ հնարավորություն ընձեռելով գործողությունների ծրագիրն ավելի թափանցիկ և մասնակցային մշակելու և իրականացնելու համար: Սակայն ժամանակացույցի մասին տեղեկության տարածումը բավարար չի եղել հանրության լայն խմբերի ներգրավելու համար:

Չորրորդ առաջարկը վերաբերում էր ծրագրի հանձնառությունների շրջանակին: ԱՀՄ հետազոտողն առաջարկել էր ներառել ավելի համապարփակ բարեփոխումներ պետական գնումների և ընտրական գործընթացների ոլորտում: Կառավարության ինքնագնահատման զեկույցում նշվել է, որ այդ բարեփոխումներն արդեն իսկ ներառվել են գործողությունների նախորդ ծրագրերում, օրինակ՝ պետական գնումների վերաբերյալ հանձնառությունը[43]: Հարցազրույցներին մասնակցած շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից մի քանիսը կարծիք են հայտնել, որ գործողությունների երրորդ ծրագրի հանձնառությունները բավարար հավակնոտ չեն և չեն անդրադառնում այնպիսի առաջնահերթ ոլորտներին, ինչպիսիք են կոռուպցիայի դեմ պայքարը, տեղեկատվության ազատությունը, տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումները և այլն: ՔՀԿ-ների բազմաթիվ առաջարկներ մերժվել են այն հիմնավորմամբ, որ դրանք օրենսդրական փոփոխություններ են պահանջում և/կամ արդեն իսկ իրականացվում են այլ ծրագրերի շրջանակներում[44]: Այսպիսով, ԱՀՄ հետազոտողը եզրակացնում է, որ այս առաջարկը բավարար կերպով չի ներառվել գործողությունների երրորդ ծրագրում:

ԱՀՄ հետազոտողի հինգերորդ առաջարկը հանձնառությունների համար սահմանված ժամկետներին հետևելու մասին էր (որպեսզի դրանք չկորչեն անխուսափելի ուշացումների պատճառով): Առաջարկվել էր նաև նորից ստանձնել գործողությունների առաջին ծրագրում ներառված ծրագրային բյուջետավորման հանձնառությունը: Այս առաջարկի վերաբերյալ ինքնագնահատման զեկույցում արձագանք չի տրամադրվել: Թեև գործողությունների երրորդ ծրագրում յուրաքանչյուր հանձնառության համար հստակ ժամկետներ են սահմանված, այս զեկույցը ցույց է տալիս, որ իրականացման գործընթացում ձգձգումներ կան, իսկ ծրագրային բյուջետավորման հանձնառությունը գործողությունների երրորդ ծրագրում չի ներառվել: Այսպիսով, այս առաջարկը չի իրականացվել:

---

[1] Քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից, 11.08.2016, https://www.e-gov.am/protocols/item/658/

[2] ՀՀ վարչապետի թիվ 1206-Ա որոշումը համակարգող նշանակելու և աշխատանքային խումբ ստեղծելու մասին, 16.12.2016, https://www.e-gov.am/decrees/item/16513/

[3] ՀՀ վարչապետի թիվ 828-Ա որոշումը ՀՀ վարչապետի 2016 թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1206-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, https://www.e-gov.am/decrees/item/17379/

[4] ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, Պետական գույքի կառավարման վարչություն, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ պետական եկամուտների կոմիտե

[5] ՀՀ գլխավոր դատախազություն

[6] Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, Գնումների աջակցության կենտրոն ՊՈԱԿ (ներկայումս լուծարվել է), Հայաստանի ազգային ակադեմիա, ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ

[7] Երևանի քաղաքապետարան

[8] ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Պետական գույքի կառավարման վարչություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե

[9] Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ

[10] Վահե Ջիլավյան, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 17
[11] ԲԿԳ Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի (2016-2018) ինքնագնահատման միջանկյալ զեկույց, http://ogp.am/u_files/file/Armenia_MID-TERM_report_3AParm.doc
[12] ԲԿԳ հայաստանյան գործողությունների երրորդ ծրագրի աշխատանքները կանոնակարգող աշխատանքային խումբ, http://ogp.am/hy/working-group/
[13] 2016-2018 (երրորդ) գործողությունների ծրագրի մշակման ժամանակացույց, http://ogp.am/u_files/file/2016_2018APDev_Timeline.pdf
[14] Կառավարությունը հրապարակել է ԲԿԳ Գործողությունների 3-րդ ծրագրի առաջարկությունների չափորոշիչները, 15.03.2016, http://ogp.am/hy/news/item/2016/03/15/manual_commitments/
[15] Արամ Ասատրյան (ՀՀ կառավարության աշխատակազմի նախկին ներկայացուցիչ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. դեկտեմբերի 8
[16] ԲԿԳ Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի (2016-2018) ինքնագնահատման միջանկյալ զեկույց, http://ogp.am/u_files/file/Armenia_MID-TERM_report_3AParm.doc
[17] Կառավարությունը սկսում է մարզային հանդիպումները, 22.04.2016, http://www.ogp.am/hy/news/item/2016/04/22/regions/
[18] ԲԿԳ գործողությունների երրորդ ծրագիր. գաղափարների մրցույթ, 13.04.2016, http://ogp.am/hy/news/item/2016/04/13/3AP_contest/
[19] Մարինա Մխիթարյան, Արամ Ասատրյան, Մուրացկաններն ու առցանց քաղաքացիները. քրաուդսորսինգի միջոցով քաղաքականության կերտումը Հայաստանում, 02.08.2016, https://www.opengovpartnership.org/stories/beggars-and-netizens-crowdsourcing-policy-making-armenia
[20] Արամ Ասատրյան (ՀՀ կառավարության աշխատակազմի նախկին ներկայացուցիչ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. դեկտեմբերի 8
[21] ԲԿԳ Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի (2016-2018) ինքնագնահատման միջանկյալ զեկույց, http://ogp.am/u_files/file/Armenia_MID-TERM_report_3AParm.doc
[22] Վահե Ջիլավյան, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 17
[23] Մարինա Մխիթարյան (ՄԱՀԾ «Կոլբա» լաբ.), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 8
[24] Հայաստանի ԲԿԳ գործողությունների երրորդ ծրագրի նախագիծը, http://www.ogp.am/hy/news/item/2016/07/18/3rdAP/
[25] Ամփոփաթերթ ԲԿԳ Հայաստան գործողությունների երրորդ ծրագրում ներառելու նպատակով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ, http://www.gov.am/u_files/file/OGP/ampopatert.pdf
[26] Թամարա Աբրահամյան («Արազա» ՀԿ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. դեկտեմբերի 7
[27] IAP2 հանրային մասնակցության գնահատման սանդղակ, http://c.ymcdn.com/sites/www.iap2.org/resource/resmgr/foundations_course/IAP2_P2_Spectrum_FINAL.pdf
[28] ՀՀ վարչապետի թիվ 1206-Ա որոշումը համակարգող նշանակելու և աշխատանքային խումբ ստեղծելու մասին, 16.12.2016, https://www.e-gov.am/decrees/item/16513/
[29] Ըստ Ասիական զարգացման բանկի «Հայաստանի գենդերային ուսումնասիրություն» 2015 թ. զեկույցի՝ Հայաստանում կանայք կազմում են բարձր օղակի հանրային ծառայողների 13,7 տոկոսը (տե՛ս https://www.adb.org/sites/default/files/institutional-document/162152/arm-country-gender-assessment.pdf, էջ 35)
[30] Վահե Ջիլավյան, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 17

[31] Վահե Ջիլավյան, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 17
[32] Վահե Ջիլավյան, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 17
[33] 5-ամյա համագործակցություն կառավարության և քաղաքացիական հասարակության միջև, 26.01.2017, http://ogp.am/hy/news/item/2017/01/26/5years_OGP/
[34] Հանրային քննարկում. Կառավարության ինքնագնահատման միջնաժամկետ զեկույցի նախագիծ, http://ogp.am/hy/news/item/2017/09/11/Gov_self/
[35] Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան ֆեյսբուքյան էջի հրապարակում, https://web.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/1076356989133774
[36] Տե՛ս, օրինակ, https://www.youtube.com/watch?v=Sj6DVVsI0gs, https://www.youtube.com/watch?v=jcey0IBDsAg, https://www.youtube.com/watch?v=TtD_JP4XzOA,
[37] Ֆոկուս-խմբային քննարկում Երևանում, 2017 թ. հոկտեմբերի 26
[38] Տե՛ս, օրինակ, https://www.youtube.com/watch?v=k2eZLyttguY, https://www.youtube.com/watch?v=U9qhud4WnZ0, https://www.youtube.com/watch?v=AHNH7nNK3I8
[39] ԲԿԳ Հայաստան կայք, www.ogp.am
[40] ԲԿԳ Հայաստան ֆեյսբուքյան էջ, https://web.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/?fref=ts
[41] Վահե Ջիլավյան, Լիլյա Աֆրիկյան (ՀՀ կառավարության աշխատակազմ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 17
[42] 2016-2018 (երրորդ) գործողությունների ծրագրի մշակման ժամանակացույց, http://ogp.am/u_files/file/2016_2018APDev_Timeline.pdf
[43] ԲԿԳ Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի (2016-2018) ինքնագնահատման միջանկյալ զեկույց, http://ogp.am/u_files/file/Armenia_MID-TERM_report_3AParm.doc
[44] Ամփոփաթերթ ԲԿԳ Հայաստան գործողությունների երրորդ ծրագրում ներառելու նպատակով ներկայացված առաջարկությունների վերաբերյալ, http://www.gov.am/u_files/file/OGP/ampopatert.pdf

IV. Հանձնառությունների նկարագիրը

ԲԿԳ մասնակից պետությունները պետք է ԲԿԳ գործողությունների ծրագիր մշակեն, որը կոնկրետ հանձնառություններ է ներառում առաջիկա երկու տարվա համար: ԲԿԳ շրջանակներում գործողությունների իրենց ծրագրի մշակման գործընթացը պետությունները սկսում են բաց կառավարման բնագավառում առկա գործընթացների վերաբերյալ տեղեկույթի, ներառյալ՝ ռազմավարությունների ու ընթացիկ ծրագրերի հրապարակումից:

Հանձնառությունները պետք է արտացոլեն տվյալ երկրի առանձնահատկությունները և խնդիրները: ԲԿԳ հանձնառությունները պետք է նաև համապատասխանեն ԲԿԳ արժեքներին, որոնք ամրագրված են ԲԿԳ կանոնադրության հիմնադրույթներում և ԲԿԳ-ին միացած բոլոր երկրների ստորագրած Բաց կառավարման հայտարարությունում[1]:

Հանձնառությունների չափանիշները

Գիտակցելով, որ բաց կառավարման հանձնառությունների իրականացումը բազմամյա գործընթաց է, պետությունները պետք է ժամկետներ ու չափորոշիչներ սահմանեն իրենց հանձնառությունների համար՝ գործողություններ նախատեսելով յուրաքանչյուր տարվա կտրվածքով: Այս զեկույցը ներկայացնում է իր գործողությունների ծրագրում ընդգրկված բոլոր հանձնառությունները և վերլուծում դրանց իրականացումը ծրագրի առաջին տարվա ընթացքում:

Ստանձնած հանձնառությունները գնահատելիս ԱՀՄ-ն հիմնվում է հետևյալ չափանիշների վրա:

- **Կոնկրետություն՝** այս չափանիշով գնահատվում է յուրաքանչյուր հանձնառության կոնկրետությունն ու չափելիությունը: Հնարավոր տարբերակներն են.
    - **Բարձր՝** հանձնառության տեքստում սահմանված են հստակ, ստուգման ենթակա գործողություններ և հանձնառության նպատակի չափելի արդյունքներ:
    - **Միջին՝** հանձնառության տեքստում սահմանված են օբյեկտիվ ստուգման ենթակա գործողություններ, բայց հանձնառությամբ նախատեսված արդյունքների չափելիությունը կամ համապատասխանությունը նպատակին հստակ չէ:
    - **Ցածր՝** հանձնառության տեքստում սահմանված են գործողություններ, որոնք կարող են ստուգման ենթակա համարվել, սակայն մեկնաբանություն են պահանջում ընթերցողի կողմից՝ հասկանալու համար, թե գործողություններն ինչ են նախատեսում և որոնք են լինելու արդյունքները:
    - **Առկա չէ՝** հանձնառության տեքստում որևէ չափելի գործողություն, արդյունք կամ միջանկյալ նպատակ չի սահմանված:
- **Համապատասխանություն՝** այս չափանիշով գնահատվում է հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին: Հիմք ընդունելով հանձնառության տեքստը, որն առկա է գործողությունների

ծրագրի մեջ, համապատասխանությունը սահմանվում է հետևյալ ուղենիշների օգնությամբ.

- **Տեղեկույթի մատչելիություն՝** արդյո՞ք կառավարությունը լրացուցիչ տեղեկություն է բացահայտում կամ բարելավում հանրությանը հասանելի տեղեկույթի որակը:
- **Հանրային մասնակցություն՝** արդյո՞ք կառավարությունը ստեղծում կամ բարելավում է հանրության կողմից որոշումների կայացմանը մասնակցելու կամ ներազդելու հնարավորությունները կամ կարողությունները:
- **Հանրության առջև հաշվետվողականություն՝** արդյո՞ք կառավարությունը նոր հնարավորություններ է ստեղծում կամ բարելավում առկա հնարավորությունները՝ պաշտոնյաներին իրենց գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու համար:
- **Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության՝** արդյո՞ք ԲԿԳ մյուս երեք արժեքներից որևէ մեկի հետ օգտագործվում է տեխնոլոգիական նորարարություն՝ թափանցիկությունը կամ հաշվետվողականությունը բարելավելու նպատակով2:

- **Պոտենցիալ ազդեցություն՝** այս չափանիշով գնահատվում է հանձնառության *պոտենցիալ* ազդեցությունը՝ ըստ շարադրվածի իրականացման դեպքում: ԱՀՄ հետազոտողն ուսումնասիրում է գործողությունների ծրագրի տեքստը, որպեսզի կարողանա՝
  - հասկանալ, թե որն է այն սոցիալական, տնտեսական, քաղաքական կամ բնապահպանական խնդիրը, որն ընկած է հանձնառության հիմքում,
  - սահմանել ստատուս քվոն գործողությունների ծրագրի մեկնարկի դրությամբ, և
  - գնահատել, թե իրագործման դեպքում հանձնառությունն ինչպիսի ազդեցություն կունենա իրավիճակի վրա և ինչ չափով կլուծի վերոնշյալ խնդիրը:

Աստղանշված հանձնառությունները համարվում են ԲԿԳ օրինակելի հանձնառություններ: Աստղ ստանալու համար հանձնառությունը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների.

- Աստղանշված հանձնառությունը պետք է կոնկրետության «միջին» կամ «բարձր» աստիճան ունենա: Հանձնառությունը պետք է հստակ ձևակերպված գործողություններ և քայլեր ներառի, որպեսզի հնարավոր լինի դատել դրա հնարավոր ազդեցության վերաբերյալ:
- Հանձնառության ձևակերպումից պետք է պարզ երևա այդ հանձնառության համապատասխանությունը բաց կառավարման սկզբունքներին: Մասնավորապես, այն պետք է վերաբերի տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության կամ հաշվետվողականության ԲԿԳ արժեքներից առնվազն մեկին:
- Լիարժեք իրագործման դեպքում հանձնառությունը «փոխակերպող» պոտենցիալ ազդեցություն պետք է ունենա3:
- Գործողությունների ծրագրի իրականացման ժամանակահատվածում պետությունը պետք է զգալի առաջընթաց գրանցի այս հանձնառության

իրականացման գործում՝ ստանալով կատարման «զգալի» կամ «ամբողջովին» գնահատական:

Այս չափանիշներից ելնելով՝ Հայաստանի գործողությունների ծրագիրը աստղանշված հանձնառություններ չունի:

Այս բաժնի աղյուսակները ԱՀՄ միջանկյալ զեկույցի համար հավաքագրված տվյալների ահռելի ծավալի ընդամենը մի մասն են ներկայացնում: Հայաստանի վերաբերյալ տվյալների ամբողջական պատկերը տեսնելու համար այցելեք OGP Explorer[4]:

Հանձնառությունների ընդհանուր նկարագիրը

Հայաստանի գործողությունների երրորդ ծրագիրը ներառում է ութ հանձնառություն, որոնք խմբավորվել են երեք թեմատիկ խմբերում՝ թափանցիկության և հաշվետվողականության ապահովում (հանձնառություն 1-4), տեղեկույթի մատչելիության խթանում (հանձնառություն 5-7) և հանրային օրինավորության ամրապնդում (հանձնառություն 8): Այս հանձնառությունները վերաբերում են այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են պետական բյուջեն, տեղական ինքնակառավարումը, սոցիալական ծառայությունները, լիցենզավորումը և պետական պաշտոնյաների հաշվետվողականությունը: Հանձնառություններից մեկը, որը վերաբերում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի հրապարակմանը (հանձնառություն 4) գործողությունների երկրորդ ծրագրում ընդգրկված հանձնառության շարունակությունն է: Համայնքային որոշումների հարթակի վերաբերյալ հանձնառությունն ուղղված է տեղական իշխանությունների թափանցիկությանը, որին անդրադառնում էր նաև գործողությունների նախորդ ծրագիրը: Մյուս հանձնառությունները նոր նախաձեռնություններ են ներառում, որոնք հիմնականում վերաբերում են տեղեկույթի մատչելիությանը և էլեկտրոնային կառավարման խնդիրներին: «Մեկ պատուհան բանակում» հանձնառության (հանձնառություն 8) համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին հստակ չէ, քանի որ այն հիմնականում վերաբերում է վարչարարության հարցերին:

Թեմատիկ բաշխում

Այս զեկույցում գործողությունների երրորդ ծրագրի հանձնառությունները ներկայացված են նույն հաջորդականությամբ և նկարագրերով, ինչպես սահմանված էր գործողությունների ծրագրի փաստաթղթում:

---

[1] Բաց կառավարման գործընկերություն. կառավարման կանոնադրություն, 2012 թ. հունիս (վերանայված 2014 թ. մարտին և 2015 թ. ապրիլին), https://www.opengovpartnership.org/sites/default/files/attachments/OGP_Articles-Gov_Apr-21-2015.pdf

[2] ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկ, առկա է՝ http://www.opengovpartnership.org/sites/default/files/IRM-Procedures-Manual-v3_July-2016.docx

[3] Փորձագետների միջազգային խումբը 2015 թ. փոփոխել է այս չափանիշը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելի՛ր http://www.opengovpartnership.org/node/5919

[4] OGP Explorer: bit.ly/1KE2WII

1. Պաշտոնյաների գործուղումների թափանցիկություն

Հանձնառության ձևակերպումը
Անվանումը՝ Պատասխանատու գործուղում. Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց արտասահման գործուղումների թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:

Կստեղծվի «բաց տվյալների» սկզբունքի հիման վրա՝ պաշտոնատար անձանց օտարերկրյա պետություն գործուղումների որոշումների և դրանց հաշվետվությունների հրապարակման միասնական հարթակ՝ որոնման հնարավորությամբ: Հիմնական նպատակն Է՝ հանրապետական գործադիր մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կամ պաշտոնատար այլ անձանց գործուղելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման արդյունավետության և հաշվետվողականության բարձրացում, ՀՀ կառավարության գործունեության թափանցիկության բարելավում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Պաշտոնատար անձանց արտասահման գործուղումների թույլտվությունների կարգը սահմանող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ (2016 թ. սեպտեմբեր – 2017 թ. հունվար):*
2. *Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունում (2017 թ. հունվար – 2017 թ. ապրիլ):*
3. *Հանրապետական գործադիր մարմինների կամ տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կամ պաշտոնատար այլ անձանց արտասահման գործուղումների որոշումների և հաշվետվությունների հրապարակման՝ օգտագործողի համար մատչելի միասնական տեղեկատվական հարթակի ստեղծում (2017 թ. մայիս – 2017 թ. հոկտեմբեր):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2017 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Շոշափելի	Փոխակերպող		Շնչվածք	Ողջակի	Չգալի	Կվարտվածք
Պաշտոնյաների գործողությունների թափանցիկություն			✔		✔					✔			Այո			✔	

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Պաշտոնյաների կողմից հանրային միջոցների արդյունավետ և պատշաճ օգտագործումն ապահովելու նպատակով 2013 թ. ՀՀ կառավարությունն իրավական ակտեր է ընդունել արտասահմանյան գործուղման թույլտվություն ստանալու և համապատասխան հաշվետվություն ներկայացնելու ընթացակարգերի վերաբերյալ[1]: Գործուղման հաշվետվություններում տեղեկություններ են ներկայացվում ուղևորության նպատակի, հրավիրող կողմի, քննարկված թեմաների, հանդիպումների, ընդունված որոշումների, ստորագրված փաստաթղթերի, ակնկալվող արդյունքների մասին և այլն: Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և պաշտոնատար այլ անձանց՝ արտասահման գործուղման մեկնելու վերաբերյալ անհատական որոշումները տեղադրված են ՀՀ կառավարության Էլեկտրոնային կառավարման www.e-gov.am կայքում: Սակայն արտասահմանյան գործուղումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները չեն հրապարակվել, որը գործուղումների նպատակի և արդյունավետության վերաբերյալ ԶԼՄ-ների և հանրության տարատեսակ մեկնաբանությունների հիմք էր տալիս: Մասնավորապես ԶԼՄ-ների հրապարակումներում արտահայտվում էր հանրության այն մտահոգությունը, որ գործուղումներն օգտագործվում են որպես զբոսաշրջության հնարավորություն և հաճախ հանրային միջոցների վատնում են, այլ ոչ թե ծառայում են տվյալ պետական կառույցի նպատակներին[2,3,4]:

Այս հանձնառությունը նախատեսում է ստեղծել մի հարթակ, որտեղ կհրապարակվեն պաշտոնյաների գործուղումների հաշվետվությունները: Ակնկալվում է, որ որոնման հնարավորությամբ այդ հարթակը կօգնի մատչելի տեղեկություններ տրամադրել հանրությանը գործուղումների նպատակների և արդյունքների վերաբերյալ և այդպիսով հիմնավորել պետական միջոցների համապատասխան ծախսերը:

Հանձնառության տեքստում նշված է «բաց տվյալների» սկզբունքի մասին, սակայն չի մանրամասնած, թե բացի որոնման հնարավորությունից, բաց տվյալների հատկապես որ բնութագրերն են ներառվելու: Թվարկված են

համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների մշակման և ընդունման, հարթակի ստեղծման քայլերը: Միաժամանակ, հաշվետվությունների բովանդակության, ինչպես նաև դրանցում ֆինանսական տեղեկատվության առկայության կամ բացակայության մասին գրված չէ: Այդ իսկ պատճառով հանձնառության կոնկրետությունը գնահատվել է «միջին»:

Ինչպես նշվեց, պաշտոնյաների գործուղումների հաշվետվությունները պարտադիր են եղել դեռևս 2013 թվականից, սակայն առցանց չեն հրապարակվել: Եթե հանձնառությունը լիարժեք իրականացվի ըստ նախատեսվածի, ապա այն կարող է որոշակի փոքր ազդեցություն ունենալ բյուջեի ծախսերի արդյունավետության տեսանկյունից՝ պաշտոնյաների գործուղումների թափանցիկությունը բարելավելու շնորհիվ, և թույլ կտա ավելի արդյունավետ հասարակական վերահսկողություն իրականացնել պետական ծախսերի նկատմամբ:

Հանձնառության կատարումը

Հանձնառությունը ժամանակին է կատարվել, բայց ոչ լիարժեք: Համապատասխան իրավական փոփոխություններն ընդունվել են, սակայն որոնման հնարավորություններով առանձին հարթակ չի ստեղծվել: 2017 թ. ապրիլին ՀՀ վարչապետի որոշման լրացում է ընդունվել, ըստ որի նախատեսվում է պաշտոնյաների հաշվետվությունների հրապարակումը դրանք ներկայացնելուց հետո մեկօրյա ժամկետում[5]: Որոշումն ուժի մեջ է մտել 2017 թ. մայիսի 1-ին: Ներկայումս, սկսած 2017 թ. մայիսից, արտասահմանյան գործուղումների մասին հաշվետվությունները տեղադրված են www.e-gov.am կայքի «Գործուղումների հաշվետվություններ» բաժնում[6]: Ըստ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների՝ նպատակահարմար է համարվել ոչ թե նոր հարթակ ստեղծել, այլ օգտագործել Էլեկտրոնային կառավարման արդեն առկա պլատֆորմը[7]: Հետազոտության շրջանակներում հարցված անկախ փորձագետի կարծիքով՝ տվյալների որոնման հնարավորություններով հարթակի ստեղծումն իրատեսական է, սակայն ծախսարդյունավետ չէր լինի՝ հաշվի առնելով պոտենցիալ օգտվողների փոքրաքանակությունը[8]:

Հանձնառության կատարման աստիճանը գնահատվում է «զգալի», քանի որ հաշվետվություններն արդեն հրապարակվում են կառավարության կայքում: Այնուամենայնիվ, որոնման գործիքի բացակայության և բաց տվյալների ձևաչափին չհամապատասխանելու պատճառով հանձնառությունը չի կարող համարվել ավարտված: Պաշտոնյաների գործուղումների մասին հաշվետվությունները ներկայացված են PDF ձևաչափով (յուրաքանչյուր կայքէջում՝ մոտ 20 հաշվետվության հղումների ցանկով) առանց որոնման հնարավորությունների, բացառությամբ հենց դիտարկչի հնարավորությունից, ինչը թույլ է տալիս գտնել տվյալ էջում զետեղված հղումը ըստ պաշտոնյայի անվան, գործուղման ամսաթվի և վայրի: Նախարարության ներկայացուցիչները նշում են, որ հարթակում տեղադրվում են ստորագրված զեկույցները, որոնք կարելի է զետեղել միայն սկանավորված ձևաչափով՝ PDF-ով[9]:

Զեկույցները նկարագրական տեղեկություններ են պարունակում գործուղման վերաբերյալ՝ հիմնականում ներառելով նույն ենթաբաժինները, օրինակ՝

գործուղման նպատակը, քննարկվող թեմաները, ձեռք բերված պայմանավորվածությունները: Գործուղման բյուջեի և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկություն չի տրամադրվում, թեև այդ տեղեկությունը կարևորվել է ՔՀԿ-ների կողմից և կարող էր ակնկալվել հանձնառության նախապատմությունից ելնելով:

Նախնական արդյունքները

Հարցազրույցների և խմբային քննարկումների մասնակից ՔՀԿ-ների կարծիքով՝ ներկայումս տեղադրված զեկույցներն օգտակար են գործուղումների արդյունքներին հետևելու համար և կարող են օգտագործվել լրագրողների և շահագրգիռ այլ անձանց կողմից: Այնուամենայնիվ, հաշվետվությունները չեն պարունակում ֆինանսական տվյալներ, որոնք հիմք կծառայեին գործուղումների ծախսարդյունավետության գնահատման համար[10]: Ինչ վերաբերում է գործածելիությանը, առկա հարթակը թույլ չի տալիս տեղեկույթը զտել ըստ կառավարման ոլորտների, պետական կառույցների, ժամանակահատվածի, գործուղման երկրի, ուսումնասիրել գործուղման բյուջեն՝ գործուղման ծախսարդյունավետությունը վերլուծելու նպատակով կամ դուրս բերել առանձին կառույցի պաշտոնյաների գործուղումների ծախսերն ու արդյունքները: PDF փաստաթղթերը համակարգչային ծրագրով ընթեռնելի չեն, ինչը դժվարացնում է աշխատանքը հաշվետվությունների տեքստի հետ: Այնուամենայնիվ, հաշվետվությունները հրապարակելու փաստն ինքնին կարող է խթան հանդիսանալ պաշտոնյաների համար, որպեսզի նրանք գործուղումների մասին տեղեկություններն ավելի լիարժեք ներկայացնեն և ուշադրություն դարձնեն ֆինանսական միջոցների և ժամանակի արդյունավետ սպառմանը[11]:

Ըստ «Հելիքս» ՍՊԸ-ի տրամադրած տվյալների՝ «Գործուղումների հաշվետվություններ» կայքէջի այցելությունների վիճակագրության համաձայն՝ 2017 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին գրանցվել է 2179 դիտում, իսկ այցելության միջին տևողությունը կազմել է 2:23 րոպե, ինչը վկայում է այն մասին, որ այցելուները որոշ ժամանակ են անցկացրել հաշվետվություններն ուսումնասիրելու համար[12]: ԱՀՄ հետազոտողին չի հաջողվել գտնել լրատվամիջոցների այնպիսի հրապարակումներ, որոնք անդրադառնում են պաշտոնյաների գործուղումների հաշվետվություններում ներառված տեղեկություններին՝ հաստատելու համար, որ տեղեկատվությունն օգտագործվում է լրագրողների կողմից և այդպիսով հասնում ավելի մեծ լսարանի: Հարցազրույցի մասնակից լրագրողները նշել են, որ տրամադրված տեղեկությունները կարող են օգտակար լինել գործուղումների արդյունքները և դրանց հետևող գործողությունները ուսումնասիրելու համար՝ ծառայելով որպես լրատվամիջոցների հրապարակումների նյութ: Այնուամենայնիվ, նրանք նշում են, որ առկա հաշվետվությունները տվյալ գործադիր մարմնի առաջնահերթությունների և ծրագրերի համատեքստում համապարփակ տեղեկատվություն կամ արդյունքների համակարգված ամփոփում չեն ներկայացնում, որը հնարավորություն կտար տվյալ ծրագրի կամ պետական մարմնի կատարողականության վերաբերյալ ընդհանուր եզրակացություն տալ[13]:

Հետագա քայլերը

Խորհուրդ է տրվում շարունակել ստանձնած հանձնառությունը՝ հաշվետվությունների հեշտ որոնման և օգտագործման համար ապահովելով հարթակի համապատասխանությունը «բաց տվյալների» սկզբունքին: Եթե որոնման հնարավորությամբ հարթակ չի ստեղծվելու, ապա այդ դեպքում առաջարկվում է.

- փաստաթղթերի հղումներում ներառել պաշտոնի անվանումը՝ զննարկիչի միջոցով ավելի հեշտ որոնելու համար,
- հաշվետվությունների վերնագրերի և բովանդակության համար միատեսակ ձևաչափ սահմանել՝ ապահովելով, որ բոլոր հաշվետվությունները համապատասխանեն հաշվետվության համար սահմանված կառուցվածքին,
- հաշվետվությունները տեղադրել համակարգչային ծրագրի համար ընթեռնելի ձևաչափով՝ ապահովելով մշակման ենթակա տվյալներ,
- գործուղումների ծախսերի մոնիթորինգի և ծախսարդյունավետությունը գնահատելու հնարավորություն տալ: Այդ նպատակով հաշվետվություններում անհրաժեշտ է ներառել բյուջեի ընդհանուր գումարը և գործուղման ֆինանսավորման աղբյուրը և հղում տրամադրել համապատասխան որոշումներին և բյուջեի հաշվետվություններին,
- ավելի մանրամասն տեղեկություններ տրամադրելու համար ներառել կից փաստաթղթեր կամ հղումներ, օրինակ, ստորագրված փաստաթղթեր, ելույթի տեքստեր, լուսանկարներ,
- հաշվետվության մեջ նշել համապատասխան պետական կառույցի այն ռազմավարական ուղղությունը և/կամ ծրագրային գերակայությունը, որից բխում է գործուղման նպատակը:

---

[1] ՀՀ վարչապետի 2013 թ. նոյեմբերի 26-ի թիվ 1087-Ն որոշումը «Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների՝ արտասահման գործուղումների մասին», http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112868

[2] Հրապարակ, «Ես Լոնդոնը տեսնելու և շոփինգ անելու խնդիր չունեմ», 17.06.2014, http://bit.ly/2jA1zo7

[3] ՍիվիլՆեթ, «Քո գրպանից՝ նոր գործուղումներին», 20.12.2015, https://www.civilnet.am/news/2015/12/20/from-your-pocket-per-diem-expenses/283974

[4] Մարինա Մխիթարյան (ՄԱՀԾ «Կոլբա» լաբ.), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 8

[5] ՀՀ վարչապետի 2017 թ. ապրիլի 13-ի թիվ 367-Ն որոշումը «ՀՀ վարչապետի 2013 թ. նոյեմբերի 26-ի թիվ 1087-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112853

[6] ՀՀ Էլեկտրոնային կառավարում, «Գործուղումների հաշվետվություններ» բաժին, https://www.e-gov.am/trips/

[7] Սուրեն Քրմոյան, Մարիամ Գալստյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 25

[8] Արամ Մխիթարյան (Հելիքս Քոնսալթինգ ՍՊԸ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 2

[9] Սուրեն Քրմոյան, Մարիամ Գալստյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 25

[10] Ֆոկուս-խմբային քննարկում Երևանում, 2017 թ. հոկտեմբերի 26

[11] Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 30: Ֆոկուս-խմբային քննարկում Գյումրիում, 2017 թ. նոյեմբերի 23

[12] Արամ Մխիթարյան («Հելիքս Քոնսալթինգ» ՍՊԸ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 2

[13] Գագիկ Աղբալյան (լրագրող), Տիրայր Մուրադյան («Հայկական ժամանակ» օրաթերթ), ԱՀՄ հետազոտողի հեռախոսային հարցազրույցներ, 2017 թ. նոյեմբերի 15

2. Պետական դրամաշնորհների թափանցիկություն

Հանձնառության ձևակերպումը
Անվանումը՝ Կառավարության դրամաշնորհների հաշվետվողականություն. ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում

Պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու մրցույթին մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկի, ինչպես նաև դրամաշնորհներով իրականացված ծրագրերի հաշվետվությունների հրապարակում համապատասխան պետական մարմնի պաշտոնական կայքում: Հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհների օգտագործման արդյունավետության բարձրացում, դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի և դրամաշնորհներով իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, դրամաշնորհների հասցեականության, ոլորտի հաշվետվողականության և թափանցիկության բարելավում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Դրամաշնորհների տրամադրման կարգերը սահմանող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. դեկտեմբեր):*
2. *Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունում (2017 թ. հունվար – 2017 թ. մայիս):*
3. *Դրամաշնորհ ստացած կազմակերպությունների հաշվետությունների հրապարակում դրամաշնորհներ տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում (սկսած 2017 թ. հունիսից):*
4. *ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների տրամադրման մրցույթներին մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկի տեղադրում դրամաշնորհներ տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում (սկսած 2017 թ. հունիսից):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2017 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող		Չնպատակ	Որոշակի	Զգալի	Ակնառուորեն
Պետական դրամաշնորհների թափանցիկություն			✔		✔					✔			Ոչ		✔		

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման գործընթացները կարգավորվում են մի շարք իրավական ակտերով: Տարեկան բյուջեի մասին օրենքը սահմանում է առանց մրցույթի դրամաշնորհներ ստացող կազմակերպությունների ցանկը՝ նշելով կազմակերպությունների անվանումը, դրամաշնորհների չափը, ծրագրերը և դրամաշնորհ տրամադրող գերատեսչությունը: Այնուամենայնիվ, նշված կազմակերպությունների ընտրության, ինչպես նաև պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման ընթացակարգեր սահմանված չեն: Այս բացը տարիներ շարունակ նշվել է տարբեր հաշվետվություններում, այդ թվում՝ ԱՄՆ ՄԶԳ ՔՀԿ կայունության ինդեքսում, որտեղ ասվում է, որ ՔՀԿ-ների ընտրության գործընթացը թափանցիկ չէ և դրամաշնորհների տրամադրումը հիմնականում իրականացվում է պետական մարմինների հայեցողությամբ[1]: Այնուամենայնիվ, երկու պետական կառույցներ՝ ՀՀ նախագահի աշխատակազմը և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը դրամաշնորհային մրցույթներ են կազմակերպում միջնորդ կազմակերպությունների միջոցով: Այս մրցույթների արդյունքների և/կամ ֆինանսավորվող ծրագրերի մասին տեղեկատվությունը սովորաբար տեղադրվում է համապատասխան կայքերում՝ ՀՀ նախագահի աշխատակազմի դրամաշնորհների վերաբերյալ միջնորդ կազմակերպության՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կայքում[2], իսկ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհների վերաբերյալ՝ www.cragrer.am դրամաշնորհային ծրագրերի հատուկ հարթակում[3]:

Այս հանձնառությունը նպատակ ունի բարելավելու պետական բյուջեից ֆինանսավորվող դրամաշնորհների թափանցիկությունը՝ յուրաքանչյուր պետական մարմնի կողմից դրամաշնորհ ստացած կազմակերպությունների ցանկը, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունները հրապարակելու միջոցով:

Հանձնառությունը ներառում է համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների ընդունման և դրամաշնորհ ստացող կազմակերպությունների ցանկերի և հաշվետվությունների հրապարակման բաղադրիչները:

Հանձնառությունն ուղղված է հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը, հաշվետվողականության խթանմանը և հանրային վստահության բարելավմանը: Սակայն հանձնառությունն անդրադառնում է միայն մրցույթի միջոցով ստացած դրամաշնորհների մասին տեղեկատվությունը, մինչդեռ հետազոտություններում և շահագրգիռ կողմերի կարծիքներում բարձրաձայնվող խնդիրը դրամաշնորհների բաշխման մրցութային մեխանիզմի բացակայությունն է, ինչպես նաև պետական բյուջեից ֆինանսավորում ստացող կազմակերպությունների և ծրագրերի մասին անբավարար տեղեկատվությունը[4]: Այս հանձնառության պոտենցիալ ազդեցությունն աննշան կլինի, եթե դրամաշնորհներ տրամադրող գերատեսչություններում դրամաշնորհների բաշխման մրցութային մեխանիզմներ չսահմանվեն: Պոտենցիալ ազդեցությունն ավելի նշանակալի կլիներ, եթե հանձնառությունն ընդգրկեր ոչ միայն դրամաշնորհները, այլև պետական ֆինանսավորման այլ տեսակներ, ինչպիսիք են սուբսիդիաները, նվիրատվությունները և գնումների պայմանագրերը: Այս առումով, 2016 թ. դեկտեմբերին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքը հանրության առջև հաշվետվողականության ավելի լայն հնարավորություն է տրամադրում: Ըստ այս օրենքի՝ 2018 թ.-ից սկսած հասարակական կազմակերպությունները պետք է հաշվետվություններ հրապարակեն պետական և/կամ համայնքային բյուջեից ցանկացած տեսակի ֆինանսավորում ստանալու դեպքում՝ տեղեկատվություն ներառելով դրամական մուտքերի, եկամտի աղբյուրների և ծրագրերի արդյունքների մասին[5]:

Հանձնառության կատարումը

Հանձնառությունը որոշակի չափով է կատարվել: 2017 թ. հունիսի 1-ին ՀՀ կառավարությունն ընդունեց թիվ 579-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման լրացում կատարելու մասին»[6]: Ըստ այս որոշման՝ դրամաշնորհի հատկացման պայմանագրի կնքումից հետո եռօրյա ժամկետում պայմանագիր կնքած կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են դրամաշնորհ տրամադրած պետական մարմնի պաշտոնական կայքում:

Նախքան ընդունումը, որոշման նախագիծը շրջանառվեց բոլոր նախարարություններում՝ քննարկման նպատակով[7]: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ էլեկտրոնային կամ դեմ առ դեմ քննարկումներ չեն կազմակերպվել: Որոշումն ընդունվել է 2017 թ. հունիսի 1-ին և ուժի մեջ է մտել 2017 թ. հունիսի 16-ին: 2017 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ԱՀՄ հետազոտողին չի հաջողվել որևէ նախարարության կայքում պետական դրամաշնորհային մրցույթների հաղթող ճանաչված կազմակերպությունների ցանկ գտնել: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ինտերնետային կայքում www.cragrer.am կայքի հղումն է դրված. վերջինս ստեղծվել էր դեռևս 2010 թվականին և տեղեկատվություն է պարունակում

պետական երիտասարդական քաղաքականության իրականացման շրջանակներում կազմակերպված դրամաշնորհային մրցույթների արդյունքների մասին[8]:

Կառավարության որոշման արդյունքում որոշ նախարարություններ, օրինակ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, սկսել են իրենց ինտերնետային կայքերում դրամաշնորհային ծրագրերի հաշվետվություններ տեղադրել: Հանձնառության 3-րդ և 4-րդ գործողությունների իրականացման մասին տվյալները ներկայացված են ստորև՝ նախնական արդյունքների մասում, քանի որ այս տեղեկատվությունը վերաբերում է կառավարության պրակտիկայում տեղ գտած փոփոխություններին:

ԱՀՄ հետազոտողի գնահատմամբ, զեկույցը գրելու պահին պետական գերատեսչությունների կայքերում համապատասխան որակի և ծավալի դրամաշնորհային ծրագրերի հաշվետվություններ չկան: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հանձնառության 3-րդ և 4-րդ գործողությունները ժամանակին չեն կատարվել (ըստ գործողությունների ծրագրում նշված ժամկետի՝ մինչև 2017 թ. հունիսը ներառյալ):

Նախնական արդյունքներ

2017 թ. նոյեմբերին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, որը տեղեկատվության մատչելիության ոլորտում աշխատող ՔՀԿ է, հարցումներ է ուղղել բոլոր նախարարություններին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել 2017 թ. դրամաշնորհային մրցույթների արդյունքների և դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունների մասին: Ստացած պատասխանները վկայում են, որ նախարարությունների ճնշող մեծամասնությունը 2017 թ. դրամաշնորհային մրցույթ չի կազմակերպել: Դրամաշնորհները բաշխվել են ըստ 2017 թ. բյուջեի մասին օրենքի, որտեղ սահմանված է առանց մրցույթի տրամադրվող դրամաշնորհների ցանկը[9]: Կան նաև դեպքեր, երբ դրամաշնորհներ կամ նվիրատվություններ են տրամադրվել կառավարության հատուկ որոշումներով:

Դրամաշնորհային ծրագրի հաշվետվությունների հրապարակման մասով կառավարության որոշման արդյունքում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն իր կայքում դրամաշնորհային ծրագրերի բաժին ստեղծեց[10] (միջնաժամկետ զեկույցում ներառված հաշվետու ժամանակաշրջանից հետո): Զեկույցը գրելու պահին այս բաժնում ներառված էին միայն մեկ դրամաշնորհային ծրագրի պայմանագրային փաստաթղթերն ու համառոտ ֆինանսական հաշվետվությունները, թեև նախարարությունը 2017 թ. դրամաշնորհ էր տրամադրել 10 կազմակերպությունների: ՀՀ կրթության և գիտության նախարարության կայքում 2017 թ. հուլիսին և հոկտեմբերին տեղադրվել էին մի շարք զեկույցներ[11], որոնք ներառում էին 20 կազմակերպությունների բովանդակային հաշվետվություններ կամ նամակներ, թեև 2017 թ. դրամաշնորհ է տրամադրվել 38 կազմակերպությունների[12]: Այս տեղեկությունը կարող է օգտակար լինել պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի արդյունքների ուսումնասիրման համար: Այնուամենայնիվ, քանի որ հանձնառության կատարման աստիճանը դեռևս սահմանափակ է, գործնականում այս հանձնառության ազդեցությունը դեռ հնարավոր չէ տեսնել:

Հետագա քայլերը

Հանձնառությունը կատարված համարելու համար բոլոր նախարարությունները պետք է սկսեն իրենց կայքերում տեղեկություններ հրապարակել կազմակերպություններին տրամադրած բոլոր դրամաշնորհների մասին: Միաժամանակ, դրամաշնորհների թափանցիկության ապահովման համար հետագա քայլեր են անհրաժեշտ: ԲԿԳ գործողությունների հաջորդ ծրագիրը կարող է պետական բյուջեից տրամադրվող ֆինանսավորման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման միջոցառումներ ներառել, այդ թվում՝

- Բարեփոխել դրամաշնորհների տրամադրման գործընթացը՝ դրամաշնորհների տրամադրման մրցունակ և թափանցիկ մեխանիզմներ ապահովելով:
- Կազմակերպություններին բյուջեից ֆինանսավորում հատկացնող պետական մարմինները պետք է հիմնավորեն դրամաշնորհների կամ ծառայությունների պատվիրակման անհրաժեշտությունը և սահմանեն դրամաշնորհների հիմնական ծախսային տողերը և թույլատրելի ծախսերը:
- Ընդլայնել պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասին հրապարակվող տեղեկատվության շրջանակները՝ հրապարակելով ոչ միայն դրամաշնորհներ, այլև պետական բյուջեից սուբսիդիաներ, նվիրատվություն, պետական աջակցություն և ֆինանսավորման այլ տեսակներ ստացող կազմակերպությունների ցանկը, ինչպես նաև համապատասխան ծրագրերի նկարագրական հաշվետվությունները:

---

[1] 2016 թ. Կենտրոնական և Արևելյան Եվրապայի և Եվրասիայի ՔՀԿ կայունության ինդեքս, https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/CSOSI_Report_7-28-17.pdf

[2] Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կայք, www.heh.am

[3] ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության առցանց դրամաշնորհային համակարգ, www.cragrer.am

[4] Նաիրա Առաքելյան (Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ), Թամարա Աբրահամյան («Արազա» ՀԿ), Մարինա Մխիթարյան (ՄԱԶԾ «Կոլբա» լաբ.), Վարուժան Հոկտանյան («Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն), Երևանի և Գյումրիի ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներ

[5] ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 24, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110802

[6] ՀՀ կառավարության թիվ 579-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման լրացում կատարելու մասին», 01.06.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113823

[7] Սուրեն Քրմոյան, Մարիամ Գալստյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 25

[8] ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կայք, «Դրամաշնորհային ծրագրեր» բաժին, http://www.msy.am/en/category/dramashnorhayin-tsragrer.html

[9] ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին», հավելված 1, աղյուսակ 16 «Ցանկ «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ծրագրերի, որոնց գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից այդ հատկացումների գումարները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվելու են

դրամաշնորհների տեսքով՝ առանց մրցույթի», http://www.arlis.am/Annexes/4/PT92.1_2016page925-950.pdf

[10] ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայք, «Դրամաշնորհային ծրագրեր» բաժին http://bit.ly/2AjTxtF

[11] ՀՀ կրթության և գիտության նախարարության կայք, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի հանրակրթության վարչության կողմից իրականացվող, դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում կազմակերպությունների կողմից 2017 թ. 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ ներկայացրած բովանդակային հաշվետվություններ, http://edu.am/index.php/am/documents/view/1835

[12] Give Me Info, հարցումներ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, http://www.givemeinfo.am/hy/case/2297/

3. Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով

Հանձնառության ձևակերպումը
Անվանում «Ավելի ինտերակտիվ բյուջե». Պետական բյուջեի թափանցիկության ապահովում «բաց տվյալների» սկզբունքի կիրառմամբ:

Էլեկտրոնային «ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործումը հնարավորություն կտա բացի ծախսային մասից ինտերակտիվ եղանակով ցույց տալ բյուջեի ոչ միայն պլանավորված, այլ նաև ըստ ձևավորման աղբյուրների փաստացի եկամուտները, համապատասխան կատարելագործված գործիքների կիրառմամբ հնարավոր դարձնել կոնկրետ տվյալների որոնումը (օրինակ բյուջեի ծախսերի բաշխումը ՀՀ պետական մարմինների ներսում և այլն), ինչպես նաև տեղեկատվությունը դարձնել մատչելի այն օգտագործողի կողմից հետագա մշակման համար (Machine readable): Այն կապահովի ՀՀ պետական բյուջեի մասին տեղեկատվության օգտագործման մատչելիությունը, կբարելավի ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի և հավաքագրված եկամուտների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Մասնավոր ընկերությունների և քաղաքացիական հասակարության հետ քննարկումներ՝ աշխատանքների շրջանակը հստակեցնելու նպատակով (2016 թ. հոկտեմբեր – 2017 թ. հունվար):*
2. *Տեխնիկական առաջադրանքի մշակում և գնումների գործընթացի անցկացում (2017 թ. փետրվար - 2017 թ. հունիս):*
3. *«Բաց տվյալների» սկզբունքի վրա հիմնված «ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործում նաև ըստ ձևավորման աղբյուրների փաստացի եկամուտների ներկայացման հնարավորությամբ (2017 թ. հուլիս – 2018 թ. հունիս):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ

Սկիզբը՝ 2016 թ. դեկտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող		Չսկսված	Ընթացքում	Չգրի	Ավարտված
Ինտերակտիվ բյուջե՝ բաց տվյալների սկզբունքով			✔		✔			✔		✔			Այո		✔		

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Ներկայումս պետական բյուջեի կառուցվածքի, ինչպես նաև գործառական դասակարգմամբ փաստացի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման[1] և ՀՀ ֆինանսների նախարարության[2] կայքերում՝ առցանց էլեկտրոնային «ինտերակտիվ բյուջեի» գործիքի միջոցով: «Ինտերակտիվ բյուջեն» վիզուալ գործիք է, որը բյուջեի որոշակի կատեգորիաների վրա քայլ առ քայլ սեղմելու դեպքում տվյալներ է տրամադրում բյուջեի համապատասխան ծախսերի, իսկ որոշ դեպքերում՝ նաև գնումների պայմանագրերի մասին: Համակարգի թերությունն այն է, որ այն հիմնված չէ «բաց տվյալների» սկզբունքի վրա: Համակարգն օգտվողներին հնարավորություն չի տալիս հեշտությամբ գտնել, ներբեռնել, մշակել և օգտագործել տվյալները, ինչպես նաև տեղեկություններ չի պարունակում ըստ ձևավորման աղբյուրների բյուջեի եկամտի մասին:

Այս հանձնառությունը նախատեսում է բարելավել ինտերակտիվ բյուջեի հարթակը՝ որոնման և զտման հնարավորություններ և ներբեռնվող տվյալներ տրամադրելու միջոցով: Հանձնառությունն ուղղված է ՀՀ պետական բյուջեի մասին տեղեկատվության մատչելիության և թափանցիկության բարելավմանը՝ ներկայացնելով եկամուտներն ու ծախսերը առցանց ձևաչափով և վերլուծության հնարավորությամբ:

Հանձնառության տեքստում սահմանված են «ինտերակտիվ բյուջեի» հիմնական հատկանիշները, ներառյալ կոնկրետ չափանիշներով որոնելու և տվյալների ներբեռնման ու մշակման հնարավորությունները: Այնուամենայնիվ, ծախսերի վերաբերյալ տեղեկատվության մանրամասնության մակարդակը չի նշված (օրինակ, ընդհանուր ծախսային հոդվածն է նշվելու, թե կոնկրետ ծախսերը, նշվելու է արդյոք կապալառուն և այլն): Հանձնառության առաջարկը ներկայացրած ՀԿ-ի ներկայացուցչի խոսքով, իրենց կողմից ակնկալվում էր, որ պիտի տեղեկություն հրապարակվի ընդհուպ մինչև պետական մարմինների կողմից ծախսային տողերով կատարված ծախսերը[3]:

Այս հանձնառության հնարավոր ազդեցությունը գնահատվում է «փոքր»: Հանձնառությունը նախատեսում է բյուջեի վերաբերյալ տվյալների նոր ձևաչափ, թեև համապատասխան տվյալները տարբեր ձևաչափերով արդեն իսկ հրապարակվում են ինտերակտիվ բյուջեի գործիքի և բյուջեի հաշվետվությունների միջոցով: Հանձնառության հիմնական հավելյալ արժեքը տեղեկության ավելի դյուրին և ժամանակ խնայող որոնման հնարավորությունն է: Բացի այդ, համակարգը ՀՀ ֆինանսների նախարարությանը թույլ կտա տվյալներ հրապարակել ծախսերի հաշվետվության տրամադրումից հետո մեկ օրվա ընթացքում[4]: Կառավարման պրակտիկայում փոփոխություն բերելու առումով իրական ազդեցությունը կախված կլինի բյուջետային հարթակի հետագա օգտագործման աստիճանից և դրանից բխող հանրային վերահսկողությունից:

Հանձնառության կատարումը

Ծրագրի իրականացման առաջին տարվա ավարտի դրությամբ հանձնառությունը որոշակի չափով է կատարվել, ընդ որում, առաջին երկու գործողություններն արդեն ավարտվել են: Մասնավոր ընկերությունների և քաղաքացիական հասարակության հետ քննարկումները տեղի են ունեցել

մինչև իրականացման փուլը, այսինքն՝ գործողությունների երրորդ ծրագրի քննարկումների ժամանակ: Ծրագրի իրականացման ժամանակահատվածում մշակվել է տեխնիկական առաջադրանքը և իրականացվել է մեկ անձից ծրագրային փաթեթի գնման գործընթացը: Կապալառուն «ԼՍՈՖԹ» ՍՊԸ-ն է, որն արդեն նմանատիպ ծառայություններ է մատուցել ՀՀ ֆինանսների նախարարությանը: Պայմանագիրը ստորագրվել է 2017 թ. օգոստոսին, գործողությունների ծրագրում նախատեսված ժամկետից երկու ամիս հետո[5]: Ըստ պայմանագրի, աշխատանքների ավարտը նախատեսվում է 2017 թ. դեկտեմբերի վերջին: Այս աշխատանքների համար ֆինանսավորումը հատկացվել է պետական բյուջեից և կազմում է 4,8 մլն դրամ: Թեև հետազոտության մեջ ներառված ժամանակաշրջանին սա չի վերաբերում, հարկ է նշել, որ 2017 թ. հոկտեմբերի դրությամբ տեխնիկական աշխատանքների մեծ մասն արդեն իրականացվել էր:

Հետագա քայլերը

Նախատեսվում է ժամանակին ավարտել հանձնառությունը: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է մինչ գործարկումը հարթակի փորձնական տարբերակի շուրջ քննարկում կազմակերպել քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ օգտվողների մեկնաբանություններն ու առաջարկությունները հաշվի առնելու նպատակով: Հետազոտության մասնակից ՔՀԿ-ները նշում են, որ «ինտերակտիվ» տերմինը այնքան էլ չի արտացոլում հարթակի գաղափարը և առաջարկում են հարթակը «վիզուալ» անվանել, քանի որ տվյալ դեպքում բյուջեի մասին տեղեկատվությանը հանրության կողմից արձագանք տրամադրելու հնարավորություն չի տրվում[6]: Գործողությունների հաջորդ պլանում կառավարությունը կարող է նկատի ունենալ պլանավորման փուլում բյուջեի հանրային քննարկումների համար ինտերակտիվ հարթակի ստեղծումը, որի համար ինչպես առցանց, այնպես էլ դեմ առ դեմ խորհրդակցության գործիքներ և միջոցներ անհրաժեշտ կլինեն, այդ թվում ինտերնետային հարթակներ, հանրային քննարկումներ և փորձագետների մասնակցությամբ կլոր սեղաններ:

---

[1] ՀՀ էլեկտրոնային կառավարում, «Ինտերակտիվ բյուջե» բաժին, https://www.e-gov.am/interactive-budget/

[2] ՀՀ ֆինանսների նախարարություն, «Ինտերակտիվ բյուջե» բաժին, http://minfin.am/en/page/interactive_budget/

[3] Ղարիբ Հարությունյան («Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 9

[4] Ժիրայր Տիտիզյան (ՀՀ ֆինանսների նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 15

[5] Պետական գնման պայմանագիր No ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/5, 29.08.2017, https://www.e-gov.am/procur_files/40772838-pg.PDF

[6] Ֆոկուս-խմբային քննարկում Գյումրիում, 2017 թ. նոյեմբերի 23

4. Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով

Հանձնառության ձևակերպումը
Անվանում «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի ֆորմատի համապատասխանեցում «բաց տվյալների» սկզբունքին, դրանց վերամշակման, վերլուծության, որոնման համակարգի կատարելագործում:

Նախաձեռնության նպատակն է՝ քաղաքացիական հասարակության համար մատչելի ու հասանելի դարձնել օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չներկայացրած հայտարարատուների տվյալները, ինչպես նաև հնարավորություն ընձեռել ինտերակտիվ եղանակով համակարգից ստանալու հրապարակման ենթակա տվյալները էլեկտրոնային բաց ձևաչափով:

Ակնկալվում է քաղաքացիական հասարակության օժանդակությամբ ազդեցություն ունենալ հայտարարատուների կողմից հայտարարագրերի ներկայացման պարտականության կատարման գործընթացի վրա՝ բարելավելով ինչպես օրենքով սահմանված ժամկետում չներկայացված, այնպես էլ ուշ ներկայացված հայտարարագրերի վիճակագրությունը: Դրա հետ մեկտեղ, հայտարարագրերի ռեեստրի ինտերակտիվ գործիքի ներդրման արդյունքում Հանձնաժողովն ակնկալում է ՔՀ շահագրգիռ միավորումների կողմից ստանալու առավել փաստարկված առաջարկություններ ու դիմումներ այս կամ այն բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահանված գործունեության սահմանափակումների կամ շահերի բախման իրավիճակների, կամ էլ էթիկայի կանոնների առերևույթ խախտումների կամ այդ կապակցությամբ արձանագրված ռիսկերի վերաբերյալ:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Շահագրգիռ քաղաքացիական միավորումներին հանձնառության առաջարկության ներկայացում, նրանց կարծիքների ստացում, քննարկումների կազմակերպում, արդյունքների ամփոփում՝ օրենքով սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացրած անձանց ցուցակների հրապարակման, Հանձնաժողովի կայքէջի «Հայտարարագրերի ռեեստր» բաժինը օգտվողների համար ինտերակտիվ դարձնելու ճանապարհով ծրագրային ապահովման մշակման վերաբերյալ (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. դեկտեմբեր):*
2. *2016 թ. հայտարարագիր չներկայացրած և սահմանված ժամկետից ուշ ներկայացրած անձանց ցուցակների հրապարակում Հանձնաժողովի կայքում (2016 թ. դեկտեմբեր – 2017 թ. մարտ):*
3. *Հանձնաժողովի www.ethics.am կայքի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնի որոնողական համակարգի զարգացում, դրա՝ օգտվողի համար*

ինտերակտիվ հասանելիության ապահովում, ծրագրային ապահովման մշակում և ներդնում (2017 թ. մարտ – 2018 թ. հունիս):

ԱՀՄ հետազոտողն առանձնացրել է այս հանձնառության երկու արդյունք՝ հայտարարագրերը ժամանակին չներկայացրած պաշտոնյաների ցուցակի հրապարակումը և բաց տվյալների ձևաչափով որոնման համակարգի ստեղծումը:

Պատասխանատու կառույց՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Զգալի	Փոխակերպող		Չսկսված	Որոշակի	Զգալի	Ավարտված
Պաշտոնյաների հայտարարագրեր՝ բաց տվյալների սկզբունքով			✔		✔	✔	✔	✔		✔			Ոչ		✔		

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

2012 թ.-ից սկսած բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը հրապարակվում են ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ PDF ձևաչափով: Հայտարարագրերը հանրության համար հասանելի են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) www.ethics.am կայքում: Սակայն հնարավոր չէ տեղեկություններ փնտրել և գտել ըստ հայտարարագրի որևէ տվյալի՝ պաշտոնյայի անունից, պաշտոնից և հայտարարագրման տարուց զատ: Օրինակ, որոշակի շեմից բարձր եկամուտ ունեցող պաշտոնյաների տվյալները գտնելու համար յուրաքանչյուր պաշտոնյայի հայտարարագիրը պետք է առանձին ուսումնասիրել: Հայտարարագրերի ռեեստրում հրապարակման ձևաչափը թույլ չի տալիս նաև վերլուծել տվյալների դինամիկան ըստ տարիների:

2015 թ. հանձնաժողովը հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ ստեղծեց, որը հնարավորություն է տալիս տեղեկություններ ստանալ այն անձանց մասին, ովքեր հայտարարագիր չեն ներկայացրել կամ ուշացումով են ներկայացրել: Սակայն այս համակարգը կապակցված չէ

հանձնաժողովի www.ethics.am կայքի հետ և նշված տեղեկությթը հասանելի չէ հանրությանը[1]:

Հանձնառության նպատակներն են՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերը հրապարակել «բաց տվյալների» ձևաչափով, այսինքն՝ PDF-ի փոխարեն ներբեռնվող և որոնման ենթակա տվյալներ տրամադրելով, և հրապարակել այն անձանց ցուցակները, որոնք օրենքով սահմանված ժամկետներում հայտարարագիր չեն ներկայացրել: Բացի այդ, հանձնառությունը ներառում է քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցություն ցուցակի հրապարակման և ծրագրային փաթեթի մշակման հարցերի շուրջ: Հանձնառության կատարումը հնարավորություն կտա բարելավել հայտարարագրերի տվյալների մատչելիությունը հետաքննող լրագրողների և քաղաքացիական հասարակության համար, որոնք փաստերի ուսումնասիրման և ազդարարման միջոցով կկարողանան օգնել ստուգելու պաշտոնյաների հայտարարագրած տվյալների հավաստիությունը: Ժամանակին հայտարարագիր չներկայացրած պաշտոնյաների ցուցակի հրապարակումը կարող է նպաստել նրան, որ այդ պաշտոնյաները պատասխանատվության ենթարկվեն: Այսպիսով, հանձնառությունը համապատասխանում է տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության և հանրության առջև հաշվետվողականության ԲԿԳ արժեքներին:

Հանձնառությունը թվարկում է սահմանված նպատակներին հասնելու կոնկրետ գործողություններ: Հանձնաժողովը նախատեսում է քննարկումներ կազմակերպել շահագրգիռ քաղաքացիական խմբերի հետ, սակայն քննարկումների շրջանակները և ձևաչափը հստակ չեն: Հանձնաժողովի կայքի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնի որոնման համակարգի բարելավումն ուղղված է օգտվողների համար ինտերակտիվ հասանելիության ապահովմանը՝ առանց մատնանշելու որոնման նախատեսվող չափանիշները: Այդ իսկ պատճառով, այս հանձնառության կոնկրետության աստիճանն ընդհանուր առմամբ գնահատվում է «միջին»:

Այս հանձնառությունը պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիությունը բարելավելու պոտենցիալ ունի: Հայտարարագրերը ժամանակին չներկայացրած անձանց ցուցակի հրապարակումը կարող է նպաստել այդ պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու գործընթացին: Լիարժեք իրականացման դեպքում հանձնառության բաղադրիչները կարող են բարելավել քաղաքացիական վերահսկողությունը հայտարարագրերի ներկայացման և հանձնաժողովի կողմից ձեռնարկված հետագա գործողությունների նկատմամբ, ինչպես նաև հնարավորություն ընձեռել հանձնաժողովին տվյալների վերլուծություններն օգտագործել սեփական հետաքննությունների համար: Այնուամենայնիվ, հանձնառության ազդեցությունը կարող է սահմանափակ լինել, քանի որ այն կախված է ոլորտում գործող փոքրաթիվ ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների գործողություններից և դրանց արդյունքում պատասխանատու գերատեսչության ձեռնարկած միջոցառումներից:

Հանձնառության կատարումը

Հանձնառությունը որոշակի չափով է իրականացվել: Հանձնաժողովը քննարկումներ է անցկացրել քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ տարբեր հանդիպումների ընթացքում: Օրինակ, «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի մասնակցությամբ 2016 թ. մի շարք աշխատանքային հանդիպումներ են եղել: Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հետք» առցանց լրատվամիջոցի հրապարակումներում և հանձնաժողովի ներկայացուցիչների հետ «Հետքի» լրագրողների անհատական խոսակցությունների ընթացքում ներկայացված կարծիքներն ու առաջարկությունները[2,3]: 2016 թ. հոկտեմբերի 12-ին Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում «Հայաստանի իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և ԻԱԿ-ի հետ համատեղ «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրներն ու իրականացվող բարեփոխումները» թեմայով միջոցառում կազմակերպեց Վանաձորում: Հանձնաժողովի ներկայացուցիչների և փորձագետների ներկայացումներին հաջորդեց թեմայի քննարկումը մասնակից ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների հետ[4]:

Սահմանված ժամկետում հայտարարագրեր չներկայացրած պաշտոնյաների ցանկի հրապարակումը նախատեսված էր իրականացնել մինչև 2017 թ. մարտը ներառյալ, սակայն նշված ցանկը գործողությունների ծրագրի առաջին տարվա ընթացքում չի հրապարակվել: Փոխարենը, այն հրապարակվեց 2017 թ. հոկտեմբերի 30-ին՝ ներկայացնելով այն պաշտոնյաների անունները և պաշտոնները, որոնք այդ օրվա դրությամբ 2016 թ. եկամուտների և գույքի վերաբերյալ հայտարարագրեր չեն ներկայացրել: Հրապարակված ցուցակում հայտարարագրերն ուշացումով ներկայացրած պաշտոնյաների վերաբերյալ տեղեկություններ չկան: Հանձնաժողովի ներկայացուցիչների խոսքով, պաշտոնյաներին լրացուցիչ ժամանակ է հատկացվել՝ իրենց հայտարարագրերը վերանայելու և պակասող տվյալները լրացնելու համար: Բացի այդ, հետաձգման պատճառներից էին տեխնիկական խնդիրները, օրենսդրական փոփոխությունները և դրանց հետ կապված բարեփոխումները հանձնաժողովի ներսում[5]:

Հանձնառության իրականացմանը զուգահեռ՝ պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերաբերյալ մի շարք օրենսդրական փոփոխություններ են ընդունվել: 2017 թ. հունիսի 9-ին խորհրդարանը փոփոխություններ և լրացումներ ընդունեց «Հանրային ծառայության մասին» և մի շարք այլ օրենքներում, որոնք ուժի մեջ մտան 2017 թ. հուլիսի 1-ից: Ըստ այդ փոփոխությունների՝ վարչական պատասխանատվություն է սահմանվել հայտարարագրերը ժամանակին չներկայացնելու և հայտարարագրերի ներկայացման պահանջներն ու կարգը խախտելու, ինչպես նաև անփութության հետևանքով սխալ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու համար, ինչպես նաև քրեական պատասխանատվություն՝ հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու

համար[6]: Այս փոփոխությունները կարող են զգալիորեն մեծացնել հանձնառության հնարավոր ազդեցությունը, քանի որ հայտարարագրերի տվյալների մատչելիության բարելավումը գործնական հետևանքներ կարող է ունենալ համապատասխան պահանջներին չհետևող պաշտոնյաների նկատմամբ պատժամիջոցների կիրառման տեսանկյունից:

Հանձնառության իրականացման համար նախատեսված միջոցները նախատեսվել են Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» (2016-2020 թթ.) շրջանակներում: Այնուամենայնիվ, ինչպես նշեց հանձնաժողովի ներկայացուցիչը, որոնողական համակարգի արդիականացումը հետաձգվեց՝ պայմանավորված օրենսդրական փոփոխություններով, որոնք ուժի մեջ մտան 2017 թ. հուլիսին: Ձեկույցը գրելու պահի դրությամբ հանձնաժողովը մշակել էր հանձնաժողովի կայքի «Հայտարարագրերի ռեեստրի» բաժնի էլեկտրոնային համակարգի արդիականացման ծրագրային փաթեթի տեխնիկական առաջադրանքը[7]:

Հետագա քայլերը

Հանձնառությունը պետք է իրականացվի գործողությունների ծրագրի մնացած ժամանակահատվածում: Հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի արդիականացման տեխնիկական առաջադրանքի նախագծի հաստատումից հետո հանձնաժողովը նախատեսում է սկսել գնումների գործընթաց՝ ծրագրային փաթեթը մշակող ընկերություն ընտրելու նպատակով:

Երբ որոնման համակարգը պատրաստ լինի, խորհուրդ է տրվում այն քննարկել քաղաքացիական հասարակության շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ հանձնառության նպատակներին այդ համակարգի համապատասխանությունն ապահովելու և որոնման չափանիշների ու օգտագործման հարմարավետության վերաբերյալ լրացուցիչ մեկնաբանություններ և առաջարկություններ ստանալու նպատակով:

Հանձնաժողովի ներկայացուցիչը նշում է, որ հանձնառության առավել մեծ ազդեցության համար ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները պետք է ավելի ակտիվ լինեն և հետազոտություններ իրականացնեն քաղաքացիական վերահսկողություն ապահովելու և ապօրինի հարստացման փաստերի բացահայտմանն օգնելու համար[8]: Ըստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հայտարարագրերի տվյալների հարթակի բարելավումից էլ ավելի կարևոր է այն, որ հանձնաժողովը համապատասխան քայլեր ձեռնարկի հայտարարագրերում ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու ուղղությամբ և ապահովի օրենքով նախատեսված պատժամիջոցների կիրառումը[9]: Հանձնաժողովի համապատասխան որոշումների ու կիրառված պատժամիջոցների մասին տեղեկության հրապարակումը կնպաստի այդ հաստատության նկատմամբ հանրության վստահության բարելավմանը և հարթակի լիարժեք օգտագործմանը տվյալների վերլուծությամբ զբաղվող ու քաղաքացիական վերահսկողության ոլորտում գործող ՔՀԿ-ների կողմից:

---

[1] Բաց կառավարման գործընկերություն, Հայաստանի Հանրապետության երրորդ գործողությունների ծրագիր (2016-2018 թթ.), http://ogp.am/u_files/file/OGP3AP.pdf

[2] Արմեն Խուդավերդյան (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 24
[3] Գրիշա Բալասանյան (Հետաքննող լրագրողների ՀԿ-ի «Հետք» լրատվամիջոց), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 23
[4] Iravaban.net, Գույքի և եկամուտների հայտարարագրման ինստիտուտի թափանցիկության ապահովման գործում կարևոր դեր պետք է ունենան ՔՀԿ-ներն ու ՁԼՄ-ները, http://iravaban.net/141348.html, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով, «Անցկացվել է հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրների և իրականացվող բարեփոխումների թեմայով հակակոռուպցիոն միջոցառում», http://www.ethics.am/hy/events/item/2016/10/13/news5/
[5] Արմեն Խուդավերդյան (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 24
[6] ՀՀ օրենքը ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 09.06.2017, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114359
[7] Արմեն Խուդավերդյան (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 24
[8] Արմեն Խուդավերդյան (Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 24
[9] Ֆոկուս-խմբային քննարկում Երևանում, 2017 թ. հոկտեմբերի 26, Գրիշա Բալասանյան (Հետաքննող լրագրողների ՀԿ-ի «Հետք» լրատվամիջոց), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 23, Վարուժան Հոկտանյան («Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 30

5. Համայնքային որոշումների պորտալ

Հանձնառության ձևակերպումը
Անվանում Համայնքային որոշումների պորտալ. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում:

«Բաց տվյալների» սկզբունքի հիման վրա համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում: Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հասանելիության ապահովում, փնտրելու հնարավորության ստեղծում (պարզ և ընդլայնված որոնում), օգտագործման մատչելիության ապահովում, համայնքների գործունեության թափանցիկության բարելավում:

Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների՝ «բաց տվյալների» սկզբունքի հիման վրա հրապարակումը տեղեկատվության հասանելիության առումով նոր որակ է հաղորդում հանրային հաշվետվողականության արժեքի ներդրման և հետևողական զարգացման հարցում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում վերաբերյալ հնարավոր տեխնիկական լուծումների քննարկում քաղհասարակության և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. նոյեմբեր):*
2. *Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում՝ որոնման հնարավորությամբ (2016 թ. դեկտեմբեր – 2018 թ. հունիս):*
3. *Համայնքային ծառայողների ուսուցման կազմակերպում և անցկացում (2017 թ. հուլիս – 2017 թ. դեկտեմբեր):*
4. *Նախկինում ընդունված համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների արխիվային բազայի ստեղծում (սկսած 2018 թ. հունվարից):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ մարզպետարաններ

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառու-թյունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող		Չնկատված	Ցածր մակարդակ	Միջին մակարդակ	Կանոնակարգված
Համայնքային որոշումների պորտալ			✔		✔			✔		✔			Այո		✔		

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Մինչ հանձնառությունը ստանձնելը, համայնքների ավագանու և ղեկավարի որոշումները էլեկտրոնային տարբերակով PDF ձևաչափով հրապարակվում էին տարբեր պաշտոնական կայքերում, մասնավորապես, համայնքների (առկայության դեպքում) և համապատասխան մարզպետարանների կայքերում: Հայաստանում համայնքային որոշումների հրապարակման միասնական հարթակ չկա: Ըստ այդմ, օգտվողները չեն կարողանում հեշտությամբ գտնել անհրաժեշտ իրավական ակտերը: Միաժամանակ, պետական մարմինների ընդունած իրավական ակտերի հրապարակման համար օգտագործվում է «Հայաստանյան իրավական տեղեկատվական համակարգ» (ARLIS) առցանց հարթակը, որն իրավական ակտերը տարբեր չափանիշներով որոնելու և ներբեռնելու հնարավորություններ է տրամադրում[1]:

Այս հանձնառությունը նախատեսում է ստեղծել առցանց հարթակ, որը որպես միասնական տեղեկատվական համակարգ կծառայի համայնքային որոշումների հրապարակման համար: Այսպիսով, հանձնառությունը համապատասխանում է տեղեկատվության մատչելիության ԲԿԳ արժեքին:

Հանձնառությունը սահմանում է, որ համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները կհրապարակվեն «բաց տվյալների» սկզբունքով, միասնական իրավական տեղեկատվական համակարգում: Այնուամենայնիվ, հանձնառության տեքստում նկարագրված չեն տվյալների հրապարակման ձևաչափը և կառուցվածքը:

Հանձնառության լիարժեք իրականացման դեպքում համայնքային որոշումներն ավելի մատչելի կդառնան հանրության համար, իսկ ըստ որոշակի չափանիշների որոշումների որոնումը կհեշտանա: Ներկայումս որևէ թեմայի վերաբերյալ որոշում գտնելու համար օգտվողները պետք է այցելեն 10 մարզպետարանների կայքերը և մեկ առ մեկ փնտրեն որոշումները յուրաքանչյուր համայնքի թղթապանակի սկանավորված PDF փաստաթղթերում: Կառավարության պրակտիկայում ակնկալվող պոտենցիալ փոփոխությունը փոքր է, քանի որ որոշումներն արդեն հասանելի են տարբեր հարթակներում, սակայն հանձնառության իրականացումը կնպաստի միասնական հարթակում տեղեկատվության մատչելիությանը:

Հանձնառության կատարումը

Հանձնառությունը որոշակի չափով է կատարվել: 2016 թ. հուլիսին www.arlis.am կայքում ավելացվեց նոր՝ «ՏԻՄ ակտեր» բաժինը, որտեղ PDF ձևաչափով եռամսյակային տեղեկագրերում հրապարակվեցին համայնքների ավագանիների և ղեկավարների որոշումները[2]: Ըստ պատասխանատու նախարարության, հաշվի են առնվել ARLIS համակարգի տեխնիկական կարողությունները և նպատակահարմար է համարվել համայնքային որոշումները հրապարակել պետական մարմինների ընդունած իրավական ակտերի հետ նույն հարթակում[3]: ՔՀԿ ներկայացուցիչները տարբեր տեսակետներ ունեն առ այն, թե արդյոք հարթակը պետք է առանձին կայքում լիներ: Որոշ ՔՀԿ-ներ պնդում են, որ պետք է նոր հարթակ ստեղծվի, ինչպես նշված է հանձնառության տեքստում, իսկ մյուսները կարծում են, որ ARLIS-ի կայքում ևս հարթակը կարող է ծառայել իր նպատակներին, քանի որ այս կայքն ավելի հայտնի է, բացի այդ, այդպես ավելի ծախսարդյունավետ կլինի[4]: Այնուամենայնիվ, գրեթե բոլոր ՔՀԿ-ները համամիտ են այն հարցում, որ հրապարակված որոշումների ձևաչափը թույլ չի տալիս օգտվողին հեշտությամբ որոնել և գտնել որևէ տեղեկություն՝ հաշվի առնելով համակարգչային ծրագրով PDF փաստաթղթի անընթեռնելիությունը և մեծ ծավալի պատճառով տեղեկագրերի ներբեռնման ցածր արագությունը:

Ներկայիս հարթակում տեղադրված է համայնքային որոշումների ցանկը, որտեղ ներկայացված իրավական ակտերի անվանումները ներառում են համայնքի անվանումը, որոշման համարը և ընդունման ամսաթիվը, հաճախ նաև՝ թեման: Սա հնարավորություն է տալիս օգտագործել դիտարկչի որոնման համակարգը՝ ցանկում որևէ որոշում փնտրելու և ըստ համապատասխան էջի PDF տեղեկագրում համապատասխան իրավական ակտը գտնելու համար: Այնուամենայնիվ, եթե փնտրվող որոշումն ընդունելու ժամանակաշրջանը հայտնի չէ, հարկավոր կլինի այն փնտրել բոլոր տեղեկագրերում: Բացի այդ, ԱՀՄ հետազոտողը նկատել է, որ մարզպետարանների կայքերում հրապարակված ոչ բոլոր որոշումներն են տեղադրված տեղեկագրում: Մասնավորապես, ուսումնասիրվել են Արագածոտնի և Արմավիրի մարզպետարանների կայքերի «Համայնքի ավագանու որոշումներ» բաժնում տեղադրված՝ 2016 թ. ընդունված համայնքային որոշումները[5]: Այսպես, օրինակ, մարզպետարանների կայքերում հրապարակված էր Արագածոտնի մարզի Ագարակ համայնքի 40 և Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի 45 որոշում: Այս որոշումներից www.arlis.am կայքի տեղեկագրում, սակայն, ներառված էր միայն Ալաշկերտ համայնքի 2016 թ. մեկ որոշում:

2011 թ. կառավարությունը հավանություն տվեց համայնքների խոշորացման հայեցակարգին[6], և Հայաստանի համայնքներից շատերը (2011 թ. դրությամբ՝ 915 համայնք) 2015 թ. սկսեցին միավորվել և ավելի խոշոր վարչական միավորներ կազմել: Ըստ նախարարության, երբ համայնքների խոշորացման բարեփոխումներն ավարտվեն (որն ակնկալվում է 2018 թ.), հնարավոր կլինի խոշորացված համայնքների որոշումները հրապարակել ARLIS-ի՝ որոնման հնարավորություններ տրամադրող բաժնում[7]:

Նախնական արդյունքներ

Ներկա դրությամբ դժվար է եզրակացություններ անել հարթակի օգտագործելիության վերաբերյալ: Հարցազրույցի մասնակիցները,

մասնավորապես ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների ներկայացուցիչները նշել են, որ օգտակար են համարում բոլոր համայնքային որոշումներ համախմբումը մեկ հարթակում և հավանաբար կօգտագործեն այդ հանձնառության շրջանակներում ստեղծված ռեսուրսը: Նրանք նաև նշում են, որ որոշումներն առցանց հրապարակումը կարող է որոշ ազդեցություն ունենալ համայնքային իշխանությունների մշակած փաստաթղթերի որակի, բայց ոչ որոշումների բովանդակության վրա[8]: «ՏԻՄ որոշումներ» բաժնի այցելությունների առանձին վիճակագրություն չկա, սակայն www.arlis.am կայքի ընդհանուր վիճակագրությունը ամսական 80-90 հազար եզակի այցելուներ և միլիոնավոր էջերի բեռնումներ է ցույց տալիս[9], որը վկայում է հարթակի ժողովրդականության մասին: Այնուամենայնիվ, տվյալների որոնման և մշակման սահմանափակ հնարավորությունների, ինչպես նաև ոչ բոլոր որոշումների ներառման պատճառով հարթակի արդյունավետությունը նախատեսվածից փոքր կարող է լինել:

Հետագա քայլերը

Առաջարկվում է բարելավել հանձնառության կատարումը գործողությունների ծրագրի մնացած ժամանակահատվածում: Մասնավորապես, շահագրգիռ կողմերի հետ քննարկումների հիման վրա ԱՀՄ հետազոտողը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

- ապահովել, որ հարթակում ներառվեն Հայաստանի բոլոր համայնքների բոլոր որոշումները,
- որոշումները հրապարակել համակարգչային ծրագրով ընթեռնելի ձևաչափով՝ ապահովելով մշակման ենթակա տվյալներ,
- հնարավորության դեպքում բարելավել հարթակը, որպեսզի այն համապատասխանի հանձնառության տեքստին՝ մասնավորապես պարզ և ընդլայնված որոնման հնարավորություններ տրամադրելով,
- ավելի հարմարավետ դարձնել տեղեկագրի ընթերցումը կայքից (օրինակ, ամբողջական էկրանով դիտելու հնարավորություն տրամադրել):

---

[1] Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, http://www.arlis.am
[2] Սուսաննա Գրիգորյան («Պաշտոնական տեղեկագրեր» ՓԲԸ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 17
[3] Աշոտ Գիլոյան (ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 16
[4] Ֆոկուս-խմբային քննարկում Երևանում, 2017 թ. հոկտեմբերի 26
[5] Արագածոտնի մարզպետարանի կայք, «Համայնքի ավագանու որոշումներ» բաժին, http://aragatsotn.mtad.am/community-council-decisions, Արմավիրի մարզպետարանի կայք, «Համայնքի ավագանու որոշումներ» բաժին, http://armavir.mtad.am/community-council-decisions
[6] Քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից, «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին», 10.11.2011, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73958
[7] Աշոտ Գիլոյան (ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 16
[8] Ֆոկուս-խմբային քննարկում Գյումրիում, 2017 թ. նոյեմբերի 23
[9] Սուսաննա Գրիգորյան («Պաշտոնական տեղեկագրեր» ՓԲԸ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 17

6. Լիցենզիաների գրանցամատյան

Հանձնառության ձևակերպումը
Անվանում Հաշվետու լիցենզավորում. Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում

Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում և տրամադրված լիցենզիաների թվայնացում: Պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծումը կնպաստի լիցենզիաների տրամադրման գործընթացի, ծանուցման ենթակա գործունեության տեսակների վարչարարության առավել պարզեցմանը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Իրականացնել միջազգային փորձի ուսումնասիրություն (2016 թ. օգոստոս – 2016 թ. հոկտեմբեր):*
2. *Իրականացնել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների մշակում (2016 թ. սեպտեմբեր – 2016 թ. նոյեմբեր):*
3. *Մշակել պետական մարմինների կողմից լիցենզիաների տրամադրման և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյան, համակարգչային ծրագիր (software) և ստեղծել էլեկտրոնային կայք (2016 թ. սեպտեմբեր – 2017 թ. մարտ):*
4. *Թվայնացնել նախկինում պետական մարմինների կողմից տրամադրված բոլոր լիցենզիաները և դրանք ներառել միասնական էլեկտրոնային գրանցամատյանում (2016 թ. դեկտեմբեր – 2017 թ. մարտ):*
5. *Համակցել էլեկտրոնային գրանցամատյանը այլ պետական էլեկտրոնային գրանցամատյաններին, օրինակ՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի բազայի հետ (e-register) (2017 թ. մարտ – 2017 թ. ապրիլ):*
6. *Կազմակերպել լիցենզիա տրամադրող պետական մարմինների ներկայացուցիչների համար էլեկտրոնային միասնական գրանցամատյանի վարման առանձնահատկությունների վերաբերյալ համապատասխան դասընթացներ (2016 թ. դեկտեմբեր – 2017 թ. մարտ):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. օգոստոս **Ավարտը՝** 2017 թ. ապրիլ

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող		Շնչված	Որոշակի վերջի	Չգիտի	Կանխորոշած
Լիցենզիաների գրանցամատյան		✔			Հստակ չէ					✔			Ոչ		✔		

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

Ներկայումս ՀՀ պետական մարմինների տրամադրած լիցենզիաների և ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ միասնական գրանցամատյան առկա չէ: Ծանուցման ենթակա գործունեությունը կարգավորվում է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով և ներառում է գործունեության այնպիսի տեսակներ, որոնց համար լիցենզավորում չի պահանջվում, սակայն անհրաժեշտ է համապատասխան ծանուցում ուղարկել պետական մարմիններին (օրինակ՝ որևէ ապրանքի արտադրության և/կամ վաճառքի դեպքում, այդ թվում՝ գինու, գարեջրի, անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների և այլն)[1]: Լիցենզիայի կամ ծանուցման առկայության կամ բացակայության մասին տեղեկությունները կամ դրանց իսկությունը հնարավոր է ստուգել միայն թղթային եղանակով: Գործունեության որոշ ոլորտներում լիցենզավորված կազմակերպությունների ցուցակները տեղադրվում են համապատասխան լիցենզիան տրամադրող լիազոր մարմինների կայքերում, սակայն այդ ցուցակների ընդհանուր ձևաչափ և հրապարակման որևէ պահանջ չկա: Պետական մարմինների անցկացրած մրցույթների կամ այլ միջոցառումների ժամանակ կազմակերպության լիցենզիայի առկայության կամ դրա վավերականության ստուգման գործընթացը կարող է ավելի արդյունավետ լինել միասնական էլեկտրոնային համակարգի առկայության պարագայում: Այդ դեպքում պատասխանատու կողմը, օգտվելով լիցենզիաների պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանից, կարող է ստուգել լիցենզիայի առկայության և դրա վավերականության մասին տեղեկությունները՝ մուտքագրելով լիցենզիայի համարը և ամսաթիվը[2]:

Հանձնառության տեքստում չի նշվում, որ միասնական էլեկտրոնային գրանցամատյանը մատչելի կլինի հանրության համար, ուստի դրա համապատասխանությունը տեղեկատվության մատչելիության արժեքին հստակ չէ: Եթե գրանցամատյանը բաց լինի հանրության համար, հանձնառությունը կարող է նշանակալիորեն բարելավել առկա պրակտիկան, քանի որ լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող կազմակերպությունները կարող են ուսումնասիրել, թե ինչ պայմաններով են նմանատիպ կազմակերպությունները լիցենզիա ստացել, և ավելի լավ նախապատրաստվել

դիմելու գործընթացին, իսկ քաղաքացիական վերահսկողության շնորհիվ կնվազեն անօրինական ծառայությունների մատուցման հետ կապված ռիսկերը: Այնուամենայնիվ, քանի որ հանձնառության տեքստում չի նշվում, որ գրանցամատյանը մատչելի կլինի հանրության համար, դրա պոտենցիալ ազդեցությունը գնահատվել է «փոքր»:

Հանձնառության կատարումը

Հանձնառության առաջին գործողությունը՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը, իրականացվել է 2016 թվականին: Այնուհետև մշակվել է գրանցամատյանի մշակման տեխնիկական առաջադրանքը[3]: Այս գործողությունների ընթացքում ՀՀ արդարադատության նախարարությունը սերտորեն համագործակցել է «Ներդաշնակ զարգացում» ՀԿ-ի հետ, որը հանձնառության մեջ նշվել է որպես քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմ[4]:

Զուգահեռաբար մշակվել և պետական մարմիններում շրջանառվել է համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների նախագիծը: Մասնավորապես, «Լիցենզավորման մասին» օրենքի փոփոխություններում ներկայացվել է լիցենզիաների էլեկտրոնային միասնական գրանցամատյանի հասկացությունը, այդ գրանցամատյանում ներառվող տեղեկությունների նկարագիրը, դրանք անվճար տրամադրելու կարգը և պետական տուրքի առավելագույն չափը[5]: Օրենքի փոփոխությունների նախագիծը խորհրդարանին է ներկայացվել 2017 թ. հուլիսին և ընդունվել 2017 թ. հոկտեմբերի 25-ին[6]: Փոփոխություններն ուժի մեջ կմտնեն 2018 թ. մայիսի 15-ից: Ըստ «Լիցենզավորման մասին» փոփոխված օրենքի՝ էլեկտրոնային գրանցամատյանում նշվում են լիցենզիա ունեցող իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ ազգանունը, անունը, բնակության վայրը և հաշվառման հասցեն, լիցենզիայի սերիան և համարը, լիցենզիա տալու ամսաթիվը և գրանցման համարը, գործունեության այն տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիա, գործունեությունն իրականացնելու հասցեն, գործողության ժամկետը և օրենքով նախատեսված այլ տեղեկություններ: Ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի փոփոխությունների, էլեկտրոնային գրանցամատյանում լիցենզիաների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման, վավերականության ստուգման կարգը և էլեկտրոնային գրանցամատյանից անվճար օգտվող պետական մարմինների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Միևնույն ժամանակ, օրենքում նշվում է, որ էլեկտրոնային գրանցամատյանում պահվող տեղեկությունները ֆիզիկական և իրավաբանական անձանց կարող են տրամադրվել առցանց՝ ՀՀ կառավարության սահմանած վճարի դիմաց, բայց անվճար կլինեն լիցենզիա ունեցող անձանց համար՝ իրենց վերաբերյալ տեղեկությունների մասով[7]: Էլեկտրոնային գրանցամատյանի ծրագրային փաթեթը մշակելու նպատակով պայմանագիր է կնքվել VX-Soft ընկերության հետ: Ձեկույցը գրելու պահին ընկերությունն արդեն մշակել էր ծրագրային փաթեթի նախագիծը և այն փորձարկել մի քանի պետական կառույցներում: ԱՀՄ հետազոտողին պայմանագրով նախատեսված՝ աշխատանքների մեկնարկի և ավարտի ժամկետների մասին տեղեկություն չի տրամադրվել: Ըստ ՀՀ արդարադատության նախարարության, որն այդ հանձնառության պատասխանատու կառույցն է, պլատֆորմի մեկնարկն ակնկալվում է այն

ժամանակ, երբ համապատասխան իրավական փոփոխությունները ուժի մեջ մտնեն[8]:

Թեև հանձնառության ավարտը նախատեսվում էր 2017 թ. ապրիլին, այն հետաձգվեց՝ պայմանավորված իրավական ակտն ընդունելու և անհրաժեշտ ֆինանսավորումը հատկացնելու ուշացումներով[9]:

Հետագա քայլերը

Որպեսզի հանձնառությունը համապատասխանի բաց կառավարման չափանիշներին, ԱՀՄ հետազոտողն առաջարկում է միջոցառումներ նախատեսել թափանցիկության բարելավման ուղղությամբ: Առաջարկվում է անվճար դարձնել լիցենզավորված անձանց մասին հիմնական տվյալները, մասնավորապես լիցենզավորված անձանց ցանկն ըստ գործունեության տեսակների՝ ներառյալ անվանումը կամ անունը, հասցեն և լիցենզիայի վավերականության ժամկետը, որպեսզի քաղաքացիները կարողանան պարզել լիցենզիայի առկայությունն ու վավերականությունը ըստ իրավաբանական կամ ֆիզիկական անձի անվան և գործունեության հասցեի: Որպես լրացուցիչ օգտակար բաղադրիչ, հարթակը կարող է ներառել պետական գերատեսչությունների կայքերում առկա տեղեկությունը որոշակի ոլորտում լիցենզիա ստանալու պահանջների և կարգի մասին, ինչպես նաև www.e-gov.am կայքում տեղադրված՝ լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգի և լիցենզավորված անձանց հաշվետվությունների հարթակի հղումները:

---

[1] ՀՀ օրենքը «Գործունեության իրականացման ծանուցման մասին», 13.11.2015, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117286

[2] Բաց կառավարման գործընկերություն, Հայաստանի Հանրապետության երրորդ գործողությունների ծրագիր (2016-2018 թթ.), http://ogp.am/u_files/file/OGP3AP.pdf

[3] Սուրեն Քրմոյան, Մարիամ Գալստյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 25

[4] Մերի Կատվալյան («Ներդաշնակ զարգացում» ՀԿ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 28

[5] ՀՀ օրենքը ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117125

[6] ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի պատմություն, http://www.parliament.am/draft_history.php?id=8898&lang=arm

[7] ՀՀ օրենքը ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117125

[8] Սուրեն Քրմոյան, Մարիամ Գալստյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 25

[9] Սուրեն Քրմոյան, Մարիամ Գալստյան (ՀՀ արդարադատության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. հոկտեմբերի 25

7. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրազեկում

Հանձնառության ձևակերպումը
Անվանում Open &Social. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում

«Open&Social» տվյալների հավաքագրման, համակարգման, վերլուծության և հասանելիության ապահովման վրա հիմնված գործիքի ներդրում, ինչպես նաև «114 թեժ գիծ» ծառայության «զանգի կենտրոն» ծառայության վերափոխում

«Open&Social» հանձնառության շրջանակներում մշակված ինովացիոն գործիքների՝ միջոցով կապահովվի հանրության առցանց մասնակցությամբ սոցիալական ծառայությունների մանրամասնորեն դասակարգված և ինքնաշխատ ներկայացվող տեղեկատվության հասանելիությունը, սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացում հանրության մասնակցությունը, ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեյտինգավորումը՝ ապահովելով սոցիալական ծառայությունների մատչելիության և իրազեկվածության բարձրացումը հանրության համար:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. *Շահառուին՝ սոցիալական ծառայությունների վերաբերյալ թիրախավորված տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով http://www.esocial.am ինտեգրված սոցիալական ծառայությունների առգիծ տեղեկատվական համակարգում «Open&Social» գործիքի ներդրում՝ ապահովելով շահառուի կողմից իրեն վերաբերող գործոնների ընտրությամբ՝ սոցիալական ծառայությունների տեղեկատվության ինքնաշխատ տրամադրում (2016 թ. նոյեմբեր – 2018 թ. հունիս):*
2. *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պարբերաբար իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների մոնիթորինգի և գնահատման հրապարակման ենթակա արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում սոցիալական պաշտպանության ոլորտի «Գիտելիքների կառավարման համակարգ»՝ www.elibsocial.am ռեսուրսում (2017 թ. հունվար – 2018 թ. հունիս):*
3. *Հարթակի ստեղծում, որտեղ հանրությանը հնարավորություն կտրվի կոնկրետ ծառայությանը և այդ ծառայությունը մատուցող կազմակերպությանը տալ բալային գնահատականներ, որոնց վերլուծության արդյունքում այդ ծառայությունները և սոցիալական պաշտանության ոլորտում գործող կազմակերպությունները կունենան որոշակի ռեյտինգ: Շահառուների կարծիքների հիման վրա մատուցվող ծառայությունների վերանայում, աշխատանքային գործընթացների պարզեցում, ժամանակի կրճատում (2017 թ. դեկտեմբեր – 2018 թ. հունիս):*
4. *«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնում թեժ գծի ծառայությունը զանգի կենտրոն դարձնելու միջոցով,*

քաղաքացիներից ստացվող բողոքների և ահազանգերի գծով ներքին ուսումնասիրությունների իրականացում (2017 թ. հուլիս – 2018 թ. հունիս):

Պատասխանատու կառույց՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ սփյուռքի նախարարություն

Սկիզբը՝ 2016 թ. նոյեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեղեկատվությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող		Շնչված	Որոշակի վիճակում	Չգալի	Ակնհայտորեն
Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավում և իրագործում			✔		✔	✔		✔			✔		Այո			✔	

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը

ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում են ավելի քան 80 պետական ծրագրեր, որոնք ապահովման բազմազան ընթացակարգեր ունեն[1]: Այս առումով սոցիալական ծառայությունների ընթացակարգերի մասին հանրությանն առավել մատչելի ձևով ու համապատասխան գործիքներով իրազեկելու և սոցիալական ծառայություններն առավել հասանելի դարձնելու անհրաժեշտություն կա: Դա նախատեսվում է անել՝ սոցիալական պաշտպանության բոլոր ծառայությունների վերաբերյալ տարբերակված տեղեկություններ տեղադրելով ըստ մատուցման վայրի, շահառուի կարգավիճակի և ծառայության տեսակի:

Հանձնառությունը նպատակ ունի համապարփակ տեղեկատվական հարթակ ներդնել, որը կներկայացնի այս կամ այն ծառայությունը ստանալու իրավասությունը, ծառայությունների շրջանակը և քարտեզագրումը: Այն կնպաստի տեղեկատվության մատչելիությանը և հանրային մասնակցության մեխանիզմների ապահովմանը:

Հանձնառության տեքստը կոնկրետության միջին աստիճան ունի: 1-ին և 3-րդ բաղադրիչներում չի նկարագրված, թե ինչ տեղեկություն է տրամադրվելու www.esocial.am կայքում և թե ինչ սկզբունքներով և չափանիշներով են շահառուները գնահատելու ծառայություններ մատուցող կազմակերպություններին: 2-րդ բաղադրիչում հստակ նշվում է, որ կտեղադրվեն այս ոլորտի ծառայությունների մոնիթորինգի և գնահատման առկա և հրապարակման ենթակա հաշվետվությունները: 4-րդ բաղադրիչը նախատեսում է զանգի կենտրոնի ստեղծում, սակայն զանգի կենտրոնի և թեժ գծի տարբերությունը հստակ չէ:

Հանձնառության հնարավոր ազդեցությունը գնահատվել է որպես չափավոր: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցչի խոսքով, այս հանձնառությունն իրականացվում է սոցիալական պաշտպանության ավելի խոշոր բարեփոխումների համատեքստում և կնպաստի սոցիալական ծառայությունների մատուցման պրակտիկայի փոփոխմանը: Մասնավորապես, քաղաքացիները կկարողանան օգտագործողի համար հարմարավետ ինտերնետային հարթակի միջոցով տեղեկանալ իրենց իրավունքների և հասանելի ծառայությունների, ինչպես նաև կոնկրետ ծառայությունների կամ նպաստների համար դիմելու ընթացակարգերի մասին: Ինտեգրված ծառայությունների մատուցման կենտրոնների աշխատակիցները ևս կօգտագործեն Open&Social նախաձեռնության շրջանակներում առկա տեղեկույթն ու գործիքները և կբարելավեն ծառայությունների արդյունավետությունը[2]: Մյուս շահագրգիռ կողմերը նշում են, որ իրենց նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար նախագծված հարթակները պետք է օգտվողների համար մատչելի ինտերֆեյս ունենան և պարբերաբար թարմացվող տեղեկատվություն ապահովեն: Անհրաժեշտ է լայնորեն իրազեկել հանրությանը հարթակների մասին[3]:

Հանձնառության կատարումը

Ակնկալվում է, որ հանձնառությունը կկատարվի ըստ սահմանված ժամկետների: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտն առանձնացրել է սոցիալական պաշտպանության հետ կապված հիմնական իրավական ակտերը՝ համապատասխան դրույթներով: Մշակվել են զբաղվածության ոլորտի պետական ծրագրերի շրջանակներում մատուցվող ծառայությունների մանրամասնված նկարագրություններ: Ձեկույցը գրելու պահին www.esocial.am կայքն արդեն գործում էր՝ տեղեկատվություն տրամադրելով ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնների քարտեզագրման և նկարագրության, ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ՝ ըստ տվյալ ծառայության համար իրավասու սոցիալական խմբերի կատեգորիաների, ինչպես նաև ներկայացնելով յուրաքանչյուր ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպությունների ցանկը և այլ տվյալներ:

Երկրորդ բաղադրիչի շրջանակներում www.elibsocial.am առցանց համակարգի էլեկտրոնային գրադարանում հրապարակվել են 2012-2016 թթ. ընթացքում մշակված սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման հաշվետվություններն ու հարակից նյութերը: Համակարգում անվճար գրանցման հնարավորությունից օգտվելու դեպքում գրանցված

օգտատերերը կարող են ավելի շատ տեղեկատվական հնարավորություններից օգտվել:

Երրորդ բաղադրիչի շրջանակներում նախատեսված սոցիալական ծառայությունների գնահատման հարթակը դեռևս մշակման փուլում է: Այս բաղադրիչով www.esocial.am հարթակի գրանցված օգտատերերի համար որոշակի սոցիալական ծառայությունների գնահատման հնարավորություն կտրամադրվի:

ԱՀՄ հետազոտողը տեխնիկական խնդիրներ է նկատել social.am և elibsocial.am հարթակներից օգտվելիս: Պատասխանատու գերատեսչության ներկայացուցիչը նշել է, որ տեխնիկական խնդիրները պայմանավորված են հոսթինգի ծառայության փոփոխությամբ:

Չորրորդ բաղադրիչի շրջանակներում առաջընթաց չի արձանագրվել: «Նորք» հիմնադրամի Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոնի ներկայացուցչի խոսքով, 1-14 թեժ գծի տեխնիկական վերազինումն իրականացվել է 2015 թվականի սկզբին, ներառյալ՝ առցանց խորհրդատվության ծառայության և թեժ գծի 24/7 ռեժիմով աշխատանքը՝ ոչ աշխատանքային ժամերին զանգերի գրանցման միջոցով: Սակայն 2017 թ. սեպտեմբերից առցանց խորհրդատվության ծառայությունը հասանելի չէ ֆինանսավորման բացակայության պատճառով:

Հետագա քայլերը

Հանձնառությունը պետք է ավարտվի գործողությունների ծրագրի մնացած ժամանակահատվածում: Շահագրգիռ կողմերի հետ քննարկումների հիման վրա ԱՀՄ հետազոտողը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

- Կազմակերպել իրազեկման լայնածավալ արշավ՝ ապահովելով հարթակների օգտագործումը սոցիալական տարբեր խմբերի լայն շրջանակի կողմից:
- Քննարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից գործարկվող մի շարք հարթակների համատեղման հնարավորությունը կամ մշակել դյուրըմբռնելի մի ամփոփաթերթ (տեղադրելով այն, օրինակ, նախարարության կայքում), որտեղ օգտվողին հարմար և մատչելի ձևաչափով կներկայացվեն տարբեր հարթակների նպատակներն ու հնարավորությունները:
- Ապահովել հարթակների հզոր տեխնիկական հնարավորություններն ու պատշաճ գործարկումը:
- Ապահովել շարքային օգտվողների համար տեքստի մատչելիությունն ու օգտագործողին հարմար ձևաչափը: Տեղեկությունների մատչելի ներկայացման նպատակով կարելի է օգտագործել գրաֆիկական ձևաչափով պատկերներ և կարճ տեսանյութեր:

---

[1] Բաց կառավարման գործընկերություն, Հայաստանի Հանրապետության գործողությունների երրորդ ծրագիր (2016-2018թթ.), http://ogp.am/u_files/file/OGP3AP.pdf

[2] Արման Սարգսյան (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 16

[3] Ֆոկուս-խմբային քննարկում Երևանում, 2017 թ. հոկտեմբերի 26, Անահիտ Խաչատրյան (ԱՄՆ ՄԶԳ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 8, Սուրեն Դեհերյան («Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 28:

8. Մեկ պատուհան զինկոմիսարիատներում

Հանձնառության ձևակերպումը
Անվանում՝ Մեկ պատուհան բանակում. ՀՀ զինկոմիսարիատներում «Մեկ պատուհանի» պիլոտային ծրագրի ներդրում

«Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի իրականացում 2-3 զինկոմիսարիատներում: «Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի փորձարկման և հետագա ներդրման միջոցով՝ զինկոմիսարիատների աշխատանքում վարչարարության բարելավում և կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, զինկոմիսարիատի անձնակազմի հետ քաղաքացիների շփումների շրջանակի սահմանափակում, հայցվող տեղեկատվության/փաստաթղթերի տրամադրման ժամկետների կրճատում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

6. *«Մեկ պատուհանին» վերաբերող գործառույթների շրջանակի հստակեցում (2016 թ. սեպտեմբեր – 2017 թ. նոյեմբեր):*
7. *Զինկոմիսարիատների կարողությունների գնահատում և ընտրություն (2016 թ. դեկտեմբեր - 2017 թ. փետրվար):*
8. *«Մեկ պատուհանի» ներդրում (2017 թ. մարտ - 2018 թ. հունիս):*
9. *Հասարակական վստահության փոփոխության վերաբերյալ հետազոտություն (ըստ անհրաժեշտության) (2018 թ. հունվար - 2018 թ. հունիս):*
10. *Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններիվերաբերյալ առաջարկությունների ներկայացում (ըստ անհրաժեշտության) (2018 թ. մարտ - 2018 թ. հունիս):*

Պատասխանատու կառույց՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ չկան

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր **Ավարտը՝** 2018 թ. հունիս

Հանձնառությունը	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին				Պոտենցիալ ազդեցությունը				Ժամկետի մեջ	Կատարման աստիճանը			
	Առկա չէ	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության մատչելիություն	Հանրային մասնակցություն	Հանրության առջև հաշվետվողականություն	Տեխնոլոգիան և նորարարությունը հանրային թափանցիկության և հաշվետվողականության	Ոչ մի	Փոքր	Չափավոր	Փոխակերպող		Չսկսված	Ընթացքի մեջ	Չցանի	Ավարտված
Մեկ պատուհան զինկոմիսարիատներում		✔			Հստակ չէ					✔			Ոչ	✔			

Իրավիճակի նկարագիրը և հանձնառության նպատակը
Հայաստանում 18-ից 27 տարեկան տղամարդիկ պարտադիր երկամյա զինվորական ծառայություն են անցնում: Զորակոչիկների նախնական

կցագրումը և հաշվառումը, զորակոչի գործընթացը, զորացրվածների հաշվառումը և համապատասխան փաստաթղթերի տրամադրումը իրականացնում են տվյալ տարածքի (թաղի կամ համայնքի) զինվորական կոմիսարիատները (զինկոմիսարիատներ): Զինկոմիսարիատների գործունեության շրջանակը բավականին բազմաբնույթ է, և որոշ հարցերում օրենսդրության կարգավորման հստակեցման անհրաժեշտություն կա[1]: «Մեկ պատուհան» պիլոտային ծրագրի ներդրումը 2-3 զինկոմիսարիատներում հնարավորություն կտա փորձարկել դրա արդյունավետությունը հավաստագրերի, փաստաթղթերի տրամադրման և այլն ծառայությունների մատուցման տեսանկյունից:

«Մեկ պատուհանի» ներդրումը հնարավորություն կտա վերացնել այն խնդիրները, որոնք առաջանում են փաստաթղթերի տրամադրման գործընթացում քաղաքացիների հետ անձնական շփումների ընթացքում՝ սահմանափակելով անմիջական հաղորդակցությունը զինկոմիսարիատների ներկայացուցիչների և քաղաքացիների միջև:

Հանձնառության տեքստը կոնկրետության ցածր աստիճան ունի: Թեև հանձնառության մեջ հստակ նշված են նպատակները և գործողությունները, «մեկ պատուհանի» միջոցով մատուցվող ծառայությունների շրջանակը չի սահմանված:

Հանձնառությունն առնչվում է վարչարարության և ծառայությունների բարելավմանը, քանի որ այն նպատակ ունի պարզեցնել զինկոմիսարիատների այցելուներին տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգերը: Այնուամենայնիվ, հանձնառությունը չի ներառում որևէ գործունեություն, որը կբերի թափանցիկության, քաղաքացիական վերահսկողության կամ զինվորական ծառայության ոլորտում հանրության առջև հաշվետվողականության բարելավմանը: Հետևաբար, հանձնառության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին հստակ չէ:

Իրագործման դեպքում հանձնառությունը կարող է օգնել զինկոմիսարիատներին՝ ավելի հաճախորդամետ ծառայություններ մատուցելու հարցում: Զինկոմիսարիատները սովորաբար ոչ միայն փաստաթղթեր, զինգրքույկներ և այլ թղթավարություն են տրամադրում, այլև առաջնային շփման օղակ են զինվորների հարազատների համար, երբ որևէ տեղեկատվության անհրաժեշտություն կամ զինվորական ծառայության հետ կապված որևէ դժգոհություն է լինում: «Մեկ պատուհանի» կիրարկման արդյունքում զինվորական պաշտոնյաների փոխարեն այցելուները կառնչվեն տեղեկատվության և սպասարկման ոլորտում մասնագիտացած քաղաքացիական ծառայողների հետ: Զինծառայողների իրավունքների և զինծառայության մասին իրազեկման ոլորտում աշխատող ՔՀԿ-ի ներկայացուցիչը նշում է, որ «մեկ պատուհանի» մոտեցումը հաղորդակցության և փաստաթղթերի տրամադրման ավելի արդյունավետ միջոց կլինի: Մասնավորապես, այն կօգնի խնայել այցելուների ժամանակը և կնպաստի զինվորական ծառայության հետ կապված փաստաթղթերի արագ տրամադրմանը և գործընթացի վերահսկմանը[2]: Այնուամենայնիվ, քանի որ ներկա հանձնառությունը ներառում է «մեկ պատուհանի» պիլոտային ծրագրի իրականացում միայն 2-3 զինկոմիսարիատներում, հանձնառության հնարավոր ազդեցությունը գնահատվել է «փոքր»:

Հանձնառության կատարումը

2016 թվականին «մեկ պատուհան» ծրագրի ներդրման համար առանձնացվել են Երևան քաղաքի Նոր Նորք և Կենտրոն համայնքների զինկոմիսարիատները[3]: Սակայն կառավարության հրաժարականից հետո 2016 թ. հոկտեմբերին փոխվեց ՀՀ պաշտպանության նախարարը, իսկ նախարարության աշխատանքի ռազմավարությունը վերանայվեց: 2017 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին խորհրդարանն ընդունեց զինվորական ծառայության մասին մի շարք նոր օրենքներ, և բարեփոխումներ նախատեսվեցին նաև զինկոմիսարիատներում: Ներկայումս այս հանձնառության իրականացումը կասեցված է[4]:

Դիտարկվում է զինվորական կոմիսարիատների մատուցած ծառայությունների մի մասը «Հայփոստ» ՓԲԸ ծառայության միջոցով իրականացնելու տարբերակը[5]: Հարկ է նշել, որ 2016 թ. նոյեմբերից քաղաքացիներին մի շարք փաստաթղթեր են տրամադրվում պետական ծառայության մատուցման միասնական գրասենյակների միջոցով, որոնք հիմնականում գտնվում են «Հայփոստի» գրասենյակներում՝ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում[6]: Այդ փաստաթղթերից են, օրինակ, ամուսնական կարգավիճակի, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, չդատվածության մասին և այլ տեղեկանքները: Այսինքն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հնարավոր է համարում նույն համակարգով զինվորական ծառայության հետ կապված վկայագրերի տրամադրումը, որը զինկոմիսարիատների համար ժամանակ և մարդկային ռեսուրսներ կխնայի և կբացառի փաստաթղթերի տրամադրման ընթացքում դեմ առ դեմ շփվելու հնարավորությունները: Այնուամենայնիվ, միասնական համակարգի միջոցով տրամադրվող ծառայությունները կսահմանափակվեն ստանդարտ տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրմամբ, մինչդեռ այլ տեսակի հարցումներն ուղղվելու են զինկոմիսարիատներին:

2017 թ. հունվարին ՀՀ պաշտպանության նախարարությունը գործարկեց «Թեժ գիծ» (1-28) ծառայությունը[7], որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս զինվորական ծառայության վերաբերյալ ցանկացած հարցով հարցումներ ուղղել և բողոքներ ներկայացնել, այդ թվում՝ զինվորների նկատմամբ վատ վերաբերմունքի, բժշկական զննումների արդյունքների, կոռուպցիոն դեպքերի կամ վարչական խոչընդոտների վերաբերյալ: Այս առումով կարելի է ասել, որ «Թեժ գիծը» մասամբ ընդգրկում է «մեկ պատուհանի» համակարգում նախատեսված ծառայությունները (տեղեկությունների տրամադրում և բողոքների արձագանքում):

Հետագա քայլերը

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության՝ հնարավոր է, որ հանձնառությունը վերաձևակերպվի՝ նախարարության վերանայված մոտեցումն արտացոլելու նպատակով: Այնուամենայնիվ, դեռևս հայտնի չէ վերանայված մոտեցման իրականացման ժամանակացույցը, քանի որ այն կախված է բարեփոխումների ավելի լայնածավալ գործընթացից[8]:

ՔՀԿ-ների հետ հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում մի շարք մտահոգություններ են հնչել հանձնառության ձևափոխված տարբերակի հետ կապված: Ըստ այդմ, ծառայությունների

մատուցումը միասնական պետական ծառայության միջոցով կազմակերպելու դեպքում առաջարկվում է հաշվի առնել հետևյալը.

- հստակեցնել պետական ծառայության միասնական համակարգի մատուցելիք ծառայությունների ցանկը՝ զինկոմիսարիատների մասով,
- համապատասխան լուծումներ գտնել զինվորական ծառայության հետ կապված փաստաթղթերի գաղտնիությունը պահպանելու համար,
- հստակեցնել ծառայությունների մատուցման միասնական համակարգին զուգահեռ զինկոմիսարիատների միջոցով նույն ծառայությունների մատուցումը շարունակելու հնարավորությունները,
- իրազեկման լայնածավալ արշավ պլանավորել, որպեսզի քաղաքացիները տեղյակ լինեն միասնական համակարգի տրամադրելիք նոր հնարավորություններին:

Այս առաջարկները կարող են հաշվի առնվել զինկոմիսարիատների հետագա բարեփոխումների ընթացքում, սակայն գործողությունների հաջորդ ծրագրում առաջարկվում է ընդգրկել այնպիսի հանձնառություններ, որոնք համապատասխանում են ԲԿԳ արժեքներին, այսինքն՝ տեղեկատվության մատչելիությանը, հանրության առջև հաշվետվողականությանը կամ հանրային մասնակցությանը:

---

[1] Բաց կառավարման գործընկերություն, Հայաստանի Հանրապետության գործողությունների երրորդ ծրագիր (2016-2018թթ.), http://ogp.am/u_files/file/OGP3AP.pdf

[2] Սերգեյ Հարությունյան («Օգնություն և իրավունք» ՀԿ), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 7

[3] ԲԿԳ Հայաստանի գործողությունների երրորդ ծրագրի (2016-2018) ինքնագնահատման միջանկյալ զեկույց, http://ogp.am/u_files/file/Armenia_MID-TERM_report_3AParm.doc

[4] Ալեքսանդր Ավետիսյան (ՀՀ պաշտպանության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 27

[5] Ալեքսանդր Ավետիսյան (ՀՀ պաշտպանության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 27

[6] Պետական ծառայությունների մատուցումն ավելի մոտ կլինի ՀՀ քաղաքացիներին. բացվեցին միասնական գրասենյակներ, Արմենպրես, 18.11.2016, https://armenpress.am/arm/news/868529/petakan-tsarayutyunneri-matucumn-aveli-mot-klini-hh.html

[7] Գործարկվել է ՀՀ պաշտպանության նախարարության «Թեժ գիծը», 10.01.2017, http://www.mil.am/hy/news/4576

[8] Ալեքսանդր Ավետիսյան (ՀՀ պաշտպանության նախարարություն), ԱՀՄ հետազոտողի հարցազրույց, 2017 թ. նոյեմբերի 27

V. Հիմնական առաջարկներ

Անհրաժեշտ է հանրային իրազեկման համակարգված արշավ իրականացնել թե՛ գործողությունների ծրագրի մշակման և թե՛ ծրագրի իրականացման ու ստացած արդյունքների հետ կապված հետագա քայլերի ընթացքում: Գործողությունների հաջորդ ծրագրերում պետք է ընդգրկել շահագրգիռ կողմերի գերակայություններն արտացոլող հարցեր, ինչպես, օրինակ, ծախսերի թափանցիկությունը, քաղաքացիական մասնակցությունը և հակակոռուպցիոն միջոցառումները, ինչպես նաև համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներ նախատեսել՝ հանձնառությունների լիարժեք իրականացումն ապահովելու համար:

Այս բաժնի նպատակն է ուղղություն տալ գործողությունների նոր ծրագրի մշակման և գործողությունների ընթացիկ ծրագրի իրագործման գործընթացներին: Այն բաղկացած է երկու մասից՝ 1) զեկույցը մշակելու ընթացքում բացահայտված՝ քաղաքացիական հասարակության և պետական մարմինների գերակայությունները և 2) ԱՀՄ առաջարկները:

5.1 Շահագրգիռ կողմերի գերակայությունները

Գործողությունների ընթացիկ ծրագրի առաջնահերթությունների շարքում շահագրգիռ կողմերը հիմնականում առանձնացնում են թափանցիկության հետ կապված հարցերը: Դրանք ներառում են պետության ֆինանսավորված ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների և հաշվետվությունների տրամադրումը (հանձնառություն 2), պաշտոնատար անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի կատարելագործումը (հանձնառություն 4) և պատասխանատու լիցենզավորումը (հանձնառություն 6):

Շահագրգիռ կողմերն առաջարկում են ընդլայնել ներկա հանձնառությունների շրջանակը՝ ընդգրկելով հետևյալ միջոցառումները.

- Դրամաշնորհների տրամադրման մրցակցային մեխանիզմներ ստեղծել և ընդլայնել պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասին հրապարակված տեղեկությունների և հաշվետվությունների շրջանակը՝ ներառելով սուբսիդիաները, նվիրատվությունները և ֆինանսավորման այլ տեսակները: Երկրորդ հանձնառության հիմքում ընկած հիմնական խնդիրը պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերն իրականացնող կազմակերպությունների ընտրության, մոնիթորինգի և հաշվետվողականության, ինչպես նաև այդ կազմակերպությունների և ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման ընթացակարգերի բացակայությունն է:
- Միջոցառումներ ձեռնարկել պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերում տրամադրված տեղեկությունների իսկությունը ստուգելու ուղղությամբ և տեղեկություններ հրապարակել ստացած արդյունքների և անհրաժեշտության դեպքում կիրառված պատժամիջոցների մասին: ՔՀԿ-ները կասկածում են, որ հայտարարագրերի մասին բաց տվյալները կարող են որևէ

ազդեցություն ունենալ, եթե պատասխանատու մարմինները համապատասխան միջոցներ չձեռնարկեն պաշտոնյաներին կեղծ կամ ուշացած հայտարարագրերի և ապօրինի հարստացման համար պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

- Ընդլայնել պաշտոնատար անձանց հայտարարագրերում ներառված տեղեկությունների շրջանակը՝ ներառելով դրամական նվիրատվությունների աղբյուրները, այն ընկերությունները, որոնց սեփականատեր են, անշարժ գույքի աշխարհագրական տեղակայումը, վարկի աղբյուրները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների շրջանակը՝ ընդգրկելով նաև առանձին ապրող հարազատներին: Ըստ լրագրողական հետաքննությունների տվյալների՝ հաճախ որպես ընկերությունների սեփականատեր կամ բաժնետեր են գրանցում պաշտոնատար անձանց կամ նրանց ամուսինների ծնողներին, ինչպես նաև առանձին բնակվող զավակներին:

Շահագրգիռ կողմերը գործողությունների հաջորդ ծրագրի համար կարևորում են հակակոռուպցիոն նոր միջոցառումների ներառումը, այդ թվում՝

- Անվճար տրամադրել ընկերությունների հիմնադիրների և ներկայիս բաժնետերերի վերաբերյալ տեղեկություն: Լրագրողական հետաքննություններում և ՔՀԿ-ների մոնիթորինգային զեկույցներում պետական գնումների հետ կապված շահերի բախման խնդիրներ են արձանագրվել: Ըստ օրենքի, հիմնադիրների անունները կարելի է անվճար գտնել www.e-register.am կայքում հրապարակված՝ պետական ռեգիստրի տվյալների բազայից[1], սակայն բաժնետիրական ընկերությունների և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադիրների վերաբերյալ տեղեկությունը փաստացի հասանելի չէ, ինչպես և տեղեկությունը ընկերությունների ներկայիս բաժնետերերի մասին: Կոնկրետ կազմակերպության (ներառյալ հիմնադիրների և ընթացիկ բաժնետերերի) մասին տեղեկությունները տրամադրվում են պետական ռեգիստր ուղարկված հարցման հիման վրա՝ պետական տուրքի վճարումից հետո:
- Հրապարակել պետական բյուջեի միջոցներից հատկացված՝ պաշտոնյաների անձնական ծախսերի մասին տեղեկությունը, մասնավորապես, տրանսպորտային միջոցների և հեռախոսային կապի օգտագործման մասով: Լրատվամիջոցներում վերջերս հրապարակված նյութերում խորհրդարանի անդամների կողմից հեռախոսային խոսակցությունների համար զգալի գումարներ ծախսելու փաստեր են նշվել: Անձնական նպատակների համար պաշտոնական մեքենաների օգտագործումը ևս հաճախ քննարկվող խնդիր է:
- Ժամանակին տեղեկատվություն հրապարակել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործունեության և որոշումների մասին: Մենաշնորհները տնտեսության մի քանի հատվածներում և շուկայում մրցակցության բացակայությունը քաղաքացիական հասարակության բարձրացրած կարևորագույն հարցերն են, և կարևոր է առաջնություն տալ այս գործունեության հաշվետվողականության ապահովմանը:

5.2 ԱՀՄ առաջարկները

Անհրաժեշտ է էլ ավելի ընդլայնել իրազեկման միջոցառումները և ՔՀԿ-ների ներգրավումը թե՛ գործողությունների ծրագրի մշակման, թե՛ իրականացման ընթացքում: Դա հնարավորություն կտա ավելի նշանակալի ներդրում ստանալ գործողությունների ծրագրի նախագծում և հետագայում ավելի արդյունավետ իրականացնել այն: Միևնույն ժամանակ, գործողությունների հետագա ծրագրերում կառավարությունը պետք է ավելի հավակնոտ հանձնառություններ ստանձնի, որոնք կվերաբերեն տեղեկատվության մատչելիության, հանրության առջև հաշվետվողականության և հանրային մասնակցության խնդիրներին:

Երկրի գերակա խնդիրներին վերաբերող հավակնոտ հանձնառություններ

Խորհուրդ է տրվում ավելի հավակնոտ հանձնառություններ ստանձնել, որոնք կարող են վերափոխել առկա պրակտիկան բաց բյուջետավորման, թափանցիկ և հաշվետու ծախսերի, ինչպես նաև բենեֆիցիար սեփականության և կազմակերպությունների իրական շահառուների իսկության ստուգման ոլորտներում: Առկա խնդիրները լուծելու համար գործողությունների հաջորդ ծրագրում պետք է ներառել այնպիսի հանձնառություններ, որոնք անդրադառնում են պետական գերատեսչությունների կողմից դրամաշնորհներ կամ ծառայությունների պայմանագրեր շնորհելու համար կազմակերպություններին ընտրության թափանցիկ և արդար չափանիշների վրա հիմնված մրցակցային մեխանիզմների ստեղծմանը և ապա հաշվետվողականության միջոցների կիրառմանը: Թափանցիկության բարելավման կարիք ունեցող մեկ այլ ոլորտ է www.e-register.am կայքում հրապարակված տեղեկատվությունը ընկերությունների սեփականատերերի և մասնակիցների վերաբերյալ: Կառավարությունը կարող է ստանձնել ռեգիստրում բոլոր ընկերությունների հիմնադիրների և ընթացիկ բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվության անվճար տրամադրումը:

Պետական ծախսերի վերաբերյալ ավելի հավակնոտ հանձնառության օրինակ կարող է լինել պետական բյուջեի միջոցներից պաշտոնյաների անձնական ծախսերի մասին տեղեկությունների հրապարակումը, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցների և հեռախոսային կապի օգտագործման մասով:

Գործողությունների ծրագրի մշակման և իրականացման վերաբերյալ իրազեկում

Թեև գործողությունների նախորդ ծրագրերի համեմատ՝ գործողությունների երրորդ ծրագրի մշակման ընթացքում կառավարությունն ավելի շատ իրազեկման միջոցառումներ է նախաձեռնել, տրամադրված առաջարկների որակը և ներգրավված լսարանի շրջանակը բարելավման կարիք ունեն: ԲԿԳ Հայաստանի կայքը և ֆեյսբուքյան էջը օգտվողների նեղ շրջանակ են ներառում և կառավարվում են ՔՀԿ-ի կողմից, ինչը վտանգի տակ է դնում այդ միջոցների կայունությունը: ԱՀՄ հետազոտողը խորհուրդ է տալիս իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ իրականացնել հետևյալ գործողությունները.

- Ավելի շատ ռեսուրսներ և միջոցներ օգտագործել թե՛ ԲԿԳ-ի ընդհանուր հայեցակարգը և թե՛, մասնավորապես, գործողությունների ծրագիրը

մշակելու և իրականացնելու գործընթացների մասին իրազեկությունը բարձրացնելու համար:

- ՔՀԿ-ներին ակտիվորեն ներգրավել ինչպես ծրագրի շուրջ խորհրդակցություն կազմակերպելու, այնպես էլ իրականացնելու գործընթացներում՝ իրենց առկա ռեսուրսների շրջանակներում կամ լրացուցիչ ռեսուրսներ հատկացնելով պետական և միջազգային դոնորների միջոցներից: Ընդլայնել մարզային շահագրգիռ կողմերի շրջանակը և հստակ ձևակերպել ԲԿԳ ուղերձները գործողության պլանը մշակելու վերաբերյալ խորհրդակցությունների ընթացքում:
- Լայնածավալ իրազեկման արշավներ կազմակերպել գործողությունների ընթացիկ և նախորդ ծրագրերի արդյունքների վերաբերյալ: Այդ նպատակով կառավարությունը կարող է օգտագործել հանրային հեռուստատեսության «Հրապարակում» ծրագիրը, որն անդրադառնում է կառավարության գործունեությանն ու ծրագրերին[2]: Կառավարությունը կարող է պատրաստել և օգտագործել ԲԿԳ-ի վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ներկայացնող տեսահոլովակներ, որոնք ուղղված կլինեն ինչպես մշակման գործընթացում առաջարկների հավաքագրմանը, այնպես էլ հանձնառությունների կատարման արդյունքում ստացած ռեսուրսների օգտագործման ապահովմանը:
- Ստանձնել ԲԿԳ Հայաստանի կայքի և ֆեյսբուքյան էջի տնօրինումը՝ պետական բյուջեից ապահովելով կայքի ծախսերը և ադմինիստրացիայի ու սպասարկման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները:
- Ստանձնած հանձնառությունների հաջողված արդյունքները ներկայացնել միջազգային ասպարեզում:

ՔՀԿ-ների մասնակցությունը ԲԿԳ գործընթացներում

ԲԿԳ նախաձեռնության շրջանակում ստեղծված բազմաշահառու աշխատանքային խումբն արդյունավետ հարթակ է շահագրգիռ կողմերի միջև տեղեկությունների փոխանակման, քննարկումների և երկխոսության համար: Անհրաժեշտ է կանոնավոր հիմքի վրա դնել աշխատանքային խմբի հանդիպումները և աշխատակարգի հետ միասին մասնակցության թափանցիկ ընթացակարգեր ներդնել: Խմբի ներքին ընթացակարգերը ներկայումս մշակման փուլում են. առաջարկվում է հաստատելուց հետո հրապարակել դրանք:

ՔՀԿ-ները մտահոգված են ծրագրի իրականացման փուլում համագործակցության և խորհրդակցությունների պակասով: Թեպետ գործողությունների երրորդ ծրագրում ստանձնած բոլոր հանձնառություններում որպես շահագրգիռ կողմեր ՔՀԿ-ներ են նշված, իրականացման գործընթացում ՔՀԿ-ների ներգրավումն անբավարար էր: Մի կողմից, պատասխանատու մարմինները հաճախ չէին հաղորդակցվում ներգրավված ՔՀԿ-ների հետ, մյուս կողմից՝ ՔՀԿ-ներն իրենք նախաձեռնություն չէին դրսևորում: ՔՀԿ-ների որոշ ներկայացուցիչներ իրենց պասիվությունը բացատրում են վստահության և մոտիվացիայի պակասով, գործողությունների նախորդ ծրագրի արդյունքների հետ կապված հիասթափությամբ և ընթացիկ ծրագրում փոխակերպող բնույթ ունեցող հանձնառությունների բացակայությամբ: Այնուամենայնիվ, շահագրգիռ կողմերի կարծիքով, ինչպես նաև ըստ Հայաստանի ԱՀՄ 2014-15 թթ. միջանկյալ զեկույցի[3],

հանձնառություններն առավել հաջող են կատարվում, երբ ՔՀԿ-ները ներգրավված են լինում իրականացման կամ մոնիթորինգի գործընթացում: Հետևաբար առաջարկվում է, որ կառավարությունն ակտիվ քայլեր ձեռնարկի նշված մտահոգությունները հասցեագրելու համար և մասնակից ՔՀԿ-ներին ներգրավի իրականացման գործընթացում, այդ թվում՝ ընթացիկ արդյունքների, մարտահրավերների և կոնկրետ հանձնառությունների արդյունավետ իրականացման շուրջ կանոնավոր խորհրդակցություններ կազմակերպելու միջոցով:

Գործողությունների պլանի բովանդակությունը

Ըստ կառավարության կողմից նախանշված սահմանափակումների՝ ընտրվել են միայն գործադիր մարմինների պատասխանատվության ներքո գտնվող հանձնառությունները, ինչը բերել է գործողությունների ծրագրի շրջանակի նեղացմանն ու հավակնությունների ավելի ցածր մակարդակի: Այս մոտեցումը թույլ չի տալիս անդրադառնալու քաղաքացիական հասարակության մտահոգությունների հետ կապված բազմաթիվ հարցերի:

ԲԿԳ գործողությունների ծրագիրը պետք է դիտարկել որպես գործողությունների ազգային ծրագիր, որը ներառում է իշխանության բոլոր ճյուղերը, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը: Մի շարք երկրներ օրենսդրական փոփոխություններ են ներառել գործողությունների իրենց ծրագրերում, որոնք ուղղված են երկրի գերակայություններն արտացոլող խնդիրների լուծմանը: Օրինակ, Ուկրաինայի գործողությունների երրորդ ծրագրում ընդգրկված են օրենսդրական փոփոխություններ նախատեսող մի շարք հանձնառություններ, ինչպիսիք են, օրինակ, քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների մշակումը, արդյունահանող ճյուղերում տեղեկությունների հրապարակումը և հանրային խորհրդատվությունները[4]:

Հայաստանի կառավարությունը կարող է որպես շահագրգիռ կողմ ներգրավել խորհրդարանի ներկայացուցիչներին՝ օրենսդրական փոփոխություններ պահանջող հանձնառություններ ներառելու նպատակով: Գործողությունների ընթացիկ ծրագիրը ևս, ըստ Էության, ներառում է հանձնառություններ, որոնք դուրս են գործադիր իշխանության իրավասությունից: Օրինակ, 4-րդ հանձնառությունը վերաբերում է անկախ հանձնաժողովին, որը կառավարության կազմում չէ, բայց, այնուամենայնիվ, պատասխանատվություն է կրում իրագործման համար:

Ֆինանսական սուղ միջոցները հանձնառությունների ընտրության մեկ այլ գործոն են, թեև առաջարկների ամփոփագրում դրանք չեն նշվել որպես առաջարկների մերժման պատճառ: Որոշ դեպքերում ֆինանսական խնդիրները պատասխանատու մարմինների կողմից նշվել են նաև որպես հանձնառությունները հետաձգելու և/կամ ոչ լիարժեք կատարելու պատճառ: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները համարում են, որ կառավարությունը կարող է և պետք է միջոցներ հատկացնի բյուջեից՝ բոլոր հանձնառություններն առավել արդյունավետ կատարելու համար: Ռեսուրսներ կարող են հատկացվել նաև պետական կառավարման բարելավմանն ուղղված խոշոր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Առաջարկվում է նախքան գործողությունների ծրագրում հանձնառություն ներառելը գնահատել հանձնառությունն

իրականացնելու նախնական բյուջեն և պլանավորել ֆինանսավորման հնարավոր աղբյուրները՝ իրականացման և արդյունքների հետագա պահպանման համար: Հանձնառության համադրումը ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների արդեն իսկ ֆինանսավորված համահունչ ծրագրերի հետ ևս կարող է խնդրի լուծում լինել (ինչպես եղել է գործողությունների երկրորդ ծրագրի դեպքում):

Գործողությունների ծրագրի մշակման ընթացքում ներկայացված առաջարկների ամփոփագրի հրապարակումը կարևոր դրական քայլ է: Այնուամենայնիվ, առաջարկները մերժելու բացատրություններն ընդհանրացված են և անորոշ: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում յուրաքանչյուր առաջարկը մերժելու վերաբերյալ առանձին բացատրություն տրամադրել՝ հաշվետվողականությունն ապահովելու և գործընթացի նկատմամբ վստահությունը բարելավելու համար:

Արդյունավետության գնահատում և արդյունքների կայունություն

ԲԿԳ ծրագրերի շրջանակներում առկա ձեռքբերումների կայունության խնդիրը ևս մտահոգիչ է: Հարկավոր է ապահովել ստեղծված հարթակների կիրարկումն ու հարմարավետությունը: Տեղեկատվության բազմաթիվ աղբյուրների մասին իրազեկության բացակայությունը շեշտվում է բազմազան շահագրգիռ կողմերի կողմից, իսկ ԲԿԳ հանձնառությունների միջոցով ստեղծված հարթակները միշտ չէ, որ գործում են: Օրինակ, գործողությունների երկրորդ ծրագրի շրջանակներում ստեղծված՝ առողջապահական համակարգի ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ տրամադրող www.sha.am պորտալը ներկայումս հասանելի չէ: ԲԿԳ հանձնառությունների արդյունքների կայունության համար պետք է համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներ ապահովել: Բաց տվյալների շտեմարանների գույքագրումը, դրանց կիրառումն ապահովելու նպատակով իրազեկման արշավների կազմակերպումը ևս կնպաստեն ձեռք բերված արդյունքների պահպանմանը և կօգնեն հասնելու ստանձնած հանձնառությունների նախատեսած նպատակներին:

ՔՀԿ-ների արձագանքների հիման վրա առաջարկվում է անցկացնել ոչ միայն ընթացիկ, այլև նախորդ ծրագրերի շրջանակներում իրականացված հանձնառությունների արդյունքների գնահատում և ազդեցության ուսումնասիրում: Դա կօգնի հասկանալ հանձնառությունների փաստացի ազդեցությունն ու առկա բացերը և ստացած տեղեկություններն օգտագործել կառավարության և քաղաքացիական հասարակության հետագա գործունեության ընթացքում, այդ թվում՝ գործողությունների հաջորդ ծրագրերի միջոցով: Գնահատումը կարող է օգտակար լինել նաև ԲԿԳ նախաձեռնության տեսանելիության և հետևաբար՝ նախաձեռնության արդյունավետության հանդեպ հանրային վստահությունը բարելավելու համար:

Աղյուսակ 5.1: Հինգ առանցքային առաջարկ

1	ԲԿԳ նախաձեռնության և, մասնավորապես, գործողությունների ծրագիրը մշակելու, ինչպես նաև ձեռք բերված արդյունքների մասին իրազեկելու համար ավելի շատ ռեսուրսներ նախատեսել և օգտագործել լայն լսարան ունեցող հաղորդակցության միջոցներ, այդ թվում՝ սոցիալական գովազդ և հաղորդակցման այլ գործիքներ:
2	Համագործակցել խորհրդարանի հետ՝ ընդգրկելով տեղեկատվության մատչելիության, հանրության առջև հաշվետվողականության և հանրային մասնակցության վերաբերյալ ավելի հավակնոտ հանձնառություններ, որոնք կարող են պահանջել օրենսդրական փոփոխություններ:
3	Ընդլայնել բյուջեին վերաբերող հանձնառությունների շրջանակները՝ ուշադրություն դարձնելով պետական ծախսերի թափանցիկության և բյուջեի մշակման գործընթացում հանրության մասնակցության խնդիրներին: Գործադիր մարմինների կողմից պետական դրամաշնորհների և ծառայությունների պայմանագրերի տրամադրման մրցունակ և թափանցիկ մեխանիզմների ստեղծումը նման հանձնառություններից մեկը կարող է լինել:
4	Ընդգրկել հակակոռուպցիոն խնդիրներին ուղղված ավելի հավակնոտ հանձնառություններ, օրինակ, ընկերությունների հիմնադիրների և ներկայիս բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովում:
5	Հանձնառությունների իրական ազդեցության և բացերն ի հայտ բերելու նպատակով իրականացնել կատարված հանձնառությունների արդյունքների գնահատում և ազդեցության ուսումնասիրում՝ ստացած տեղեկություններն օգտագործելով կառավարության և քաղաքացիական հասարակության հետագա գործունեության ընթացքում, այդ թվում՝ գործողությունների հետագա ծրագրերի միջոցով:

[1] ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, հոդված 61, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110864

[2] «Հրապարակում» հաղորդում, http://www.gov.am/am/hraparakum/

[3] Հայաստանի ԲԿԳ միջանկյալ զեկույց, 2014-2015 թթ., https://www.opengovpartnership.org/sites/default/files/Armenia_IRM2_14-15_0.pdf

[4] Ուկրաինայի գործողությունների երրորդ ծրագիր, 2016-2018 թթ., https://www.opengovpartnership.org/documents/ukraine-third-national-action-plan-2016-2018

VI. Մեթոդոլոգիան և տեղեկատվության աղբյուրները

ԱՀՄ միջանկյալ զեկույցը մշակում է ԲԿԳ մասնակից երկրում բնակվող հետազոտողը: ԱՀՄ բոլոր զեկույցները որակի վերահսկման գործընթաց են անցնում՝ երաշխավորելու համար, որ պահպանվել են հետազոտական բոլոր ստանդարտները և հետազոտության ընթացքում ցուցաբերվել է պատշաճ մոտեցում:

ԲԿԳ գործողությունների ծրագրի առաջընթացի վերլուծությունը համադրում է հարցազրույցների, առկա տեղեկատվության ուսումնասիրության և հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումների ընթացքում ստացած տվյալները: ԱՀՄ զեկույցը հիմնվում է կառավարության ինքնագնահատման զեկույցի և քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների մշակած զանազան այլ գնահատականների վրա:

Իրողությունները ճշգրիտ ներկայացնելու նպատակով ԱՀՄ հետազոտողները քննարկումներ են կազմակերպում շահառուների հետ: Ֆինանսական սահմանափակումների և ժամանակի սղության պատճառով ԱՀՄ-ն չի կարող խորհրդակցել բոլոր շահագրգիռ կողմերի և ներգրավված անձանց հետ: Հետևաբար, ԱՀՄ-ն ձգտում է ապահովել կիրառվող մեթոդաբանության թափանցիկությունը և հնարավորության դեպքում ներկայացնում է հետազոտության մեջ ընդգրկված շահառուների վերաբերյալ տեղեկույթը (մանրամասները՝ այս բաժնի հետագա մասերում): Որոշ դեպքերում անհրաժեշտ է լինում պահպանել տեղեկություն տրամադրող անձի անանունությունը, և ԱՀՄ-ն իրեն իրավունք է վերապահում չբացահայտել այդ անձանց տվյալները: Մեթոդաբանության անխուսափելի սահմանափակումներից ելնելով՝ ԱՀՄ-ն խրախուսում է հրապարակված զեկույցների նախագծերի վերաբերյալ մեկնաբանությունների ներկայացումը:

Յուրաքանչյուր զեկույց վերանայելու և որակը վերահսկելու գործընթացի չորս փուլ է անցնում.

1. Աշխատակազմի կողմից վերանայում. ԱՀՄ աշխատակիցները վերանայում են զեկույցը քերականության, ընթեռնելիության, բովանդակության և ԱՀՄ մեթոդաբանությանը համապատասխանության տեսանկյունից:
2. Փորձագետների միջազգային խմբի (ՓՄԽ) կողմից վերանայում. փորձագետների միջազգային խումբն ուսումնասիրում է զեկույցի բովանդակությունը՝ համոզվելու, որ զեկույցում ներկայացված դրույթները բավականաչափ հիմնավորված են, գնահատում է, թե որքանով է գործողությունների ծրագիրն անդրադառնում ԲԿԳ արժեքներին և տեխնիկական բնույթի առաջարկներ է ներկայացնում հանձնառությունների կատարումը բարելավելու և գործողությունների ծրագրում ԲԿԳ արժեքներն իրագործելու համար: (ՓՄԽ անդամների կազմը տե՛ս ստորև):

3. Վերանայում նախքան հրապարակումը. կառավարությանը և ընտրված քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հրավիրում են մեկնաբանություններ ներկայացնել ԱՀՄ զեկույցի նախագծի բովանդակության վերաբերյալ:
4. Հանրային մեկնաբանության փուլ. հանրությանը հրավիրում են մեկնաբանություններ ներկայացնել ԱՀՄ զեկույցի նախագծի բովանդակության վերաբերյալ:

Վերանայման այս գործընթացը, ինչպես նաև ստացած մեկնաբանությունները ներառելու կարգը մանրամասն նկարագրված են ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկի երրորդ բաժնում[1]:

Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ

Տեղեկություններ հավաքելու նպատակով յուրաքանչյուր հետազոտողից պահանջվում է կազմակերպել խմբային քննարկման առնվազն մեկ միջոցառում: Անհրաժեշտ է ջանք գործադրել ԲԿԳ գործընթացում արդեն մասնակցող շահագրգիռ կողմերի մշտական շրջանակից դուրս շահառուներ ներգրավելու ուղղությամբ: Արդյունավետությունը բարելավելու համար շահագրգիռ կողմերից տեղեկություններ ստանալու լրացուցիչ միջոցների կարիք կարող է առաջանալ (օրինակ՝ առցանց հարցազրույցներ, գրավոր հարցումներ, կրկնակի հարցազրույցներ): Ի լրումն, հետազոտողները հարցազրույցներ են ունենում պատասխանատու կառույցների ներկայացուցիչների հետ, եթե ինքնագնահատման զեկույցում կամ համացանցում առկա տվյալներից բացի լրացուցիչ տեղեկությունների անհրաժեշտություն կա:

Հարցազրույցի նպատակով ԱՀՄ հետազոտողը դիմել է պետական մարմիններ և ՔՀԿ-ներ ներկայացնող բոլոր այն գերատեսչություններին և կազմակերպություններին, որոնք գործողությունների ծրագրում նշվել են որպես պատասխանատու կամ ներգրավված շահագրգիռ կողմ: Բացի այդ, հարցազրույցներ են իրականացվել նաև աշխատանքային խմբում ներգրավված այլ կազմակերպությունների, ինչպես նաև լրագրողների հետ, որոնք իրենց կարծիքն են ներկայացրել ԲԿԳ ծրագրի մշակման և իրականացման գործընթացների և/կամ առանձին հանձնառությունների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, 2017 թ. հոկտեմբերից դեկտեմբեր ամիսների ընթացքում Երևանում, Դիլիջանում և Գյումրիում ԱՀՄ հետազոտողն իրականացրել է 27 դեմ առ դեմ հարցազրույց, ինը հեռախոսային հարցազրույց և երկու ֆոկուս-խմբային քննարկում:

Ֆոկուս-խմբային քննարկումներից յուրաքանչյուրին հրավիրվել էր 35-ից 40 մասնակից: Ֆոկուս-խմբի քննարկմանը հրավիրվող անձանց ընտրելիս հաշվի են առնվել հետևյալ չափանիշները՝

- ԲԿԳ գործընթացներում ինչպես փորձառու, այնպես էլ նախկինում մասնակցություն չունեցած կազմակերպություններ,
- կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում ԲԿԳ-ի ընդհանուր թեմատիկ բնագավառներում և գործողությունների երրորդ ծրագրի հանձնառությունների ոլորտներում, օրինակ՝ լավ կառավարում

և հաշվետվողականություն, բյուջեի թափանցիկություն, տեղական ինքնակառավարում և սոցիալական ծառայություններ:

2017 թ. հոկտեմբերի 27-28-ին ԱՀՄ հետազոտողը մասնակցեց «ՀԿ կենտրոն» Քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից կազմակերպված միջոլորտային համագործակցությանը նվիրված «Բաց տարածքի ֆորումին», որտեղ մասնակցեց ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում ՔՀԿ-կառավարություն համագործակցության մարտահրավերների վերաբերյալ խմբային քննարկմանը: 2017 թ. հոկտեմբերի 30-ին ԱՀՄ հետազոտողը մասնակցեց ԲԿԳ Հայաստանի աշխատանքային խմբի նիստին:

Անկախ հաշվետվական մեխանիզմի մասին

ԱՀՄ-ն այն առանցքային գործիքն է, որի միջոցով կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը կարող են հետևել կառավարության կողմից ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակմանն ու իրականացմանը տարեկան կտրվածքով: Հետազոտությունների նախագծումը և ԱՀՄ զեկույցների որակի վերահսկողությունն իրականացնում է փորձագետների միջազգային խումբը, որը բաղկացած է թափանցիկության, հանրային մասնակցության, հաշվետվողականության և սոցիալական գիտությունների հետազոտությունների ոլորտներում փորձառություն ունեցող մասնագետներից:

Ներկայումս փորձագետների միջազգային խմբում ընդգրկված են հետևյալ անձինք.

- Սիզար Կրուզ-Ռուբիո
- Հիյզել Ֆայգենբլատ
- Մերի Ֆրանքոլի
- Բրենդն Հալլըրան
- Հիլ Հինսբերգ
- Անուրադա Ջոշի
- Ջեֆ Լովիտ
- Ֆրեդլայն Մ'Քորմաք-Հեյլ
- Շաուերս Մավովա
- Էռնեստո Վելասկո

ԱՀՄ զեկույցների պատրաստման գործընթացը վարում է Վաշինգտոնում տեղակայված փոքրաթիվ անձնակազմը՝ սերտ համագործակցելով հետազոտողների հետ: Այս զեկույցի վերաբերյալ հարցերն ու մեկնաբանությունները կարող եք ուղարկել irm@opengovpartnership.org հասցեով:

---

[1] ԱՀՄ ընթացակարգերի ուղեցույց, V.3, https://www.opengovpartnership.org/documents/irm-procedures-manual

VII. Հավելված. ԲԿԳ համապատասխանության չափանիշները

Յուրաքանչյուր տարի ԲԿԳ աջակցության ստորաբաժանումը ստուգում է երկրների համապատասխանությունը ԲԿԳ սահմանված չափանիշներին[1]: Ըստ անհրաժեշտության, ԱՀՄ զեկույցների «Երկրի կոնտեքստը» բաժնում անդրադարձ է կատարվում առանձին չափանիշների հետ կապված առաջընթացին կամ հետընթացին:

2012 թ. սեպտեմբերին ԲԿԳ-ն պաշտոնական ուղերձով դիմեց նախաձեռնությանը միացած պետություններին՝ առաջարկելով ստանձնել ԲԿԳ չափանիշներին համապատասխանող հավակնոտ հանձնառություններ:

Աղյուսակ 7.1: ԲԿԳ համապատասխանության չափանիշները, Հայաստան

Չափանիշ	Նախկին[2]	Ներկա	Փոփոխություն	Բացատրություն
Բյուջեի թափանցիկություն[3]	Տվյալներ չկան	Տվյալներ չկան	Չի փոխվել	4 = Բյուջեի նախագիծը և աուդիտի հաշվետվությունը հրապարակվում են 2 = Երկուսից մեկը հրապարակվում է 0 = Ոչ մեկը չի հրապարակվում
Տեղեկատվության մատչելիություն[4]	4	4	Չի փոխվել	4 = Առկա է տեղեկատվության ազատության մասին օրենք 3 = Սահմանադրությունը նախատեսում է տեղեկատվության ազատություն 1 = Տեղեկատվության ազատության մասին օրենքի նախագիծ 0 = Տեղեկատվության ազատության մասին օրենսդրություն չկա
Գույքի հայտարարագրում[5]	3	4	Բարելավ-վել է	4 = Առկա է գույքի հայտարարագրերի մասին օրենք, տվյալները հրապարակային են 2 = Գույքի հայտարարագրերի մասին օրենք, տվյալները հասանելի չեն հանրությանը 0 = Օրենք չկա
Քաղաքացիների մասնակցություն (նախնական ցուցանիշ)	3 (5,88)	3 (5,88) [6]	Չի փոխվել	Քաղաքացիների մասնակցության ցուցանիշը ըստ EIU-ի՝ 1 > 0 2 > 2,5 3 > 5 4 > 7,5
Ընդամենը/հնարավոր (տոկոս)	10/12 (83%)	11/12 (92%)	Բարելավ-վել է	ԲԿԳ համապատասխանության համար անհրաժեշտ նվազագույն միավորը՝ հնարավոր միավորների 75%

[1] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս http://www.opengovpartnership.org/how-it-works/eligibility-criteria

[2] Բոլոր ցուցանիշները 2010 թ. տվյալներն են, բացառությամբ գույքի հայտարարագրման ցուցանիշի, որը 2009 թ. տվյալն է:

[3] Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս աղյուսակ 1, http://internationalbudget.org/what-we-do/open-budget-survey/: Ավելի թարմ գնահատականների համար տե՛ս http://www.obstracker.org/:

[4] Օգտագործվել են տվյալների երկու շտեմարաններ՝ «Սահմանադրական դրույթներ», http://www.right2info.org/constitutional-protections և «Օրենքներ և օրենքների նախագծեր» http://www.right2info.org/access-to-information-laws:

[5] Սիմեոն Ջանկով, Ռաֆայել Լա Պորտա, Ֆլորենցիա Լոպես-դե-Սիլանես և Անդրեյ Շլեֆեր, «Տվյալների բացահայտում քաղաքական գործիչներից» (Թուքի բիզնես դպրոցի աշխատանքային փաստաթուղթ թիվ 2009-60, 2009 թ.), http://bit.ly/19nDEfK, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD), «Տեղեկատվության տեսակները, որոնք պետք է պաշտոնապես հրապարակվեն որոշում կայացնողների կողմից, և թափանցիկության մակարդակ», Կառավարության համառոտ ակնարկ 2009 (OECD, 2009 թ.), http://bit.ly/13vGtqS, Ռիկարդ Մեսիք, «Եկամուտների և գույքի հայտարարագրում Համաշխարհային բանկի հաճախորդ երկրներում» (Վաշինգտոն, Համաշխարհային բանկ, 2009 թ.), http://bit.ly/1clokyf: Առավել թարմ տեղեկությունների համար այցելե՛ք http://publicofficialsfinancia>444ldisclosure.worldbank.org: 2014 թ. ԲԿԳ-ի համակարգող կոմիտեն գույքի հայտարարագրման ցուցանիշների փոփոխություն հաստատեց: Քաղաքական գործիչների և բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հայտարարագրման նախկին ցուցանիշները փոխարինվեցին օրենքի առկայության և հրապարակված տեղեկատվության՝ հանրության համար փաստացի հասանելության ցուցանիշներով: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք ծանոթանալ 2014 թ. ԲԿԳ համապատասխանության չափանիշների ուղեցույցին, http://bit.ly/1EjLJ4Y:

[6] «2014 թ. ժողովրդավարության ինդեքս. Ժողովրդավարությունը և դրա անբավարարությունը», The Economist Intelligence Unit (Լոնդոն, Economist, 2014 թ.), http://bit.ly/18kEzCt